ՀՐԱՆՏ ԴԻՆՔ

ԵՐԿՈՒ ՄՈՏ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԵՐԿՈՒ ՀԵՌՈՒ ՀԱՐԵՎԱՆ

Հրանտ Դինքի մատենաշար
Ա

«Հրանտ Դինք» միջազգային հիմնադրամ

«ՀՐԱՆՏ ԴԻՆՔ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հրանտ Դինքի սպանությունից հետո նրա ընտանիքի և մերձավորների հիմնած Հրանտ Դինքի անվան միջազգային հիմնադրամի գլխավոր նպատակը հասարակության մեջ տնտեսական, սոցիալական, մշակութային վստահելի և առողջ հաղորդակցության միջավայր ապահովելն է, ինչպես նաև՝ ժողովրդավար քաղաքացու գիտակցությամբ խթանել մշակութային բազմազանությունն ու բազմակարծությունը:

Երեխաների և երիտասարդների զարգացմանն ուղղված նախագծեր իրականացնելուց բացի՝ Հրանտ Դինքի հիմնադրամը նպատակ ունի կազմել և իրականացնել այնպիսի նախագծեր, որոնք կնպաստեն Թուրքիայի, Հայաստանի և Եվրոպայի հասարակությունների միջև մշակութային կապերի զարգացմանը, ազգայնականությունից զերծ պատմական հետազոտություններ կատարելուն, Թուրքիա-ԵՄ հարաբերությունների խորացմանը և միջհանրութային մերձեցմանը: Հիմնադրամը որոշել է Հրանտ Դինքի հետ կապված գրավոր արձանագրությունները, լուսանկարներն ու փաստաթղթերն ի մի բերել և արխիվ ստեղծել: Այս ֆոնդն իր գործունեության առանցք է հռչակել շարունակել Հրանտ Դինքի որդեգրած ուղղությունը, նպաստել երկխոսությանը, խաղաղությանն ու համակրանքի մշակույթին:

Գրքի վաճառքից ստացված ողջ հասույթը տրամադրվելու է
Հայաստանի մանկատներին

ՀՏԴ 327 : 94/99:323
ԳՄԴ 66.4 + 63.3 + 66.3
Դ 498

ԴԻՆՔ ՀՐԱՆՏ
Դ 498 Երկու մոտ ժողովուրդ, երկու հեռու հարևան. - Եր.:
«Գրափունջ» ՍՊԸ, 2009.- 178 էջ:

«Երկու մոտ ժողովուրդ, երկու հեռու հարևան» խորագրով հրապարակությունը պոլսահայ համայնքի նշանավոր ներկայացուցիչ, Ստամբուլում լույս տեսնող «Ակօս» շաբաթաթերթի երջանկահիշատակ խմբագրապետ Հրանտ Դինքի առաջին գիրքն է: Այն թուրքերեն լույս է տեսել 2008 թվականին՝ խմբագրապետի ողբերգական մահվանից մոտ 1.5 տարի անց: Գիրքն իրենից ներկայացնում է հեղինակի անձնական կարծիքը, պատկերացումը, մտորումները հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ: Հրանտ Դինքն այստեղ ներկայացնում է Թուրքիայի և Հայաստանի ընդհանուր ապագան կառուցելու և անցյալը վերանորոգելու բոլորովին նոր մոտեցում: Գիրքն առաջին անգամ է լույս տեսնում հայերեն: Այն նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ԳՄԴ 66.4 + 63.3 + 66.

ISBN 978-99941-2-300-1

© «Հրանտ Դինք» միջազգային հիմնադրամ

9(56)
Դ-49
հշ
54400

ՀՐԱՆՏ ԴԻՆՔ

ԵՐԿՈՒ ՄՈՏ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԵՐԿՈՒ ՀԵՌՈՒ ՀԱՐԵՎԱՆ

Թուրքերենից թարգմանեց
ՄԿՐՏԻՉ ՍՈՍՈՒՆՋՅԱՆԸ

ԵՐԵՎԱՆ
«Գրափունջ» ՍՊԸ
2009

ՀՐԱՆՏ ԴԻՆՔ

Իր ապրած կյանքը «աշխարհների» վերափոխմանը նվիրած Հրանտ Դինքը ծնվել է 1954թ. Մալաթիայում: Մանուկ հասակում եղբայրների հետ միասին հայտնվում է Գեղիբփաչայի թաղամասի հայկական բողոքական եկեղեցուն կից Ինջիրդիբիի նախակրթարանի Թուզլայում գտնվող հայկական ճամբարում, որտեղ էլ ծանոթանում է ապագա կնոջ՝ Ռաքելի հետ: Հետագայում նրանք միասին ղեկավարում են այդ ճամբարը, որտեղ ապաստանում էին հարյուրավոր որբ ու անխնամ երեխաներ: Մեղադրելով նրանց «հայ մարտիկներ դաստիարակելու» մեջ՝ պետությունը ճամբարը վերցնում է իր վերահսկողության տակ, որով և ավարտվում է Դինքի առաջին «Ատլանտիդյան քաղաքակրթությունը»:

Ավարտելով Ստամբուլի բնական գիտությունների ֆակուլտետի կենդանաբանության բաժինը, այնուհետև ստանալով նաև փիլիսոփայական կրթություն՝ Հրանտը հանուն ձախ քաղաքական պայքարի հրաժարվում է «կենսափիլիսոփայության» ամբիոնի հետ կապված երազանքներից: Նա հիմնադրում ու ղեկավարում է «Ակօս» շաբաթաթերթը: 1996թ. ապրիլի 5-ին լույս է ընծայում թերթի անգրանիկ համարը և դրանով մի նոր աշխարհի հիմք դնում: Թուրքերեն և հայերեն այդ երկլեզու պարբերականն իր տեսակով առաջինն էր Թուրքիայում:

Դինքի խմբագրապետության ժամանակ պարբերականը հանրությանը ներկայացնում էր հայ հասարակությանն առնչվող հարցեր, անդրադառնում Հայաստանի և Թուրքիայի միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը, 1915-ի իրադարձությունները երկու ժողովուրդների արժանապատվության տեսանկյունից դիտարկելու անհրաժեշտությանը, ինչպես նաև կարևորում աջակցությունը՝ Թուրքիայի ժողովրդավարացման գործընթացին:

2004թ. Թուրքիայի Զինված ուժերի Գլխավոր շտաբը Հրանտ Դինքի դեմ հանդես է գալիս կտրուկ հայտարարությամբ, որից հետո նա դառնում է տեղեկատվական զրոհների թիրախ՝ մեղադրվելով «թուրքական ինքնությունը վիրավորելու» համար: Իսկ 2007-ի հունվարի 19-ին դավադրաբար սպանվում է խմբագրատան առջև:

Սպանության գործի դատավարությունը, որպես արդարադատության որոնում Թուրքիայում, մինչև օրս շարունակվում է:

İKİ YAKIN HALK İKİ UZAK KOMŞU

HRANT DİNK

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրանուշ Հակոբյան

Մերօրյա իրական մարտիկը 9

Արման Կիրակոսյան

«Ճշմարիտ եմ, աշխատասեր եմ, բայց թուրք չեմ» 15

Ի ՀԻՇԱՏԱԿ... 19

ԱՌԱՋԱԲԱՆ 20

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 25

Շփման ջանքեր պաշտոնական ոլորտում 25

Շփման ջանքեր քաղաքացիական ոլորտում 33

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ... ՀՈԳԵԽԵՂՈՒՄ... ՄՏԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ... 40

Հայության հոգեվիճակը կամ ծանր ժառանգություն՝ հոգեփեղում 44

Հատնող ժառանգություն. պատմական հարաբերություն 49

Թուրքական ազգային ինքնության հիմնաշաղափը. հայկական մտագարություն 57

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ... Ի՞ՆՉ ՊԵՏՔ ՉԷ ԱՆԵԼ... 64

Դերակատարներ... Դերեր... Նախապատվություններ... 64

Փականի առաջին ծածկագիրը. Սահմանի բացում... Դիվանագիտական հարաբերությունների հաստատում... 72

Կողպված պատմությունը բացել ու հաղթահարել 81

Մշակվելիք անհրաժեշտ քաղաքականության գլխավոր առանցքը. Ընդհանուր շահի ոլորտները 107

Վախի փոխարեն ցանկություն *117*

ՎԵՐՋԱԲԱՆ 120

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 135

Հայկական ինքնության նոր արտահայտչամիջոցները կամ երբ ջուրն իր ճամփան գտնի... ..... *135*

Հայաստանի կոչը Թուրքիային *142*

Խորհրդարանական հանձնաժողովի արձանագրություններից *150*

ԽՈՍՔ՝ ՀՐԱՆՏԻՆ 163

Բորիս Նավասարդյան *164*

Ռուբեն Սաֆրաստյան *167*

Ալեքսանդր Իսկանդարյան *169*

Բաֆֆի Հովհաննիսյան *171*

Հակոբ Ավետիքյան *173*

Վարդան Օսկանյան *175*

ՄԵՐՕՐՅԱ ԻՐԱԿԱՆ ՄԱՐՏԻԿԸ

Առանձնակի հուզմունքով ձեռքս առա Մեծ Հայի՝ Հրանտ Դինքի «Երկու մուր ժողովուրդ, երկու հեռու հարևան» գիրքը: Հուզմունքս, սակայն, ստրիճանաբար տեղի տվեց հիացումի, և աչքերիս առջև հառնեց Դինք խմբագրապետի, հրապարակագրի ու հրապարակախոսի, խորհող, մտածող, իր ժողովրդի և աշխարհի բախտով մտահոգ, միջազգային հեղինակություն վայելող մեծ քաղաքացու կերպարը: Մարդ, որ դեպքերն ու իրադարձությունները սթափ և արդարամիտ վերլուծող հասարակական գործիչ էր, բոլոր հարցերին և՛ զգացմունքով, և՛ բանականությամբ մոտենալու ունակություն ունեցող հետազոտող, անընդհատ հյուծիչ հալածանքների ենթարկված և նահատակված՝ որպես նոր մարտիկ:

Աշխատության ենթավերնագրերը շատ խոսուն են բնութագրում հրապարակագրի մտքի ընթացքն ու սլացքը: Դրանք վերաբերում են հարաբերությունների բացակայությանը, շփման ջանքերին, հայության հոգեվիճակին կամ ծանր ժառանգությանը, սահմանի բացմանը, դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը և այլ հարցերի:

Այս հարցերը վերլուծելով՝ նա հանգում է այն եզրակացության, որ հայ-թուրքական հարաբերությունների մշակման քաղաքականության գլխավոր առանցքը պետք է դառնան ընդհանուր շահի ոլորտները, և ընդգծում է, որ նախ և առաջ ցանկություն պետք է լինի:

Առաջադրված բոլոր հիմնախնդիրներն ու հարցերը, դրանց լուծման ուղիները նա դիտարկում է որպես մի մարդ, ով երկու ինքնության և երկու գիտակցության կրող է. «Առաջինը թուրքաբնակ եմ, Թուրքիայի Հանրապետության քաղաքացի... Երկրորդը՝ հայ եմ:

Բացի այն, որ Թուրքիայի հայ համայնքի մի մասնիկն եմ, միևնույն ժամանակ էլ բարոյապես հանդիսանում եմ Հայաստանի և հայկական

Սփյուռքի մասնիկը, ցեղակիցն եմ այդ մարդկանց: Այս ամենով հանդերձ, եթե ոմանք գեթ մեկ պատճառ ունեն ցգտելու հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, ապա իմ պատճառներն առնվազն երկու անգամ ավելի են»:

Որպես Թուրքիայի Հանրապետության քաղաքացի՝ իր առաջնային պատասխանատվությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը և սահմանների բացման ցանկությունն է համարում: Իր երկրի քաղաքացի լինելը, սակայն, չի խոչընդոտում մեկ այլ երկրում ապրող իր ազգակիցների հետ բարոյական կապվածություն զգալուն: Նա կարծում է, որ Հայաստանի, հայության անվտանգ ու խաղաղ ապագան հարևանների հետ հաշտ ու համերաշխ գոյակցությունն է:

Բնավ միմյանց չհակադրելով զգացմունքն ու տրամաբանությունը՝ Հրանտ Դինքը վերլուծում է պատմության այդ շղթայի բոլոր օղակները, բոլոր պատմական իրադարձությունները, արյունալի ողբերգությունները՝ մինչև ցեղասպանություն: Նա Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների բացակայության գլխավոր պատճառները պատմությունն ու պատմությունից մնացած համապատասխան հոգեվիճակներն է համարում:

Հոգեխեղման ամենածանր վիճակը, ըստ Դինքի, սփյուռքահայինն է: Նա անդրադառնում է Սփյուռքի գոյացման, ձևավորման հարցերին՝ գտնելով, որ սփյուռքահայության գործունեության վրա էական ազդեցություն ունեցավ 1915թ. հայերի ցեղասպանությունը: Խոսելով Սփյուռքի հոգեվիճակի մասին՝ ավելացնում է, որ դեռևս իր ցավն ու արմատը փնտրում է 1915 թվականի մեջ:

Առանց հուզմունքի չես կարող կարդալ Դինքի այն տողերը, որտեղ նա ասում է. «Լավ, մի՞թե անվայել է հայ ժողովրդի այս կեցվածքը: Մի՞թե անվայել կեցվածք է, եթե մարդ անօրինականության զոհ դարձած իր նախնիների իրավունքի ետևից է ընկնում: Կարո՞ղ եք նման բան պատկերացնել: Պատկերացնո՞ւմ եք, թե աշխարհն ինչ կարող է ասել, երբ այս երկրում հայերը ապրիլի 24-ին կարողանան ոգեկոչել իրենց նախնիների, իրենց կորցրած մերձավորների հիշատակը: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ կարող է ասել Սփյուռքը: Գիտե՞ք, թե ինչ քեկում

կարող է տեղի ունենալ այնտեղ: Այս հարցն եմ ուղղում Թուրքիայում բնակվողներին, թուրք մարդուն»:

Դինքն անկախ հայկական պետությունը համարում է երկրագնդում ապրող բոլոր հայերի Մայր Հայրենիքը: Միաժամանակ նա թուրքաբնակ հայերին սփյուռքահայ չի համարում և դիտարկում է այլ բնորոշմամբ, քանի որ նրանց գոյությունը շարունակվում է հենց այն հողերում, որտեղ հազարավոր տարիներ շարունակ ապրել են: Սփյուռքի առկայության փաստը միայն հայ ժողովրդի հայրենի հողերից տարանջատմամբ չի պայմանավորվում, այլ նաև բացատրվում է դարերով միասին ապրած ժողովրդի աշխարհագրական իմաստով միմյանցից բաժանվելու հանգամանքով, ինչն էլ վկայում է մի ողջ ազգի «տարածքային ամբողջականությունից զրկելու մասին», փաստ, որ վտանգում է ազգային ինքնությունը: Նա հավելում է նաև, որ եթե Հայաստանում հայերն ապրում են այդ ինքնությունը, Սփյուռքում աշխատում են պահպանել այն:

Հայի ինքնության խեղումը, ըստ Դինքի, ավելի խորացրեց այն, որ աշխարհը հրեական ցեղասպանության նկատմամբ ընդհանում ցուցաբերեց, ինչը չեղավ հայերի դեպքում, որ 1915 թվականի հոգեխեղումն ապաքինելու նպատակով մատը մատին չտրվեցին ոչ աշխարհը, ոչ էլ, առավել ևս, այդ խեղման պատասխանատուները: Դինքի հետաքրքիր դիտարկմամբ՝ Սփյուռքի հայկական ինքնության պահպանման համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեցին Մերձավոր Արևելքի մուսուլմանական երկրներում: Արևմուտքում շնորհված լայն ազատությունները, ցավոք, ավելի հեշտացրին ինքնության ձուլումը:

Նա դիտարկում է նաև այն հարցը, որ ցեղասպանությունից հետո ևս Թուրքիայում հայերի թվաքանակը կրճատվում էր 1942թ. Ունեցվածքի հարկի կիրառման, 1955թ. սեպտեմբերի 6-7-ի դեպքերի և այլ իրադարձությունների հետևանքով: Նա ցավով է արձանագրում, որ հազարավոր տարիների պատմություն ունեցող հինավուրց ազգն այսօր Թուրքիայում գոյությունը պահպանում է կրոնական մի փոքրիկ համայնքի տեսքով, որ հանրապետության հիմնադրման ժամանակ 300 հազար հայերից այսօր արդեն մնացել են միայն 50-60 հազարը:

Հրանտ Դինքը ցեղասպանության մասին խոսելիս նշում է, որ դա արդեն ընկալվել, յուրացվել և վերածվել է գենետիկ կոդի: Հայերը շարունակում են ապրել չամոքված տառապանքի հիշողությամբ. տառապանք, որը ոչ իսկորեն դատապարտվել է, ոչ միանշանակ ճանաչվել:

Նա գրում է, որ պատմությանը չպետք է նայել բացառապես փաստաթղթերի տեսանկյունից, այլ՝ էթիկայի, խղճի... Այստեղ իրականում անհրաժեշտ է մտածել՝ ցեղը խղճին դնելով: Չի կարելի չհամաձայնել Դինքի հետ, ով գտնում է, որ հայ-թուրքական հարաբերությունների վրա դրված փականը մեզ հայտնի մի շարք պատճառներով հնարավոր չէ բացել բանալու մեկ պտույտով և այն համեմատում է բարդ ծածկագիր ունեցող փականի հետ, որը պտույտ առ պտույտ պետք է բացի այդ կողպեքը, և որ բանալու առաջին պտույտը Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումն ու սահմանի բացումը պետք է լինի:

Հայ-թուրքական հարաբերությունների ներկա վիճակը ներկայացնելով՝ Դինքը հիմնավորում է այն թեզը, թե ժամանակն է համոզվելու, որ՝

1. «Թուրքիայում պաշտոնական թեզի առաջնային դրույթներն արդեն կորցնում են իրենց կենսունակությունը և՛ պետության, և՛ քաղաքականության, և՛ հասարակության մեջ: Իր դիրքերը զիջում է այս հողերում հայերի գոյության փաստը ժխտող, նրանց հետքերը ջնջող դիրքորոշումը:

Հայերից մնացած շինությունների և տաճարների ավերակները տասնյակ տարիների ընթացքում ամբողջովին ոչնչացնելու կամ ֆետիշացնելու, տեղանունները փոխելու, տեղական արխիվները մաքրելու և հետք սրբող նմանատիպ այլ գործողություններն արդյունք չտվեցին, և նման իրավիճակում անտեսելու և հերքելու քաղաքականությունը տեղի է տալիս: Այսօր արդեն ժամանակին այս հողերում հայերի բնակվելու փաստի հետ, բացառությամբ մի շարք մարգինալ «համառ» հայտնածների, մեծամասնությունն ի վերջո կարողացավ համակերպվել:

2. Արդեն հնարավոր չէ ժխտել, որ հայության մեծ մասի ներկայությունը զգալիորեն կրճատվեց 1915 թվականից հետո: Այս կորուստը չսահմանափակվեց միայն ռուսների դեմ պատերազմական գործողությունների շրջաններով, մի քանի տարվա ընթացքում տեղահանեցին նաև հայերին այն բնակավայրերից, որոնք ռազմաճակատային չէին»:

Դինքը մեծ նշանակություն է տալիս առաջին հերթին, իհարկե, պաշտոնական շտիմներին, քաղաքացիական ոլորտին, հասարակական կազմակերպություններին, ժողովրդական դիվանագիտությանը:

Հեղինակը քաղաքական իրողություն է համարում այն, որ Հայաստանը Թուրքիայի անվտանգությանը չի սպառնում, և որ վերջապես իրողություն է այն, որ այսօրվա Հայաստանն է կոչ անում դիվանագիտական հարաբերություններ հաստատել այսօրվա Թուրքիայի հետ: Նա գտնում է, որ Թուրքիան իր հարաբերությունները Հայաստանի հետ նախ քաղաքական տեսանկյունից պետք է կարգավորի և օր առաջ բացի երկու ժողովրդի՝ միմյանց հետ նորմալ հարաբերվելու ճանապարհը: Իսկ որպես կոչ՝ հնչում է Հրանտ Դինքի հետևյալ միտքը. «Առանց հարաբերություն հաստատելու որևէ բան չեք կարող քննարկել»:

Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանը բազմիցս է նշել, որ առանց նախապայմանների պետք է սկսել հայ-թուրքական հարաբերությունները, որ հարաբերությունների կարգավորումը բոլորովին չի նշանակում մոռանալ ցեղասպանությունը: Մեջբերենք Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի այն տեսակետը, ըստ որի՝ «Մենք ելնում ենք այն գաղափարից, որ, այո՛, եղել է ցեղասպանություն, բայց Թուրքիայի կողմից ցեղասպանության չճանաչման փաստը մենք չենք համարում անհաղթահարելի խոչընդոտ Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար: Մենք կողմ ենք Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելուն: Ես կարծում եմ, որ մենք բանակցություններում այնքան ենք առաջ գնացել, որ հիմա արդեն գնդակը գտնվում է Թուրքիայի խաղադաշտում: Եվ եթե խոսում ենք «ֆուտբոլային դիվանագիտության» մասին, տերմին, որը լրագրողներն են հարմարեցրել

մեր բանակցային գործընթացին, ապա պետք է ասենք, որ ֆուտբոլային խաղը սահմանափակվում է կոնկրետ ժամանակով»: Բնական է հանրապետության Նախագահի հարցադրումը, որ հարաբերություններին ընթացք պետք է տրվի ողջամիտ ժամանակում, որ հիմնախնդիրներն անընդհատ հետաձգելու միտումնավոր քաղաքականությունը վիճակը չի բարելավում, և խնդիրները չեն լուծվում:

Դինքը ջատագովն էր այն բանի, որ Թուրքիան դառնա Եվրամիության անդամ: Սա նշանակում է, որ նա կցանկանար, որ Թուրքիան համապատասխաներ Եվրամիության բոլոր չափանիշներին, որպեսզի Հայաստանի և Թուրքիայի սահմանները բաց լինեին, որպեսզի մեր եկեղեցիներն ու սեփականությունը պաշտպանված լինեին, որպեսզի Թուրքիայի հասարակությունը ավելի ազատորեն խոսեր ցեղասպանության փաստի մասին... Սակայն նենգ չարագործի գնդակը ընդհատեց դեռ շատ անելիք և ասելիք ունեցող տաղանդավոր հայի, մտավորականի կյանքը:

Ցավալի է, որ այսօր մեր կողքին և մեզ հետ չէ Հրանտ Դինքը, սակայն նրա գործերը մնայուն են, կենսունակ և կոչ են՝ ուղղված բոլորին, ապրողներին, նրա գործը շարունակողներին: Նա հաշտեցման, հանդուրժողականության, եվրոպական ժողովրդավարական արժեքների արմատավորման, տարածաշրջանում կայունության և խաղաղության հաստատման համար պայքարող իրական մարտիկ էր: Նա ցգտում էր տեսնել իր ազգն ու հայրենիքը ազատ, խաղաղված, հոգեպես հանգիստ, որ Թուրքիայում ապրող հայերը, որպես ազգային փոքրամասնություն, ունենան բոլոր իրավունքները և ազատությունները, լինեն պաշտպանված:

Եվ երիցս ճիշտ է Հրանտ Դինքը, որ իրավացիորեն եզրակացնում է. «Քանի դեռ Թուրքիան չի ժողովրդավարացել, հայերը չեն ապաքինվելու... Միայն տեսանկյունները միշտ կարելի է հերքել միայն ազատության պայմաններում...»:

Հրանուշ Հակոբյան

ՀՀ սփյուռքի նախարար

«ՃՇՄԱՐԻՏ ԵՄ, ԱՇԽԱՏԱՍԵՐ ԵՄ, ԲԱՅՑ ԹՈՒՐՔ ՉԵՄ»

Շուրջ երեք տարի անցավ ողբերգական այն օրվանից, երբ 2007թ. հունվարի 19-ին Ստամբուլում ահաբեկչական զարհուրելի սպանության զոհ դարձավ հայ ժողովրդի ականավոր զավակ, մարտնչող թուրքահայ մտավորական, հրապարակախոս, լրագրող Հրանտ Դինքը: 1954թ. սեպտեմբերի 15-ին Թուրքիայի Մալաթիա քաղաքում ծնված մեր հայրենակիցն իր ողջ գիտակից կյանքը նվիրաբերեց Թուրքիայում մարդու և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության, արդարության և ճշմարտության, Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման, հայ և թուրք ժողովուրդների հաշտեցման, Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների հաստատման անհրաժեշտության գաղափարներին: 1996թ. նա հիմնադրեց Թուրքիայում հայերեն և թուրքերեն լեզուներով տպագրվող միակ թերթը՝ «Ակօս»-ը, որի գլխավոր խմբագիրն էր հանդիսանում: Նա Թուրքիայի երևելի մտավորականներից էր, որը հայտնի էր իր անվախ ելույթներով, քաղաքական ամենաբարդ խնդիրները մեկնաբանող համարձակ հոդվածներով: Հայաստանի Հանրապետության նախագահը հետմահու մրցանակ շնորհեց Հրանտ Դինքին:

Անցյալ դարի 90-ական թթ. սկսած Հրանտ Դինքը Թուրքիայում առաջինն է գրել Հայոց ցեղասպանության իրողության և ճանաչման, թուրքահայ համայնքի իրավունքների պաշտպանության մասին: «Ես շատ լավ գիտեմ, - գրում էր նա, - որ աշխարհը տարիներ շարունակ այս հարցը (ցեղասպանության ճանաչման հարցը) Թուրքիայի դեմ որպես խաղաքարտ է օգտագործում: Դա տեսնելով՝ ասում եմ, որ աշխարհի ճանաչման կարիքը չունեմ: Եվ ես շատ հանգիստ եմ: Երկրորդ, եթե կա մեկը, ով պետք է ճանաչի և ընդունի ցեղասպանությունը, ապա դա

Թուրքիան է: Թերևս այս նպատակի համար եմ ես աշխատում, սակայն ես որևէ պատրանք չունեմ: Եթե թուրքերը չպետք է քննարկեն և տեսնեն իրականությունը, ապա մեղքն իրենցն է: Ի վերջո, եթե Թուրքիան ուզում է ժողովրդավարական դառնալ, ապա պետք է սթափ նայի այս հարցին»:

Հրանտ Դինքը Թուրքիայում ժողովրդավարության արմատավորման մեծ ջատագով էր, համարելով, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը մեծապես կապված է այդ երկրում ժողովրդավարական ավանդույթների հաստատման հետ: Նա հավատացած էր, որ Թուրքիայում ազատության հասնելու համար՝ պետք է պայքարել ոչ թե արտաքին ճակատի, այլ՝ ներքին ճակատում ժողովրդին հասունացնելու միջոցով: Միաժամանակ նա վայելում էր Թուրքիայի ժողովրդավարական շրջանակների մեծ հարգանքը, որի ակնհայտեսը դարձյա նաև ես՝ Հայաստանի Հանրապետության կողմից մասնակցելով նրա հուղարկավորության արարողությանը: Ինչ վրա անմոռանալի տպավորություն թողեց Ստամբուլի փողոցներ դուրս եկած հարյուր հազարավոր մարդկանց՝ Հրանտ Դինքի նկատմամբ համակրանքի անկեղծ արտահայտությունը:

«Ճշմարիտ եմ, աշխատասեր եմ, բայց թուրք չեմ»: Այս արտահայտությամբ Հրանտ Դինքը փորձում էր թուրք ժողովրդին հասկացնել, որ Թուրքիայում ապրում են նաև ոչ թուրք ազգեր, որոնք Թուրքիայի քաղաքացի են, բայց թուրք չեն:

Հրանտ Դինքը հետևյալ կերպ էր արտահայտվում հայերի մասին Թուրքիայի առաջադիմական շրջանակների վերաբերմունքի վերաբերյալ. «Թուրքիայում որոշակի փոփոխություն կա, առաջադիմական կեցվածք կա: Անձնական խոսակցությունների ժամանակ կարող ենք ցեղասպանության հարցն ազատ քննարկել, անգամ կգտնվեն մարդիկ, ովքեր կընդունեն ճշմարտությունը: Չկարծեք, թե Թուրքիայում միայն ամբոխավարություն է: Թուրքիայում նաև մտածող և առաջադիմական մարդիկ կան»: Նա համարում էր, որ «Թուրքիայում մեծամասնությունը չգիտի ճշմարտությունը: Ինչպե՞ս իմանա, երբ 90 տարի արգելվել է խոսել այդ մասին: Հայկական կողմը թուրքերին իրական պատմությունը սովորեցնելու և հետո միայն ցեղասպանությունը ճանաչելու դիմանագիտություն պետք է վարի»: Հրանտ Դինքի խորին համոզմամբ, «լավագույն ճանապարհը Թուրքիայի ժողովրդավարական երկիր դառնալն է, երբ «ներքևից» պահանջ կլինի, և հասարակությունն ինքը՝ առանց արտաքին ճնշումների, կճանաչի ցեղասպանությունը»:

Ինչ վերաբերում է ԵՄ անդամակցությանն ուղղված Թուրքիայի ջանքերին, ապա Հրանտ Դինքն ասում էր. «Իմ ցանկությունն է Թուրքիան տեսնել Եվրամիության մեջ: Ես համոզված եմ, որ Թուրքիան ժողովրդավարական լինելով պետք է ճանաչի 1915թ. Հայոց ցեղասպանությունը: Չեմ կարծում, որ Թուրքիան, Հայոց ցեղասպանությունն ընդունելով կդառնա ժողովրդավար: Հակառակ դեպքում 1915թ.-ը ոչ ժողովրդավար Թուրքիայի կողմից ճանաչվելը քիչ բան կտա հայերիս: Մեծ տերությունների ճնշումով Թուրքիան մի օր կճանաչի, բայց դա թուրքերի մտածողության մեջ շատ բան չի փոխի: Եթե պատմության մեջ նորից ինչ-որ բան տեղի ունենա, ապա թուրքերը նորից առիթ կգտնեն հայերին վատություն անելու համար»: Եվրոպայի մերժումը նա համարում էր թուրք ժողովրդավարների պարտությունը և ընդհանրապես այդ երկրում ժողովրդավարության վախճանը: Դինքը մտահոգություն ուներ, որ դրա հետևանքները ծանր կլինեն Հայաստանի համար. «Ի՞նչ կլինի, եթե Թուրքիան փակվի ինքն իր մեջ»:

Հրանտ Դինքը չէր կիսում այն մարդկանց տեսակետը, որոնք մեծ վտանգ էին տեսնում հայ-թուրքական սահմանի բացման մեջ: Այդ մասին նա գրում էր. «Հայ-թուրքական սահմանի բացումը շատ կարևոր է երկու ժողովուրդների միջև ամրացած հոգեբանական, պատմական հիվանդությունից ազատվելու համար: Տնտեսական հարաբերություններից, առևտրից շատ ավելի կարևոր է այս հանգամանքը: Ես հետևում էի հայաստանյան մամուլին և տեսա, որ կան մարդիկ, ովքեր մտավախություն ունեն և վտանգ են տեսնում սահմանի բացման մեջ: Այս առաջադիմական ժամանակներում նման վախ չպետք է ապրենք: Գլոբալ աշխարհի մեջ այդպիսի հարցադրումներն ինչ համար անհասկանալի են»:

Հրանտ Դինքը կապված էր Հայաստանի հետ և խիստ մտահոգ-

ված էր նրա ճակատագրով. «Ինձ համար աշխարհի և Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ընդունումից շատ ավելի կարևոր է Հայաստանի կայունությունն ու հզորացումը: Ցեղասպանության զոհ դարձած իմ պապերի ոսկորները կհանգստանան միայն այն ժամանակ, երբ Հայաստանը դառնա ուժեղ, ամուր երկիր: Հայաստանը մեծ հայրենիքն է, իսկ սփյուռքը՝ փոքր կղզիներ»:

Հրանտ Դինքն անմահության գիրկն անցավ, բանզի նրա անմոռաց կերպարը հավերժ մնալու է առաջադեմ մարդկության, Հայաստանի և Սփյուռքի հավաքական հիշողության մեջ: Նրա գործը շարունակում է ապրել իր կնոջ, զավակների և համակիրների գործունեության, ինչպես նաև իր ողբերգական մահից հետո ստեղծված «Հրանտ Դինք» հիմնադրամի միջոցով, որի հիմնական նպատակներն են թուրք հասարակության մեջ անվտանգ և առողջ մթնոլորտի հաստատումը, ազգային, կրոնական և մշակութային տարբերությունների նկատմամբ հանդուրժողականության ամրապնդումը:

Արման Կիրակոսյան

ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ

Ի ՀԻՇԱՏԱԿ...

Պատմության գրված էջերը կատարվածի մասին են, իսկ սպիտակ էջերը՝ գալիքի:

Հայ-թուրքական հարաբերությունների տեսանկյունից դարերից եկող ու դեպի դարերը գնացող մեր ընդհանուր ճակատագիրը դեռևս առջևում է:

Գլխավոր հարցն այն է, թե այսօր այդ սպիտակն ինչպես ենք պատրաստվում լրացնել:

Մենք հանդես ենք գալու որպես անցյալում տեղի ունեցած մեծ ողբերգության պատասխանատուներ՞, թե՞ այդ սխալներից խրատվելով նոր էջերն այս անգամ կարող ենք լրացնել այնպես, ինչպես վայել է քաղաքակիրթ մարդուն: Սա մեր առջև ծառացած ամենամեծ պատասխանատվությունն է:

Այս պատասխանատվությունից խուսափողները կամ նրանք, ովքեր դեռ ցանկանում են կսկիծով ու դառնությամբ լցնել այդ էջերը, մտադիր չեն ստանձնել անցյալի անլուր տառապանքների պատասխանատվությունը:

Իսկ մենք՝ պատասխանատվության զգացում ունեցողներս, նրանց չպետք է թույլ տանք դա դարձնել մենաշնորհ:

Այս համեստ աշխատանքը կիսում եմ ճերմակ էջերի պատասխանատվությունը հանձն առնող բոլոր խաղաղասեր հասվածների հետ, նվիրում հազարամյակներ շարունակ այս հողերում ստեղծագործած, սակայն դառնությամբ լեցուն այն տարիներին իր բնօրրանից արմատախիլ արված, իր կենսակերպից ու ստեղծած քաղաքակրթությունից կտրված հայ ժողովրդին ու այդ ժամանակաշրջանի անմեղ զոհերի՝ անատոլիաբնակ հայերի, թուրքերի և քրդերի հիշատակին:

Հրանտ Դինք

2005թ. նոյեմբերի 5

ԱՌԱՋԱԲԱՆ

Թուրքիան, որ իր արտաքին քաղաքական ուղեգծում զորեղ կամք է ցուցաբերել՝ հարևանների հետ առանց խնդիրների և փոխվստահելի հարաբերություններ հաստատել, միայն Հայաստանի հանդեպ է, որ դեռևս չի կարողացել կարևոր քայլ անել:

Ես Թուրքաբնակ հայ լրագրող եմ, ով տարիներ շարունակ հանգամանորեն ուսումնասիրում է Թուրքիայի և Հայաստանի, Թուրքերի ու հայերի միջև տարբեր ձևաչափերով քաղաքացիական և պաշտոնական շփումները:

Արտասահմանյան այցերիս ժամանակ հայկական սփյուռքի տարբեր հատվածների հետ հանդիպումներից ստացած տպավորությունս այն է, որ երկխոսության ընդլայնմամբ ավելի հասու է դառնում հակառակ կողմի դիրքորոշումը, և առկա երկչոտությունն էլ իր տեղը զիջում է հարցի կարգավորմանը:

Այդ դրական հոգեվիճակը շատ ավելի բացահայտ է դրսևորվում հատկապես քաղաքացիական հասարակության երկխոսության ժամանակ:

Բայց և հայ-թուրքական հարաբերությունները շատ հեռու կմնան հանգուցալուծման կետից, եթե այսօր էլ, վաղն էլ այդ ուղղությամբ միայն շռայլվեն բարի խոսքեր:

Նախ և առաջ, բավականին տարբեր են հարցի կողմերը, գործող անձինք ու արարները:

Պատմությունն այլ խնդիր է, Կովկասում առկա լարվածությունը՝ մեկ այլ, հարցի հետ կապված երրորդ կողմը առաձին մի խնդիր է, և, վերջապես, բոլորովին այլ խնդիր է հայերի ու թուրքերի շրջանում տարբեր հայացքներ ունեցողների հանդամանքը:

Զորօրինակ՝ հայությունը... Մի կողմում խնդրո առարկան Հայաստան պետությունն է և հայ ժողովուրդը, մյուս կողմում՝ աշխարհասփյուռ հայությունը և, բնականաբար, շատ սահմանափակ գործելու կարողությամբ Թուրքահայությունը:

Այս մասնատվածությունը, իհարկե, հարկադրում է յուրաքանչյուրին հարցին մոտենալ սեփական դիրքերից: Այդ պատճառով էլ անխուսափելի է դառնում տարբեր տեսակետների առկայությունը:

Ձեր ուշադրությանը ներկայացված այս աշխատանքն էլ, ահավասիկ, իմ տեսակետն է: Եվ շտապեմ հայտնել, որ սա սոսկ Թուրքաբնակ Հրանտ Դինքի տեսակետն է և բացարձակապես չի արտահայտում ողջ Թուրքահայության դիրքորոշումը:

Իմ զբաղեցրած դիրքն այսպես է բնութագրվում՝ ես երկու ինքնության և երկու գիտակցության կրող եմ:

Առաջինը՝ Թուրքաբնակ եմ, Թուրքիայի Հանրապետության քաղաքացի...

Երկրորդը՝ հայ եմ:

Բացի այն, որ Թուրքիայի հայ համայնքի մի մասնիկն եմ, միևնույն ժամանակ էլ բարոյապես հանդիսանում եմ Հայաստանի և հայկական սփյուռքի մասնիկը, ցեղակիցն եմ այդ մարդկանց:

Այս ամենով հանդերձ, եթե ոմանք գեթ մի պատճառ ունեն ձգտելու հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, ապա իմ պատճառները առնվազն երկու անգամ ավելի են:

Իմ որ ինքնությամբ ուզում եք՝ ինձ ուսումնասիրե՛ք. ոչ մի տարբերություն...

Իմ երկու ինքնության առջև ծառացած անխուսափելի պարտքը՝ ինչպես Թուրքիա-Հայաստան, այնպես էլ հայ-թուրքական հարաբերությունների բնականոնացմանը նպատակաուղղված ջանքեր գործադրելն է:

Սկսեմ առաջինից...

Ասացի՝ «Թուրքաբնակ եմ»... Հարկավ, որպես քաղաքացի, երկրիս հարևանների հետ առանց խնդիրների գոյակցությունը իմ մեծագույն բաղձանքն է:

Հանրապետության հիմնադրումից ի վեր հարևանների հետ հարաբերություններում հանգիստ շունչ քաշելու հնարավորություն չունեցած իմ երկրում ժողովրդավարության զարգացմանը պատնեշող ազդայնականությունը, հիմնականում սնվելով այդ թշնամական քաղաքականությունից, պետության ռեսուրսների վիթխարի բաժինը վատնում է «հարևանի սպառնալիքից» պաշտպանվելու և «անվտանգություն» ապահովելու վրա:

Մինչդեռ հարևանների հետ հաշտ ապրելու պարագայում, եթե ավելի մեծ ուշադրություն հատկացվի զարգացմանը, կրթությանն ու առողջապահությանը, անշուշտ, իմ երկրում մարդիկ ավելի երջանիկ, ավելի ապահով և ավելի հանգիստ կապրեն:

Ահա Հայաստանը Թուրքիայի այն հարևաններից է, որի հետ նա խնդիրներ ունի, և այս պահին նրանց միջև բացակայում են դիվանագիտական հարաբերությունները, սահմաններն էլ փակ են:

Որպես Թուրքիայի Հանրապետության քաղաքացի՝ իմ առաջնային ցանկությունը հարաբերությունների կարգավորումն է և սահմանների բացումը:

Երկրորդ՝ նշեցի, որ հայ եմ...

Մենք՝ Թուրքաբնակ հայերս, ուզենք-չուզենք, արտահայտվենք, թե՝ ոչ, արդյունքում, Հայաստան կոչվող երկրում բնակվող մարդկանց և աշխարհով մեկ ցրված սփյուռքահայերի ցեղակիցն ենք և նույն այդ ծառի այսօրվա բողբոջները:

Բարոյական այս կապվածությամբ մենք չենք դադարում լինել Թուրքիայի քաղաքացի և, բնականաբար, մեր քաղաքացիությանը դավաճանելու որևէ միտում չունենք:

Լինել երկրի լավ քաղաքացի, որտեղ ապրում ես, բնավ չի

խոչընդոտում, որպեսզի բարոյական կապվածություն զգաս մեկ այլ հողակտորում ապրող ազգակիցներիդ հետ ու անես հնարավորինը՝ նրանց երջանիկ տեսնելու համար:

Այս գիտակցումով էլ կամենում եմ Հայաստանի, հայության անվտանգ ու խաղաղ ապագան և Հայաստանի հաշտ ու համերաշխ գոյակցությունն իր հարևանների հետ:

Հակառակ դեպքում՝ պարզորոշ է. եթե անգամ իր բոլոր ներքին խնդիրները լուծի, միևնույն է, Հայաստանը երբեք իրեն անվտանգ չի կարող զգալ, քանի դեռ չլուծված հարցեր ունի երկու հարևանների՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ:

Հարևանների հետ շարունակական տարաձայնությունները թույլ չեն տալիս երկրի ռեսուրսները պաշտպանական ոլորտից նպատակաուղղել բնակչության զարգացմանն ու բարեկեցությանը:

Տարբեր պետությունների խորհրդարաններում ներկայացվող յուրաքանչյուր «Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձև» Թուրքահայերիս համար դառնում է փորձություն դաշույնի սայրին: «Դաշույնի սայր» արտահայտության գործածման պատճառը կապված է հետևյալ մտահոգության հետ. «Հիմա ո՞րն է լինելու Թուրքահայերիս ասելիքը հարցի առնչությամբ»:

Հայացք նետելով անցյալում եղած այդպիսի իրավիճակներին՝ տեսնում ենք, որ այս մտահոգությունն անտեղի չէ:

Այնուամենայնիվ, երբ տեղի էին ունենում այդօրինակ իրադարձություններ, մամուլում «մենք Թուրքիայում շատ հանգիստ ենք» խոսքերից բացի, ցավոք, չէր շրջանառվում իրական զգացումներն ի ցույց դնող մտայնություն: Ցուցադրվածն ավելի շատ արտահայտում էր մեր «ճարահատությունը»:

Հարցը, նախ և առաջ, օրակարգ էր բերում մեր պատմական անժխտելի իրողությունը, և մենք էլ, ապրելով Թուրքիայում, հայության մի մասն էինք կազմում: Իսկ մյուս կողմից, ինչքան էլ հայության մի մասը լինեինք, Թուրքիայում էինք ապրում, Թուր-

քիայից էինք: Եվ Թուրքիան ավելի լավ էինք ճանաչում, քան արտերկրում բնակվողները: Դրա համար էլ այդ երկու իրականությունից բխած մեր խոսքերը հեշտությամբ կարող էին մեզ ուղղորդել դեպի «ցեղին դավաճանելը» կամ «պետությանը դավաճանելը»:

Այսինքն, մեր գործն իրականում դժվար էր...

Պարզ է, որ նման փորձություններ այսուհետև հաճախ ենք ապրելու:

Այդ պատճառով հարկ է, որ մեր ասելիքը լինի հստակ ու միանշանակ:

Ասել է թե, ապրում ենք մի ժամանակաշրջան, երբ, առավել քան երբեք, կարող ենք բացատրել այն, ինչ ուզում ենք: Մանրուքներն անգամ այս հարցում բավական մեծ նշանակություն ունեն:

Այլապես հնարավոր չի լինի կանխել ասվածի խեղաթյուրումը, չարչրկվելը կամ նպատակին չծառայեցնելը:

Դա իրականացնելու համար, փա՛ռք Երկնավորին, և՛ Թուրքիայում, և՛ նրա սահմաններից դուրս «պարարտ հող» կա:

Ես ցանկանում եմ՝ այս համեստ աշխատանքի ողջ մանրամասներն ուշադրության առնվեն ու ստանան համարժեք գնահատական:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Շփման ջանքեր պաշտոնական ոլորտում

Թեև Թուրքերի ու հայերի միջև հարաբերություններն ունեն ավելի քան հազար տարվա պատմություն, Թուրքիայի և Հայաստանի միջև միջպետական հարաբերությունները, որպես այդպիսին, դեռևս շատ նոր են՝ չհաշված 1918-20թթ. Հայկական Առաջին Հանրապետությունը: Այստեղ մեկնակետը դիտարկվում է Խորհրդային Միության փլուզումից հետո 1991թ. անկախ Հայաստանի հռչակումը:

Հայաստանի անկախությանը նախորդող և հաջորդող օրերը նորագույն պատմության էջերից են: Հիշողությունները շատ թարմ են... Օրինակ՝ Հայաստանում երկրաշարժի օրերը...

Եթե անգամ վերքը թարմ է, այդպիսի օրերին հարևանները կամա թե ակամա միմյանց օգնության են շտապում: Այդ ծանր օրերից մնացած հուշերը՝ Թուրքիայի տարածքով իրականացված օգնության թույլտվությունը, հացահատիկ մատակարարելու հարցում ցուցաբերված աջակցությունը, իսկապես, հուսադրող են:

Եթե անգամ այդ օրերին խոսք չէր գնում հայ-թուրքական երկխոսություն ծավալելու մասին, «մի՞թե կարող է իրականանալ... եթե իրականանա, որքան լավ կլինի...» հարցադրումն ու ցանկությունը այսպես թե այնպես համընկնում են առաջին ծլարձակման ժամանակաշրջանին:

Խորհրդային Միության անկումով Թուրքիան իր կողքին ու-

նեցավ հայկական անկախ պետություն, որից և անակնկալի եկավ: Պետք չէ անիրավացի համարել Թուրքական պետության՝ իր նոր հարևանի հետ հարաբերվելու հաստատակամության պակասը: Քանի որ մինչև այդ Թուրքիան Հայաստան կոչվող հարևան և նրան ուղղված որևէ քաղաքականություն չուներ... Ըստ էության պետք էլ չէր, որ ունենար, քանի որ պատմական Հայկական հարցը Թուրքիան ինքնուրույն հիմնովին լուծել-վերջացրել էր: Իսկ երբ փորձում էին կողմնորոշվել՝ հանկարծահաս այդ իրավիճակը երևակայական էր, թե իրական, Հայաստանի և Ադրբեջանի միջև հասունացավ ղարաբաղյան հիմնախնդիրը: Թուրքիան չփոթության մեջ էր, չգիտեր ինչպիսի քաղաքականություն վարել Հայաստանի հետ: Ի վերջո, 1993թ. ապրիլի 3-ին թուրքական արտաքին քաղաքականությունը հանգեց ժամանակ շահելու մեթոդին: Հայաստանի հետ հարաբերությունները ղարաբաղյան հակամարտությամբ պայմանավորելու եզակի պահ էր. Թուրքիան, պատճառաբանելով հայերի կողմից Քելբաջարի գրավումը, փակեց սահմանը: «Տեսնենք, թե ով կմեռնի, ով կմնա» ձևակերպումն էր ընկած անորոշ ժամանակ շահելու մեթոդի հիմքում՝ անկախ այն բանից, թե երբ և ինչպես կլուծվեր ղարաբաղյան հիմնախնդիրը:

Հայաստանն ու հայությունն էլ միևնույն հոգեվիճակի մեջ չէին: Որքան էլ Հայաստանի անկախացումը Թուրքիայի համար անհանգստության շարժառիթ էր, հայերի կողմից դա ընկալվում էր որպես Թուրքական «պատմական քինախնդրության» շարունակություն: Բայց, այնուամենայնիվ, հայկական կողմում հնարավոր էր նկատել սառնարյուն և հեռատես «հարաբերության ջանք»: Ի հակադրություն երկրի ներսում և դրսում առկա ազգայնական ընդդիմությանը՝ Լևոն Տեր-Պետրոսյանի վարչակազմը, գիտակցելով Թուրքիայի հետ լավ հարաբերությունների անխուսափելիությունը, կարողանում է այդ ուղղությամբ անսպասելի քայլեր անել՝ փորձելով «Թուրքիայի գործած պատմական

անարդարությանը վերջ դնելու» հարցով մտահոգված ժողովրդին բացատրել, որ հին հաշիվներն ապագա կառուցելու գործում չպետք է դառնան խոչընդոտ, և դա որոշ չափով հաջողվում էր: Իսկապես, Հայաստանում էլ որոշ բաներ արդեն փոխվում էին: Ընդունված նոր Սահմանադրության մեջ անգամ չէր հիշատակվում ո՛չ «Թշնամի Թուրքիա» անունը, ո՛չ էլ խոսք էր գնում պահանջատիրության մասին:

Անկախ այն բանից, թե Հայաստանի և Ադրբեջանի միջև ստեղծված լարվածությունը, Ղարաբաղում տեղի ունեցող բախումները խանգարում էին երկխոսության ծավալման փորձերին, կային մարդիկ, ովքեր անսպասելի մի պահի կարող էին միասնաբար հանդես գալ հօգուտ առաջին երկխոսության ծավալման: Այս իմաստով կարևոր քայլ էր Ֆրանսիայում Թուրքիայի ամենաարմատական գործիչ Ալփասլան Թյուրքեշի[1] հետ Հայաստանի նախագահ Տեր-Պետրոսյանի գաղտնի հանդիպումը: Այն, անշուշտ, պաշտոնական չէր, բայց ավելին էր, քան պաշտոնականը, սակայն շարունակական բնույթ չկրեց: Եթե գրվի հայ-թուրքական երկխոսության պատմությունը, ապա երբեք չի մոռացվելու Թյուրքեշի և Տեր-Պետրոսյանի՝ այս գործում ունեցած դերակատարությունը: Թուրքիայի հետ երկխոսություն հաստատելու հարցում Տեր-Պետրոսյանի դրսևորած համարձակ մոտեցումը հարկավոր է մեծատառերով փորագրել պատմության էջերին: Իշխանությունից զրկվելու պատճառը նաև այդ գործելաոճն էր: Բացի այդ, մեկնված ձեռքը Թուրքիայից համարժեք արձագանք չէր ստանում:

Եթե խոսում ենք Թուրքիայի՝ Հայաստանի հետ հարաբերություններում «երկչոտ ու զգացմունքային վերաբերմունք» ցուցաբերելու մասին, նվազագույնը, ինչ հարկավոր է՝ գործին վնասող լարված քաղաքականությունից ու հարձակողական դիրքորոշու-

[1] Ալփասլան Թյուրքեշ (1917-1997) - Թուրքական ծայրահեղական «Գորշ գայլեր» կազմակերպության և «Ազգայնական շարժում» կուսակցության հիմնադիր (ծանոթագրությունը՝ թարգմանչի, այսուհետ՝ ծ.թ.):

մից խուսափելն է: Իսկ նման քաղաքականության վառ օրինակն էր պատերազմի օրերին Թուրքիայի ազգայնական-պահպանողական ճամբարի պահանջը՝ սատարել ազերի եղբայրներին: Այդ քաղաքականությունը մնաց անփոփոխ սոցիալ-դեմոկրատ Էջևիթի[1] և իսլամիստ Էրբաքանի[2] սադրիչ հայտարարությունների հետևանքով: Այդ շրջանում Թյուրքեշի՝ անձամբ Հայաստանի նախագահ Տեր-Պետրոսյանի հետ տեսակցություն կազմակերպելը նշանակալի հակակշիռ էր: Այսպիսով, Թուրքիան այդ ժամանակ սոցիալ-դեմոկրատներին հանձնարարում է հանդես գալ ռազմաշունչ հայտարարություններով, իսկ ազգայնականներին՝ խաղաղության կոչերով, որով և ստեղծում է բարդ պարադոքս՝ միմյանց հակադրելով զգացմունքն ու տրամաբանությունը:

Հանգուցյալ Թուրգութ Օզալի[3] ձևավորած այդ քաղաքականությունը, անկասկած, կարելի է ասել, որ շարունակվում էր Դեմիրելի[4] և Զիլլերի[5] օրոք, միայն թե ողջ այդ հետևողական քաղաքականությանը հակասող մի շարք նպատակային ու անզգույշ հայտարարությունները Հայաստանում ստեղծեցին անվստահության մթնոլորտ:

Թուրքիայի և Հայաստանի միջև գոյություն չունեցող հարաբերություններն ավելի լարող այդ հայտարարությունները պայմանավորված էին հիմնականում երկու հանգամանքով՝ քրդական հարց և Ղարաբաղ: Հետաքրքիրն այն է, որ Թուրքիան ջանում էր այս երկու հարցերը զուգակցել միմյանց:

Քրդական հարցի առնչությամբ Ազգային անվտանգության խորհրդի կողմից ընդունված որոշումը՝ «որպես հոգեբանական հնարք կիրառել այս հարցի հետևում հայերի կանգնած լինելու հանգամանքը», հիմք դարձավ Հանրապետության նախագահ Թուրգութ Օզալի հայտնի հայտարարության համար: Դիմելով Քրդստանի բանվորական կուսակցության (PKK) անդամներին հետապնդող զինվորներին՝ Օզալը հայտարարեց. «Ի՞նչ կլինի, եթե սխալմամբ երկու ռումբ էլ Երևանի վրա ընկնի»: Այս խոսքը, իրոք, բավական էր Հայաստանին տագնապեցնելու և պետության սահմաններն ամբողջությամբ ռուս զինվորների պահպանությանը հանձնելու համար: Այո՛, Թուրքիան մեկ անգամ ևս հիշեցրեց քինախնդրության մասին, և այդ վախը բնավ էլ անտեղի չէր:

Այդ ընթացքում Քրդական հարցի մեջ Հայաստանին ներքաշելու քաղաքականությունը համառորեն շարունակվում էր: Թուրքական մամուլի առաջին էջերին զետեղվում էին Սիրիայից արտաքսվելուց հետո Իտալիա մեկնած PKK-ի առաջնորդ Օջալանի[1]՝ այնտեղից էլ «Մոսկվայի վրայով հայ օդաչուների աջակցությամբ Կովկաս՝ Լեռնային Ղարաբաղ տեղափոխվելու» մասին պնդումները: Առանց ստուգելու տեղեկության հավաստիությունը, վարչապետ Էջևիթի հապճեպ հայտարարությամբ իրավիճակին պաշտոնական երանգ է հաղորդվում: Էջևիթն անուղղակիորեն զգուշացնում է Հայաստանին: Թուրքական համալսարանների «պաշտոնական» պրոֆեսորները Էջևիթի այս պնդմանը աջակցելով բարբաջում էին, թե իբր այսօր փորձ է արվում վերակենդա-

[1] Բյուլենթ Էջևիթ (1925-2006) - հինգ անգամ (1974թ., 1977թ., 1978-79թթ., 1999թ., 1999-2002թթ.) գլխավորել է Թուրքիայի Հանրապետության կառավարությունը (Ծ.Թ.):

[2] Նեջմեթդին Էրբաքան (1926-) - 1996-97թթ. զբաղեցրել է Թուրքիայի Հանրապետության վարչապետի պաշտոնը: Գլխավորել է «Բարեկեցություն» կուսակցությունը, որի հիման վրա ստեղծվել է ներկայումս իշխող «Արդարություն և զարգացում» իսլամամետ կուսակցությունը (Ծ.Թ.):

[3] Թուրգութ Օզալ (1927-1993) - երկու անգամ (1983-87թթ., 1987-89թթ.) գլխավորել է Թուրքիայի Հանրապետության կառավարությունը, 1989-93թթ. զբաղեցրել է Թուրքիայի Հանրապետության Նախագահի պաշտոնը (Ծ.Թ.):

[4] Սուլեյման Դեմիրել (1924-) - 7 անգամ (1965-69թթ., 1969-70թթ., 1970-71թթ., 1975-77թթ., 1977-78թթ., 1979-80թթ., 1991-1993թթ.) գլխավորել է Թուրքիայի Հանրապետության կառավարությունը, 1993-2000թթ. զբաղեցրել է Թուրքիայի Հանրապետության Նախագահի պաշտոնը (Ծ.Թ.):

[5] Թանսու Զիլլեր (1946-) - Թուրքիայի Հանրապետության միակ կին վարչապետը, երեք անգամ (1993-95թթ., 1995թ., 1995-96թթ.) գլխավորել է թուրքական կառավարությունը (Ծ.Թ.):

[1] Արդուլլահ Օջալան (Ապո) - Քրդստանի բանվորական կուսակցության (PKK) հիմնադիր և առաջնորդ, 1999թ. Թուրքիայում դատապարտվել է մահապատժի, սակայն որոշ ժամանակ անց այդ դատավճիռը փոխարինվել է ցմահ բանտարկությամբ (Ծ.Թ.):

նացնել Լենինի՝ 1923թ. Լաչինում «Կարմիր Քրդստան» ստեղծելու նախագիծը: Իշխանության ու ընդդիմության միջև շարունակվում էր մրցապայքարը Հայաստանին քրդական հարցի մեջ ներքաշելու ուղղությամբ: Օրինակ՝ այդ հարցում ոչ ոքից հետ չմնացող «Ճշմարիտ ուղի» կուսակցության առաջնորդ Զիլլերը հեռուստատեսությամբ հայտարարում էր, թե «Ափոն Ղարաբաղում է» և փորձում էր ապացուցել, որ բոլորից շատ է իրազեկված: Իսկ իր օրվա հացի խնդրով մտահոգված Հայաստանն անընդհատ կրկնում էր՝ «Մեզ մի ներքաշեք ... Ափոն մեզ մոտ չէ, խառնվելու ցանկություն չունենք»: Հատկապես ազգայնական մամուլում չէր դադարում հիստերիան. «Ուր էր, թե Ափոն, իրոք, Ղարաբաղ գնար, մենք էլ մի քարով մի քանի թռչուն խփեինք»:

Մինչդեռ հարաբերությունների բացակայության այդ շրջանում անգամ Հայաստանը Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավելու համար կարևոր նախաձեռնություններով էր կարողանում հանդես գալ: Օրինակ՝ նա ոչ միայն չարտահայտեց իր զգուշավորությունը Ստամբուլում անցկացվելիք ԵԱՀԿ անդամ պետությունների առաջնորդների դարավերջյան գագաթաժողովի կապակցությամբ, այլև անձամբ մասնակցեց դրան: Նույն այդ հարաբերությունների բացակայության շրջանին կարելի է վերագրել մեկ այլ կարևոր հանգամանք ևս. Հայաստանի երկու նախագահներն էլ՝ Լևոն Տեր-Պետրոսյանը և Ռոբերտ Քոչարյանը, միջազգային համաժողովների առիթով քանիցս այցելել են Թուրքիա: Մինչդեռ, սրան հակառակ, որևէ առիթով Թուրքիայի ոչ մի նախագահ կամ վարչապետ Հայաստան ոտք չի դրել: Միջազգային համաժողովներին մասնակցելու նպատակով Հայաստանից Թուրքիա են մեկնել մի քանի նախարարներ: Սակայն Թուրքիայից այս տարիների ընթացքում Հայաստան մեկնած նախարարների թիվը երկուսն է, իսկ բարձրաստիճան պաշտոնյաների թիվը կարելի է հաշվել միայն մեկ ձեռքի մատների վրա:

Թուրքիայի և Հայաստանի միջև պաշտոնական շփումները

երկուստեք դեսպանությունների բացակայության պատճառով իրականացվում էին Մոսկվայում Թուրքիայի դեսպանատան միջոցով, և միայն որոշ ժամանակ անց այդ պարտականությունը ստանձնեց Թբիլիսիում թուրքական դեսպանատունը: Այս շփումներից զատ՝ գոյություն ուներ հաղորդակցության մեկ այլ ճանապարհ ևս Սևծովյան տնտեսական համագործակցության շրջանակում (ՍԾՏՀ): Համաձայնություն կայացվեց, որպեսզի ՍԾՏՀ-ի անդամ Հայաստանը իր ներկայացուցչությունը բացի Ստամբուլում, որտեղ գտնվում է կազմակերպության կենտրոնականը: Եվ հայ դիվանագետներն անցան իրենց ծառայողական պարտականությունների կատարմանը: Առաջին ներկայացուցիչը Արսեն Ավագյանն էր, որից հետո այդ պաշտոնում նշանակվեց Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության Թուրքիայի բաժնի ղեկավար Կարեն Միրզոյանը:

Այն դեպքում, երբ պաշտոնական շփումները գտնվում էին բավականին թույլ մակարդակում, ուղղակի անարդար կլինի չանդրադառնալ Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի խորհրդական Ժիրայր Լիպարիտյանի գրանցած հաջողությանը: Զպետք է մոռացության մատնվեն Լիպարիտյանի պաշտոնավարման ընթացքում Անկարա հաճախակի կատարած նրա այցերը, դրանց շրջանակում բարձր մակարդակի շփումները, դիվանագիտական հարաբերությունների հաստատման նախաձեռնությունները: Բանաձևն ու արձանագրությունը, որոնք ուղղված էին նախ իրավիճակը գնահատելուն, հետո նոր դիվանագիտական հարաբերություն հաստատելուն, վավերացման փուլում մատնվեցին անհաջողության: Այդ ժամանակվա արտգործնախարար Հիքմեթ Չեթինը Նյու Յորքում Տեր-Պետրոսյանի հետ հանդիպումից հետո հայտարարում է, որ Հայաստանի հետ մոտ ժամանակներս դիվանագիտական հարաբերություն հաստատելու արձանագրություն է ստորագրվելու, սակայն Քելբաջարի իրադարձություններն այդ պատեհ պահն ի չիք դարձրին:

Վերջին տարիներին խոսք էր գնում նաև Թուրքիայի կողմից երկու ճակատով նոր երկխոսություն ծավալելու մասին: Առաջինը՝ Արևմուտքում սփյուռքի հետ, մյուսը՝ Արևելքում՝ Հայաստանի: Ափսոս, որ դեսպան Թեզջանի՝ ԱՄՆ-ում առաջատար հայկական լոբբիստական ուժերի ներկայացուցիչների հետ սկսած ճանաչողական բնույթի հանդիպումները չշարունակվեցին: Երկխոսության վիժեցման գլխավոր պատճառը մի կողմից սփյուռքի՝ «անկեղծ չեն, ժամանակ շահելու մարտավարությամբ են գործում» կանխակալ կարծիքն էր, մյուս կողմից՝ դեսպան Թեզջանի՝ նախկինում Ադրբեջանում արած հակահայկական հայտարարությունները: Այս ուղղությամբ հաջողության հասնելու հանգամանքը, անկասկած, կարող էր նպաստավոր լինել Թուրքիայի և Հայաստանի հարաբերություններում: Մի կողմ թողնելով ոչ ինտենսիվ պաշտոնական շփումները՝ միայն ցեղասպանության բանաձևերի՝ միջազգային քաղաքականության օրակարգում հայտնվելը բավական էր, որպեսզի ավելի խորացներ Թուրքիայի և Հայաստանի միջև եղած անդունդը:

Եվ մեկնված ձեռքը հոգնեց... Իշխանության ղեկը ստանձնած Քոչարյանն ասաց. «Հերթն արդեն Թուրքիայինն է, մենք բավականաչափ խնդրեցինք»:

Տասնամյակներ շարունակ միայն Ռուսաստանի հետ հաշվի նստող և այդ դիրքերից իրեն պայմանավորող Հայաստանը տարբեր նախաձեռնություններով հանդես գալու ժամանակ իրեն ձեռք չմեկնելու, այդ կախվածությունից ազատվելու գործում չաջակցելու պատճառով կրկին կողմնորոշվում էր դեպի տարածաշրջանում գերիշխող ուժը: Գուցե անողորմ վճիռ է, բայց կարելի է ասել, որ «հենց Թուրքիան Հայաստանին հրեց դեպի Ռուսաստան», մինչդեռ ստեղծվելիք լավ հարաբերություններով կարող էր նպաստել Հայաստանի տնտեսական զարգացմանը և ավելի ակտիվ դերակատարություն ունենալ զարաբաղյան հակամարտության հարցում: Գուցե և պատեհ պահը դեռևս չի չքացել:

Միայն թե Տեր-Պետրոսյանին չմեկնված ձեռքն այս անգամ պարզվի Քոչարյանին:

Շփման ջանքեր քաղաքացիական ոլորտում

Դժվար է ասել՝ արդյոք Հայաստանի և Թուրքիայի միջև պաշտոնական բնագավառում անհաջողության մատնված հարաբերությունները հնարավոր էր լինելու հաջողությամբ պսակել քաղաքացիական բնագավառում: Հարաբերությունները կարգավորելու այդ փորձերը, որոշ ժամանակ բավականաչափ մակերեսային բնույթ կրելով, չկարողացան խորություն ձեռք բերել: Իսկ ոմանց բարձրացրած մեծ աղմուկը պակասեցրեց արդյունավետությունը: Այս քաղաքացիական նախաձեռնություններն ընդհանրապես երրորդ կողմի միջնորդությամբ էին կյանքի կոչվում, ինչն առաջ էր բերում թուրքական կողմից առավել հայության մտավախությունը:

Եթե հարաբերությունների հաստատման փորձերը դիտարկենք վերջին 15 տարվա կտրվածքով, ապա առաջին հերթին կհիշենք Էսենյուրթի համայնքապետ Գյուրբուզ Զափանի և մի խումբ թուրք մտավորականների ու լրագրողների Հայաստան կատարած այցը: Բնիկ կարսեցի Գյուրբուզ Զափանի նախաձեռնած աղմկահարույց այդ այցի ընթացքում պատվիրակության անդամներն իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Հայոց ցեղասպանության հուշահամալիրում: Զափանը հանդիպել էր այն ժամանակվա Թուրքիայի Հանրապետության նախագահ Դեմիրելին, նրանից ստացել հատուկ ուղերձ, որից հետո Թաներ Աքչամի[1], Ջենգիզ

[1] Թաներ Աքչամ - թուրք պատմաբան, սոցիոլոգ և հրապարակախոս: Նա առաջին թուրք մտավորականներից էր, որ ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: 1976թ. Թուրքիայում ձերբակալվել է և դատապարտվել 9 տարվա ազատազրկման կոմունիստական և պրոբրդական քարոզչության համար: 1977թ. փախել է բանտից և ապաստան գտել Գերմանիայում: 2008թ. նշանակվել է ԱՄՆ-ի Կլարք համալսարանի Հոլոքոստի և Ցեղասպանության ուսումնասիրությունների «Սթրաստ» կենտրոնի Գալուստյան-Մուգար ամբիոնի վարիչ: Հայոց ցեղասպանությանը նվիրված մի շարք հոդվածների և գրքերի հեղինակ է (Ծ.Թ.):

Զանդարի[1], Օրալ Զալըշլարի[2] և Զեյնեփ Աթիքքանի[3] ուղեկցությամբ Մոսկվայից ժամանել էր Երևան, որտեղ էլ հանդիպել ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի, ինչպես նաև մի շարք պաշտոնատար և ոչ պաշտոնատար անձանց հետ՝ նրանց փոխանցելով բարեկամական ուղերձներ:

Այդ օրերից հուշ մնացած արժեքավոր նախաձեռնություններից էր թուրքաբնակ գործարար Իսհակ Ալաթոնի[4] և հայկական սփյուռքի ազդեցիկ ներկայացուցիչ, գործարար Հրայր Հովնանյանի՝ Տրապիզոնի նավահանգստում համատեղ նախագիծը կյանքի կոչելու փորձը: Դրանում ընդգրկված էր նաև այդ ժամանակվա արտգործնախարար Հիքմեթ Չեթինը, սակայն հարցի առնչությամբ մամուլի հրապարակումների, աջակցությունից հրաժարվելու կոչերի և Թուրքիայի ազգայնական թևի հակազդեցության պատճառով նախագիծը մատնվեց անհաջողության:

Չնայած այդ անհաջող փորձին՝ բարդ երկխոսության ծավալման ամենահեշտ միջոց դիտվեց համագործակցության եզրերի փնտրտուքը առևտրատնտեսական բնագավառում: Քաղաքացիական բնագավառում առաջին մնայուն ձեռնարկը հենց այս ճանապարհով էլ իրականացվեց: Դա Թուրքիայի և Հայաստանի գործարարների կողմից ստեղծված Թուրք-հայկական գործարար միության խորհուրդն է, որն ունի երկու համանախագահ՝ թուրքական կողմից Քաան Սոյաքը, իսկ Հայաստանից՝ Արսեն Ղազարյանը: Կազմակերպությունը հետագայում աշխատանքները կենտրոնացրեց արևմտյան սփյուռքի ուղղությամբ՝ պլատֆորմներ ձևավորելով Միացյալ Նահանգներում ու Եվրոպայում՝ փորձելով

[1] Զենգիզ Զանդար - թուրք լրագրող, հոդվածագիր, Թուրքիայի Հանրապետության նախկին նախագահ Թուրգութ Օզալի խորհրդական (ծ.թ.):

[2] Օրալ Զալըշլար - թուրք լրագրող, հոդվածագիր, Հայկական հարցի վերաբերյալ իր հոդվածների համար սուր քննադատության է ենթարկվել Թուրքիայում (ծ.թ.):

[3] Զեյնեփ Աթիքքան - թուրք լրագրող, հոդվածագիր (ծ.թ.):

[4] Իսհակ Ալաթոն - ծագումով հրեա թուրք խոշոր գործարար (ծ.թ.):

սփյուռքը դարձնել հայ-թուրքական երկխոսության կողմ: Թուրք-հայկական գործարար միության խորհուրդը, չսահմանափակվելով միայն առևտրատնտեսական ոլորտի նախաձեռնություններով, ծավալեց արվեստա-մշակութային գործունեություն և այդ կերպ դարձավ երկխոսության գաղափարի շարժիչ ուժերից մեկը:

Կարևոր նախաձեռնություն էր նաև ԱՄՆ-ի միջնորդությամբ ընթացող Թուրք-հայկական հաշտության հանձնաժողովի աշխատանքը: Այդ հանձնաժողովը, որի հիմնադրումը կարելի է կապել կովկասյան տարածաշրջանում Միացյալ Նահանգների ազդեցության գոտու ընդլայնման ժամանակահատվածի հետ, Թուրքիայի կողմից ընդունվեց անտարբերությամբ, մինչդեռ հայկական կողմում թեժ քննարկումների առիթ դարձավ: Քննադատության ենթարկվեցին և՛ հանձնաժողովի անվանումն ու կառուցվածքը, և՛ օրակարգն ու մասնակիցները: Հանձնաժողովի կազմում թուրք և հայ ներկայացուցիչների՝ նախկին բարձրաստիճան դիվանագետների, քաղաքական գործիչների և գիտնականների ներգրավված լինելու հանգամանքը մեծացնում էր հանձնաժողովի կարևորությունը: Սակայն «խաղաղություն», «հաշտեցում» և նման այլ ավելի հավակնոտ բնորոշումներով հասարակական կարծիքին ներկայացված հանձնաժողովն իր մեկ-երկու ժողովներից հետո հայկական և թուրքական կողմերի միջև լարվածության բեմահարթակի էր վերածվելու և չէր կարողանալու կասեցնել անկման գործընթացը: Հանձնաժողովի ներսում ծագած ուժեղ լարվածությունը նկատող անդամները որոշ ժամանակ փորձում էին մամուլից թաքցնել իրենց ժողովները, սակայն դա էլ բավական չեղավ աշխատանքների կարգավորման համար: Ի վերջո, Թուրք-հայկական հաշտության հանձնաժողովն իրեն սպառեց:

Հանձնաժողովի գործունեության միակ շոշափելի արդյունքը եղավ ցեղասպանությունն ուսումնասիրող ամերիկյան մի հեղինակավոր կազմակերպության զեկույցը, որը ցեղասպանության

մասին օրենքը Հայկական հարցի նկատմամբ կիրառելու խնդրի վերաբերյալ էր: Զեկույցում տեղ էին գտել «ցեղասպանություն» հասկացությունը բնորոշող բոլոր 4 հատկանիշները, ինչն էլ թույլ էր տալիս հայկական ողբերգությունը որակել որպես ցեղասպանություն: Սա էլ առաջ բերեց թուրքական կողմի հակազդեցությունը:

Քաղաքացիական ոլորտի նախաձեռնությունների մի կարևոր մասն իրականացվում էր գիտական շրջանակներում: Սրանցից ամենամնայունը և կայուն ընթացք ձեռք բերածը Չիկագոյի համալսարանում սկսված, Միչիգանում շարունակված և, վերջապես, Զալցբուրգում կայացած հայ և թուրք գիտնականների հանդիպումներն էին, որոնք, չնայած ցեղասպանության հարցի առկայությանը, ընթանում էին փոխադարձ համակրանքի մթնոլորտում: Այս ոլորտում նշանակալի էր նաև ամերիկաբնակ հայ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի՝ Բողազիչիի համալսարանում ներկայացրած «Վերջին օսմանցի հայերի դառը-քաղցր հուշերը» վերտառությամբ զեկույցը:

Անկարայի ու Երևանի համալսարանների միջև հարաբերություններ հաստատելու փորձերը ձախողվում էին: ԵՊՀ-ի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը գիտնականներից կազմված պատվիրակության հետ միասին Թուրքիայի մայրաքաղաք է մեկնում Անկարայի համալսարանի ռեկտոր Գյունայ Աքքանի հրավերով: Երկու ռեկտոր միասին ծառ են տնկում, կողմերի միջև համագործակցության արձանագրություն է ստորագրվում, սակայն, ցավոք, այդ համագործակցությունը գործնական ավարտի չի հասնում: Իսկ սփյուռքում այդօրինակ աննախադեպ մի հանդիպում էլ Ֆրանսիայում տեղի ունեցավ: Ֆրանսիական Սենատի հովանու ներքո Սենատի նիստերի դահլիճում կազմակերպվեց «Մեր օրերում Հայկական հարցի վերաբերյալ հայ-թուրքական երկխոսությունը» խորագրով համաժողով՝ թուրք և հայ մտավորականների մասնակցությամբ:

Հայաստանի հետ ուղիղ երկխոսություն հաստատելու հարցում մեծ էր նաև կանանց դերը: Թուրքիայի Զախ դեմոկրատական կուսակցության անդամ, պատգամավոր Գյոնուլ Սարայի և ՀՀ Ազգային ժողովի խորհրդարանական Հեղինե Նաղդալյանի ղեկավարությամբ հանդիպումներ էին կայանում հայ և թուրք կանանց միջև: Չնայած հիմա այդ հարաբերությունները մասամբ փոփոխված և այլ անուններով են շարունակվում, սակայն ցանկալի արդյունքներ չեն գրանցում: Օրինակ՝ Թուրքիայի և Հայաստանի կանանց՝ թուրքերեն, հայերեն և անգլերեն լեզուներով տարին մի քանի անգամ տպագրվող ամսագիրն այժմ դժվարին կացության մեջ է:

Թուրքիայի, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի լրագրողների նախաձեռնությամբ և մասնակցությամբ կազմակերպված հանդիպումներից բացի՝ որոշ թուրք դերասաններ Հայաստանում մասնակցեցին մի քանի կինոփառատոնների: Որոշ հայ արտիստներ էլ Թուրքիայում հանդես եկան համերգներով: Հելսինկյան քաղաքացիական միության[1] Ստամբուլում կազմակերպած հավաքույթը, երիտասարդներին մերձեցնող ամառային դպրոցը, ինչպես նաև Արևելյան կոնֆերանսի առիթով թուրք մտավորականների երևանյան այցը հարաբերությունների տասնհինգ տարվա բացակայության պատմության ընթացքում իրականացված եզակի շփումներ էին:

Կարելի է ասել, որ հարաբերությունների հիմնական նախաձեռնողն իրականում հայ ժողովուրդն էր: Տարեկան տասնյակ հազարավոր հայաստանցիների համար Թուրքիայի՝ առևտրային դարպաս լինելը, Վրաստանով դեպի Սև, Միջերկրական և Էգեյան ծովեր ավտոբուսներով կամ էլ Երևանից Ստամբուլ ինքնաթիռներով մեկնելը այլ բան չէր, քան ժողովրդական դիվանագի-

[1] Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի թուրքական մասնաճյուղ՝ հիմնադրված 1993թ. (ծ.թ.):

տություն: Թուրքերի ու հայերի ծանոթությունը, թեկուզև առևտրի միջոցով, կարող է նպաստել երկու ժողովուրդների՝ միմյանց լեզուն սովորելուն: Այսպես, Աքսարայում կարելի է հանդիպել տաքսու վարորդների, որոնք ձգտում են Հայաստանի հայերենով մի քանի գործնական նախադասություն սովորել: Իսկ Հայաստանից ժամանողներն էլ իրենց հերթին փորձում են թուրքերենով հաղորդակցվել: Հայաստանցիների այս շահագրգռվածությանը հակառակ՝ քիչ են այն թուրքերը, ովքեր փորձում են աշխատանք գտնել կամ գործ հիմնել Հայաստանում:

Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների զարգացմամբ ամենից շատ շահագրգռված է սահմանամերձ գոտիների բնակչությունը: Այդ տեսանկյունից զարմանալի չէ, որ Թուրքիայի սահմանամերձ որոշ համայնքային խորհուրդներ, չնայած հարում են «Ազգայնական շարժում» կուսակցությանը (ԱՇԿ), կողմ են սահմանների բացմանը: Զորօրինակ՝ քաղաքացիական բնագավառում աչքի է ընկնում Կարսի քաղաքապետի նախաձեռնությամբ սահմանի բացման օգտին կազմակերպված ստորագրահավաքը (50 հազար ստորագրություն)՝ Անկարային դիմելու նպատակով, հարևանների հետ երկխոսություն ծավալելու գերբնական ջանքերը, Հայաստան պատվիրակություններ ուղարկելը և Հայաստանից հյուրեր հրավիրելը: Սակայն այս նախաձեռնությունները վիժեցնել ցանկացողների ջանքերն ապարդյուն չանցան: Կարսի քաղաքային խորհրդի նիստին հրավիրված հայաստանյան պատվիրակությանը թուրքիայից վտարելը դրա վառ օրինակն էր:

Զորս անձից բաղկացած այդ պատվիրակությունը Կարս էր ժամանել Թբիլիսիով, տեղավորվել «Այուրմելի» հյուրանոցում իրենց հատկացված սենյակներում: Սակայն շատ չանցած հայտնվում է մեկը՝ ներկայանալով որպես անվտանգության ծառայության աշխատակից, Արտաքին և Ներքին գործերի նախարարությունների հրամանով պատվիրակության անդամներից պահանջում է անհապաղ լքել թուրքիայի տարածքը: Դեռ ավելին, տեղում կազմում են արձանագրություն և ոստիկանական մեքենայով սահմանից դուրս հանում նրանց: Ամոթալի այդ քայլը, իհարկե, երբեք չի մոռացվի: Իսկ այդ տգեղ կեցվածքի պատճառը թաքնված էր նույն այդ ժողովին մասնակցող Անկարայում Ադրբեջանի դեսպանի հետևյալ հայտարարության մեջ. «Մեկ միլիոն սոված հայերից թուրքիային ի՞նչ օգուտ, հայերին մի գործարար է հրավիրել, նա էլ թող վերցնի նրանց ու իր տուն տանի»: Կարծես թե նրան էին վստահվել թուրքիայի արտաքին գործերի, նույնիսկ էկոնոմիկայի նախարարի պարտականությունները: Այս կերպ թուրքերի և հայերի միջև խցկվեց «ազերի եղբայրը»:

Ադրբեջանի նախկին նախագահ հանգուցյալ Հեյդար Ալիևը ճնշում էր գործադրում թուրքիայի վրա Հայաստանի հետ սահմանը չբացելու համար՝ առաջ քաշելով «կամ սահմանը, կամ խողովակը» մոդելը:

Արի ու տես, որ հարաբերությունների բացակայության այս իրավիճակը ոմանց մենաշնորհով չի կարելի պայմանավորել: Ի պատասխան պաշտոնական շրջանակների պասիվությանն ու քաղաքական հաշվարկներին՝ ժողովուրդներն իրար մեջ վաղուց արդեն սկսել էին ոչ պաշտոնական անկեղծ շփումներ...

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ... ՀՈԳԵԽԵՂՈՒՄ... ՄՏԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ...

Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների բացակայության գլխավոր պատճառները պատմությունը և պատմությունից մնացած համապատասխան հոգեվիճակներն են: Իրականում երկու կողմի՝ միմյանց նկատմամբ ունեցած վերաբերմունքը անառողջ է և անհանգիստ: Ինչքան էլ դժվար լինի, պետք է խոստովանել, որ հայերն իրենց հոգեխեղմամբ, իսկ թուրքերն էլ իրենց մտագարությամբ կլինիկական հիվանդության կրողներ են: Երկուսի ինքնության մեջ էլ հակառակ կողմը «խորթ» է, և այդ «խորթությունը» մի տեսակ անխուսափելի գոյավիճակ է: Այդ պատճառով առանց վերլուծելու հայկական ինքնության մեջ «թուրքի», իսկ թուրքի ինքության մեջ՝ «հայի» անժխտելի դերը, բավականին դժվար է ողջամիտ առաջարկներ անել հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ: Վերլուծելիս էլ պետք չէ հայությանը դիտել որպես միատարր ամբողջություն, այլ հարկավոր է առանձին-առանձին խոսել Հայաստանի հայերի, սփյուռքահայերի և թուրքահայերի մասին: Ընդ որում, այս սկզբունքային բաժանման դեպքում նրանց չպետք է դիտարկել նույնանման, քանի որ այդ ամբողջություններից յուրաքանչյուրն ունի իր տարբերակիչ հատկանիշները:

Անկասկած, հոգեխեղման ամենածանր վիճակում գտնվում են սփյուռքահայերը: Այսօր աշխարհում հաշվվում է մոտ 8 մլն հայ, որի 1/3-ը Հայաստանում, իսկ 2/3-ը սփյուռքում է վաստակում իր

ապրուստը: Ահա այս պատկերն էլ բավական է՝ ցույց տալու հայ ազգի ներսում առկա պարադոքսը: Մեկ հարյուրամյակ առաջ անկախության ձգտող ազգն այդ նպատակի համար թանկ վճարեց. կորցրեց ոչ միայն չորսհազարամյա հայրենի հողերը, այլ նաև բնակչության մեծ մասը: Այսօր էլ, մոտավորապես մեկ դար հետո, երբ անսպասելի մի պահի ձեռք բերեց անկախ պետականություն, այս անգամ էլ բնակչության մեծ մասն այդ պետությունից դուրս է գտնվում: Բացի այդ, անկախությունից հետո Հայաստանում սկսվեց արտագաղթ, և մինչև հիմա էլ շարունակում է նվազել բնակչության թիվը: Սա նշանակում է, որ աշխարհում ինքնության բնութագիրը և «ո՞վ է, որտեղացի՞ է» հարցը դեռևս մնում է անպատասխան: «Ո՞վ կարող է համարվել սփյուռքահայ» հարցի պատասխանը հետևյալն է.

«Այսօր արդեն սահմանները հայտնի են Հարավային Կովկասում: Կա անկախ հայկական պետություն, որն էլ երկրագնդում ապրող բոլոր հայերի մայր հայրենիքն է: Իսկ դրա սահմաններից դուրս բնակվող հայերը կազմում են սփյուռքը»: Սակայն նույն այս բնորոշմամբ չի կարելի դիտարկել թուրքաբնակ հայերին, քանի որ այդ դեպքում իրականությունը ճիշտ արտացոլած չենք լինի: Թուրքիայում բնակվող հայերի գոյությունը ներկայումս էլ շարունակվում է հենց այն հողերում, որտեղ չորս հազար տարի շարունակ ապրել են: Այս տեսանկյունից սխալ կլինի նրանց ընդունել որպես սփյուռքահայեր:

Հայության ներսում տիրող իրադրության գլխավոր դերակատարներից մեկը Թուրքիան է, որի դերը միայն պատմությամբ չի սահմանափակվում: Այսօր հայության՝ Թուրքիայի հանդեպ ունեցած անվստահությունը չի պայմանավորվում սոսկ պատմությամբ: Պարզ է, որ Ղարաբաղի հարցի պատճառով կիրառվող տնտեսական էմբարգոն թույլ չի տալիս Հայաստանին հանգիստ շունչ քաշել: Տնտեսական ճգնաժամ ապրող հայաստանցիների արտագաղթը ավելի ուժեղացրեց սփյուռքի հակակրանքը Թուր-

քիայի հանդեպ: Սա եկավ անուղղակիորեն ապացուցելու, որ ժամանակին Անատոլիայից հայերի բռնագաղթը այս անգամ էլ շարունակվում է Կովկասում: Ահա թե ինչու Հայաստանի՝ աշխարհին ուղղված կոչը՝ «ճնշում գործադրեք Թուրքիայի վրա էմբարգոն վերացնելու համար», անտեղի չէ: Նաև այս պատճառով է, որ տարբեր երկրներում վերջին ժամանակներս ավելանում են ցեղասպանության մասին օրինագծերը:

Հայկական սփյուռքի ձևավորումը սկսվել է դեռևս երկու դար առաջ: Ավելի հաճախ առևտրի նպատակով նախ դեպի Եվրոպական երկրներ, ապա նաև Ամերիկա մայրցամաք իրականացվող գաղթերը տնտեսական բնույթի էին: Արդյունքում ամեն տարածաշրջանում կարող էին ձևավորվել սահմանափակ թվով գաղութներ: Սակայն դրանց թիվը աճեց Անատոլիայի քրիստոնյա ժողովուրդներից հայերի նկատմամբ միսիոներների իրականացրած կրոնական հետապնդումների հետևանքով: Մասնավորապես բողոքական և կաթոլիկ դավանանքին բերելու գործընթացն իրականացվում էր «այլ աշխարհներում ինքնուրույնության և բարեկեցիկ ապագայի խոստումով», որն էլ դարձավ հայերին դեպի «պանդխտություն» կողմնորոշելու առաջին ազդակը: 20-րդ դարասկզբին արդեն կային Ֆրանսիայում կաթոլիկ հայերի, Ամերիկայում՝ բողոքական հայերի գաղթօջախներ:

Արդյունքում հայերի՝ առևտրական և կրոնական դրդապատճառներով երկու հարյուր տարի առաջ սկսված սփյուռքագոյացումը փուլ առ փուլ շարունակվեց՝ 1915-ի բռնագաղթ, ավելի ուշ՝ Մերձավոր Արևելքից դեպի Արևմուտք արտագաղթ, հանրապետության շրջանում Թուրքիայից շարունակվող գաղթեր և, վերջապես, արտագաղթ Հայաստանի անկախացումից հետո, երբ հայերի մի մասը գաղթում էր հոժարակամ, մյուս մասն էլ՝ հարկադրված:

Սակայն ամենազանգվածայինն ու կործանարարը տեղի ունեցավ Օսմանյան կայսրության անկման շրջանում: 19-րդ դարի

սկզբներին գաղթերի ծավալը մեծանում էր Անատոլիայում հայերի դեմ գործադրվող բռնությունների և ապստամբությունների հետևանքով: Սփյուռքագոյացման գործընթացի վրա էական ազդեցություն ունեցավ «1915թ. հայերի ցեղաքսորը», որն էլ, ըստ ցեղասպանագետների մեծ մասի, «դարի առաջին ցեղասպանությունն» է: Թուրքական պաշտոնական տեսակետի համաձայն՝ դա «տեղահանություն» է: Այդ ընթացքում հայ բնակչության մեծ մասը բնաջնջվեց, ողջ մնացածները հասան Դեր-Զոր, Հալեպ, որտեղից էլ նավերով Միջերկրական ծովով գաղթեցին դեպի Եվրոպա և Ամերիկա, սփռվեցին աշխարհով մեկ: Ահա թե ինչու այսօր աշխարհի բոլոր մայրցամաքներում ձևավորվել են հայկական գաղթօջախներ:

Աշխարհասփյուռ հայության մայր հայրենիքը Անատոլիան է: Մեր օրերում Մերձավոր Արևելքի երկրներից կամ Հայաստանից դեպի Արևմուտք ծավալվող գաղթերի հիմքում, ըստ էության, դարձյալ ընկած է Անատոլիայից արմատախիլ արված ժողովրդի պատմությունը: Սփյուռքում տեղի ունեցող գաղթերը ավելի շատ «միջանկյալ և տարանցիկ բնույթի տեղաշարժեր» են, քանի որ հիմնական արտագաղթը և սփյուռքի ձևավորումը սկսվեց Անատոլիայից: Սփյուռքահայերը, աշխարհի որ կողմում էլ լինեն, միևնույն է, հանդիսանում են անատոլիական մշակույթի կրողներ: Չնայած սերնդափոխությանը՝ կարելի է հանդիպել թուրքերեն և տեղական բարբառներով խոսողների: Նույնիսկ մահմեդականություն ընդունած ընտանիքներում հնարավոր է նկատել անատոլիական հետքեր: Այդ իսկ պատճառով բնավ չափազանցություն չէ ասել, որ Անատոլիան, ի դեմս հայկական սփյուռքի, տարածված է աշխարհով մեկ:

Հայության հոգեվիճակը կամ ծանր ժառանգություն՝ հոգեխեղում

Հայության խնդրի ամենաբարդ հատվածը բազմաշերտ սփյուռքահայությունն է, որի կազմակերպվածությունը, սակայն, այնքան էլ լավ չէ: Վերջինիս ջանքերը գլխավորապես կենտրոնացված են ինքնության պահպանման վրա: Ինքնության պահպանման և ձուլվելու մտավախությունը սփյուռքահայության ինքնության մեջ տեղ գտած ներկայիս ամենաբնորոշիչ բացիլն է:

Սփյուռքի առկայության փաստը հայ ժողովրդի հայրենի հողերից տարանջատմամբ չէ միայն պայմանավորվում, այլ նաև բացատրվում է դարերով միասին ապրած ժողովրդի՝ աշխարհագրական իմաստով միմյանցից բաժանվելու հանգամանքով, ինչն էլ վկայում է մի ողջ ազգի «տարածքային ամբողջականություն»-ից զրկվելու մասին: Սա վտանգում է ազգային ինքնությունը: Եվ հայ ժողովուրդը վերջին երկու հարյուրամյակում կանգնած է ինքնության կորստի վտանգի առջև: Միանգամայն տարբեր հասկացություններ են «փորձել պահպանել ինքնությունը» և «ինքնությունն ապրել»: Վերջին հարյուրամյակում հայերն ավելի շատ զբաղված են ինքնությունը պահպանելով, քան այն ապրելով: Ինչ վերաբերում է այսօրվա իրականությանը, ապա կարելի է ասել, որ եթե Հայաստանում ապրում են այդ ինքնությունը, սփյուռքում աշխատում են պահպանել այն:

Մի ժամանակաշրջանում, երբ գլոբալ արժեքները սպառնում են տեղական արժեքներին, սփյուռքը պետք է գերբնական ջանքեր գործադրի ինքնության գոնե մի փոքր մասը պահպանելու համար: Իսկ դա պահանջում է մասնավոր պատճառներ և հատուկ միջոցներ: Հայերը և հրեաները ունեն դրանք. ահավասիկ, սփյուռքի քաջ հայտնի երկու դասական օրինակ՝ երկուսի մասնավոր պատճառները նույնն են՝ ցեղասպանության ենթարկված լինելը: Այդ բռնության պատճառով էր, որ մարդկության ճանաչած նրանց

ինքնության պահպանման իրավունքը պետք է որ որոշ չափով առանձնաշնորհային լիներ:

Իսկապես, հրեաները, լավ գիտակցելով այդ իրավունքի ընձեռած հնարավորությունները, կարողացան կրոնից վերցնել «Աստծո ընտրյալ ժողովուրդ», իսկ աշխարհից՝ «երկրագնդի ընտրյալ ժողովուրդ» տիտղոսները: Մինչդեռ հայ ժողովրդի պարագայում այդպես չեղավ: Աշխարհը Հրեական ցեղասպանության նկատմամբ ըմբռնում ցուցաբերեց, ինչը չեղավ հայերի դեպքում: Դա էլ իր հերթին ավելի խորացրեց հայի ինքնության խեղումը: Աշխարհի տարբեր երկրներում հայտնված սփյուռքահայերի առաջին և երկրորդ սերունդները տեսակը շարունակելու պայքար երբեք չմղեցին: Իրենց ապրած հոգեխեղման տեսական ազդեցությունը, ըստ երևույթին, ինքնության մի առանձին զարթոնք էր, և հարկ չեղավ հատուկ ջանքեր գործադրել: Բացի այդ, կար նոր երկրում գոյատևելու խնդիր: Իսկ արդեն երրորդ և չորրորդ սերունդների ժամանակ տեղի ունեցավ փոփոխություն: 1915թ. հոգեխեղումն ապաքինելու նպատակով մատը մատին չտվեցին ո՛չ աշխարհը, ո՛չ էլ, առավել ևս, այդ խեղման պատասխանատուները: Բայց ժամանակն անողոք էր, նա շարունակում էր իր ընթացքը... Չնայած սերնդեսերունդ փոխանցվող խեղման հետքերը նվազում էին, սկսվել էր ինքնության լուրջ էրոզիա, մոռացվում էր հայկական ինքնությունն ու մեծ թափ էր առնում ամերիկականացման, ռուսականացման, ֆրանսիականացման գործընթացը: Խառնամուսնությունների շատացումը, հայկական անունների անտեսումը, լեզվամոռացումն ու եկեղեցիների դատարկումը խնդիր դարձավ սերունդներին:

Սփյուռքագոյացումը հայկական ինքնության համար մի նոր վիճակ ստեղծեց: Ավելի քան հինգ միլիոնանոց սփյուռքի ներկայացուցիչները դարձան երկու ինքնության կրողներ: Այդ երկու ինքնությունները չէին սահմանափակվում զուտ ամերիկացի և հայ լինելով, այլ ավելի շատ նոր ինքնությունը բախվում էր հնի

հետ: Հին ինքնությունը, ցավոք, կարոտախտ էր: Ընդամենը: «Հին» բնորոշումը ոչ թե «սպառված» կամ «հնացած», այլ «ազդեցությունը կորցրած» հասկացություն էր... Դրանից ելնելով էլ նրանք ոչ թե ապրում, այլ աշխատում են ապրեցնել իրենց ինքնությունը:

Որքան էլ զարմանալի է, սփյուռքի հայկական ինքնության պահպանման համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեցին Մերձավոր Արևելքի մահմեդական երկրներում: Իսլամական պետությունների՝ Իրանի, Իրաքի, Սիրիայի, Եգիպտոսի շնորհած մասնակի ազատության պայմաններում իրենց գոյությունն էին պահպանում մեկ միլիոնից ավելի բնակչություն ունեցող հայկական համայնքները՝ մեծ թվով դպրոցներով, եկեղեցիներով, միություններով: Նրանք, ի տարբերություն արևմտյան սփյուռքի, կարողացան յուրատեսակ ձևով պահպանել իրենց ինքնությունը: Բայց, դժբախտաբար, վերջին 30 տարվա ընթացքում տարածաշրջանի երկրներում տեղի ունեցող պատերազմների հետևանքով տեղի հայկական համայնքները սկսեցին դատարկվել՝ ուղղվելով դեպի Արևմուտք:

Արևմուտքում շնորհված լայն ազատությունները և հնարավորությունները, ցավոք, ավելի հեշտացրին ինքնության ձուլումը: Մինչդեռ արևելքում ազատությունների սահմանափակումը գուցեև իրականում նպաստեց ինքնության պահպանմանը: Իսլամական երկրում օրը հինգ անգամ հնչող ազանը[1] միևնույն ժամանակ կարծես հիշեցում էր՝ ուղղված հային՝ «դու հայ ես, դու քրիստոնյա ես»: Արևմուտքի ազատությունների դրախտը ինքնությունները վերածում էր դժոխքի, մինչևանգամ ինքնություններն ընդունող բազմամշակութայնությունը, ցավոք, բավական չեղավ դժոխքի կրակը մարելու համար:

Ինքնության լուրջ կորուստներ կրող «իրավազուրկ հայերը»

[1] Ազան – աղոթքի հրավեր, որ մինարեթից հնչեցնում է մահմեդական հոգևորականը (ծ.թ.):

այսուհետև ջանալու էին ինքնությունն ապրել «իրողությունները ճանաչելու պահանջի համառությամբ»: Եվ դա դարձավ սփյուռքահայության ինքնության հիմնաքարը: Եթե սփյուռքի առաջին սերունդների համար այդ համառությունն ուներ գոյապահպանության նշանակություն, երրորդ և չորրորդ սերունդների համար արդեն հասցվեց աշխարհին իրողություններն ընդունել տալու մակարդակին: Ահա հայկական սփյուռքի հոգեվիճակը բացատրվում է հենց այդ ընդհանուր համառությամբ: Եվ հայկական ինքնությունը պահպանելու հիմնական միջոցը այդ ոգին վառ պահելն է: Մի կողմ թողնելով այն, որ աշխարհը դեռևս չի ընդունել իրողությունները, հայերի ինքնության խաթարման հիմնական պատճառն այս հարցում թուրքերի դրսևորած բացարձակ անտարբերությունն է: Այդ պատճառով էլ հայ ժողովուրդը դեռևս շարունակում է տառապել հոգեխեղմամբ: Այս անառողջ հոգեվիճակն է հիմնականում, որ քայքայում է հայկական ինքնությունը: Վերլուծության ենթարկելով հայկական ինքնությունը՝ պետք է նկատի ունենալ «թուրք»-ի խաղացած պատմական և արդիական դերը նույն այդ ինքնության մեջ: Թուրքը, ուզածչուզած, միշտ էլ հայկական ինքնության մեջ ազգայնական դրսևորումների ձևավորման արտաքին ազդակ է եղել: 1915թ. իրադարձություններից հետո այսօր այն արդեն դագաթնակետին է հասել:

Ներկայումս հայկական ինքնության ձևավորման մեջ «թուրք» երևույթը կարևոր դեր է խաղում. հենց միայն թուրքին ընկալելու հարցում նկատվում են լուրջ տարբերություններ սփյուռքահայերի, հայաստանցիների և թուրքահայերի միջև: Այս երեք հատվածների հոգեխեղման հասցրած վնասն ու թողած ազդեցությունը տարբեր են՝ ծանր, միջին և թեթև: Թուրքահայերը ներկայումս ապրում են թուրքերի հետ միասին, Հայաստանի հայերը՝ թուրքերի հարևանությամբ, իսկ սփյուռքահայերի մեծ մասը՝ թուրքերից բավականաչափ հեռու: Ահա թուրքի հետ շփման

տարածքային հեռավորությունն էլ հանդիսանում է ինքնության խեղման հիմնական տարբերակիչ պատճառը:

Սփյուռքի համար Թուրքը շարունակում է մնալ պատմության այն նույն Թուրքը: Դա 1915թ. ցեղասպանությունն է, 1942թ. Ունեցվածքի հարկով[1] «տնտեսական ցեղասպանությունը», 1955թ. սեպտեմբերի 6-7-ը տեղի ունեցած վանդալիզմի նոր դրսևորումները[2]: Նրանում արմատացած է մի համոզմունք, թե «Թուրքը ընավ չի փոխվի». ինչպես որ անցյալում չստացվեց գոյակցել այդ նույն Թուրքի հետ, այնպես էլ ո՛չ այսօր, ո՛չ էլ վաղը հնարավոր չի լինի համագործակցության եզրեր գտնել: Հայաստանցիների համար էլ Թուրքը շարունակում է մնալ պատմության այն նույն Թուրքը, միայն թե հիմա՝ որպես հարևան: Ուզած-չուզած՝ ստիպված են կողք-կողքի ապրել: Իսկ Թուրքահայերի համար Թուրքն իր հետ ապրողն է:

Այս ամենով հանդերձ, եթե «Թուրք» երևույթը սփյուռքահայերի համար ունի բացասական նշանակություն, ապա Թուրքահայերի դեպքում այդպես չէ: Եթե «Թուրք» երևույթը սփյուռքահայերի մոտ առաջացնում է զայրույթ, ապա Թուրքահայերի համար հոգեխեղման դեղամիջոց է:

Թուրքի հետ հարաբերություններում սփյուռքահայերի և Թուրքահայերի միջև պատմական տեսանկյունից որևէ տարբերություն չկա: Ապրում էին նույն պայմաններում: Միայն հետո Թուրքերի մեջ ապրել, նրանց հետ երկխոսել և գոյակցել կարողանալը նշանակալիորեն կրճատեց Թուրքահայերի ինքնության խեղումը և ցույց տվեց, որ հնարավոր է հարաբերությունները կարգավորել: Նմանատիպ իրավիճակի կարելի է հանդիպել վերջին

[1] Ունեցվածքի հարկ - (Varlik vergisi), սա հանրապետական Թուրքիայում տնտեսական տեռոր էր՝ ուղղված կրոնական փոքրամասնությունների դեմ (Ծ.Թ.):

[2] 1955թ. սեպտեմբերի 6-7-ը Ստամբուլում և Իզմիրում տեղի ունեցած դեպքեր, որոնց ընթացքում Թուրք ջարդարարները թալանեցին և ավերեցին հայերի և հույների մի շարք եկեղեցիներ, դպրոցներ, խանութներ, բնակարաններ, պղծվեցին գերեզմանոցներ, բռնաբարվեցին կանայք: Սպանվածների և անհետ կորածների թիվը մինչ օրս հայտնի չէ (Ծ.Թ.):

ժամանակներում աշխատանքի նպատակով Հայաստանից Թուրքիա մեկնող հայաստանցիների մոտ, ովքեր փորձում են երկխոսություն ծավալել Թուրքերի հետ: Հայության հոգեխեղման տարբեր արտացոլումներ են նկատվում ամեն տարի ապրիլի 24-ին կազմակերպվող միջոցառումների ժամանակ: Սփյուռքում դրանք ուղեկցվում են Թուրքական դրոշ այրելով և հակաթուրքական կոչերով, Հայաստանում մեծ ու փոքր միասնաբար լուռ քայլում են դեպի ցեղասպանության զոհերի հուշակոթող՝ ծաղիկ դնելու անմեղ զոհերի հիշատակին: Իսկ Թուրքահայերը, կամա թե ակամա, ամենապանդուխտն են. ո՛չ հուշակոթող ունեն, ո՛չ էլ՝ ապրիլի 24-ը հիշատակելու հնարավորություն:

Հատնող ժառանգություն. պատմական հարաբերություն

Երկու բառով չես ներկայացնի հայերի և Թուրքերի հարաբերություններն ու միմյանցից կրած ազդեցությունները: Դարերի պատմություն ունեցող հարաբերություններում միմյանցից վերցրածը, ինքնություններում ձևավորված լավ ու վատ կողմերն այնքան շատ էին, որ երբեմն նրանց վարքագծերն իրարից տարբերելը բավական դժվար էր դառնում: Ձևավորված միասնությունն այնքան խորն էր, որ դրա պառակտումը դավաճանություն որակող երկու կողմի՝ միմյանց դեմ բերած փաստարկները չպետք է զարմանալի թվան: Հայ ժողովրդին «հավատարիմ ազգ» հորջորջող, բայց ավելի ուշ նրան դավաճանության մեջ մեղադրող Թուրքական տեսակետին ի պատասխան՝ հայերը 1915թ. իրադարձությունները չեն մեկնաբանում որպես սոսկ մի ժողովրդի զանգվածային ոչնչացում, այլ նաև՝ դավաճանություն դարավոր հարաբերություններին:

Տարբեր մշակույթների համակեցությունը Անատոլիայում մշտական վիճակ էր: Բայց դա միշտ չէ, որ հաջող ընթացք է ունեցել: Եթե «հնում միասին շատ լավ ապրում էինք» խոսքն այսօր երկու կողմում էլ կարոտախտ է առաջացնում, ապա ասել, թե դա ողջ նշանակությամբ արտացոլում է իրողությունը, դժվար է: Օսմանյան կայսրության ազգերի համակարգում մահմեդականների և ոչ մահմեդականների կենսակերպը և միմյանց հետ հարաբերությունները կարող ենք բնութագրել «խցիկային սիստեմ»-ով: Ընդ որում, այդ խցիկները միմյանցից համեմատաբար անկախ էին:

Այն ժամանակ, երբ նրանց ավանդույթների և սովորույթների համաձայն, ձևավորվում էր կրթական, մշակութային, սոցիալական և իրավական համակարգի առաջին և արդար սյունը, միևնույն ժամանակ միմյանց հետ հարաբերություններում և հասարակական ոլորտներում հիերարխիկ տարբերությունների առկայությունն էլ ձևավորում էր այդ սիստեմի երկրորդ և անարդար սյունը:

Խցիկների միջև կենսաձևի և որակի տեսանկյունից եթե անգամ տարբերություններ էլ լինեին, բոլորը կարծես գոհ էին իրենց վիճակից: Այսօր կարող ենք ասել, որ այդ ժամանակաշրջանում իրավունքների անհավասարությունը հանդուրժվում էր: Օրինակ, ըստ պատմաբանների, մահմեդականները հասարակական ոլորտում ոչ մահմեդականներից մի շարք առավելություններ ունեին. «ոչ մահմեդականը իրավունք չուներ ձի հեծած փողոցներով շրջել, նույն հագուստը կրել, մինարեթները եկեղեցու զանգերից ավելի բարձր պիտի գտնվեին» և այլն: Բայց այս ամենը, եթե անգամ ցույց է տալիս հասարակական ոլորտում առկա անհավասարությունները, մանրուք էր խցիկի ներսում եղած ազատությունների համեմատությամբ: Առնվազն դրա շնորհիվ էր, որ լուրջ բախումներ տեղի չէին ունենում:

Թուրքական և հայկական աղբյուրները չեն խոսում Ֆաթիհից[1] մինչև 17-րդ դարի կեսերն ընկած ժամանակահատվածում խցիկային սիստեմի անարդյունավետությունից, հետևաբար և լուրջ կոտորածներից ու բախումներից, քանի որ դրա համար չկա օբյեկտիվ հիմնավորում:

Ընդհակառակը, սիստեմի արդյունավետ գործելու հիմնական խթանը սուլթան-պատրիարք հարաբերությունն էր. կողմերը գոհ էին: Այլ կերպ ասած, բոլորի վիճակը գոհացուցիչ էր, և մինչև Թանզիմաթի[2] շրջանը Օսմանյան կայսրության խցիկային համակարգում միմյանցից գոհ լինել-չլինելու խնդիր չկար: Քանի որ հասարակության մեջ չէին շրջանառվում ֆրանսիական հեղափոխության ոգուն հարիր «ազատության», «արդարության», «հավասարության» նման «սադրիչ» գաղափարներ, ու ոչ մի տարբերություն՝ դու սուլթանի ստրուկն ես, թե՝ պատրիարքի:

Ֆաթիհի վիթխարի կայսրությունում ստեղծված այդ հանգիստ խցիկային համակարգը մի քանի դար գործեց մինչև Թանզիմաթի շրջանը, որի ժամանակ արդեն յուրաքանչյուր խցիկում տեղի ունեցան նոր փոփոխություններ: Այդ պահից սկսած ո՛չ սուլթանն էր միայնակ, ո՛չ էլ՝ պատրիարքը: Սուլթանն ունեցավ Սահմանադրական մեջլիս, իսկ պատրիարքը՝ «Հայկական ազգային աշխարհիկ ժողով»: Թանզիմաթի շրջանում հռչակված Սահմանադրության հետ միասին հայ ժողովուրդն էլ ունեցավ «Հայ ազգային կանոնադրություն» անվանումով սեփական սահմանադրություն: Թեև նրանք գլխավորում էին հիերարխիաները, երկուսի իշխանությունն էլ հետզհետե կորցնում էր ազդեցությունը: Կայսրությունում արդեն սկսել էր թուլանալ սուլթանական

[1] Սուլթան Մեհմեդ II - (1432 - 1481թթ.), իր նվաճումների համար ստացել է Ֆաթիհ (Նվաճող) տիտղոսը, 1453թ. գրավել է Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը (Ծ.թ.):

[2] Թանզիմաթ - (Tanzimat - բարեփոխումներ, բարենորոգումներ), 1840-1860-ական թվականները Օսմանյան կայսրության պատմության մեջ մտան որպես քաղաքական, անտեսական և մշակութային ոլորտներում իրականացված էական փոփոխությունների և բարենորոգումների շրջան, որն էլ ստացավ Թանզիմաթ անվանումը (Ծ.թ.):

համակարգը, հետևաբար և չէր էլ կարողանում պահպանել խցիկների իրավունքները: Թանզիմաթից հետո գոհ չէին ո՛չ ստեղծված իրավիճակից, ո՛չ էլ՝ միմյանցից, որովհետև Թանզիմաթյան վերջին շրջանում խցիկներն աստիճանաբար քայքայվեցին և միախառնվեցին: Սրան հաջորդեց այն, որ խցիկները մեկը մյուսի ետևից սկսեցին գլուխ բարձրացնել և նվաճելով անկախություն՝ անջատվեցին կայսրության վագոնից: Ամենավերջինը, որ դա հանդգնեցին, հայերն էին: Կորցնելով իր ուժը՝ Օսմանյան կայսրությունն այլևս չկարողացավ վերահսկել միջխցիկային հարաբերությունները: Օսմանյան կայսրության վերջին երկու հարյուր տարվա ընթացքում էր, որ սուլթանին գանգատվում էին հատկապես ոչ մահմեդականներից անարդար հարկահանության, գյուղացիների կեղեքման, կանանց և աղջիկների առևանգման մասին: Սակայն արդեն սուլթանական իշխանությունն ի վիճակի չէր ապահովել իր հպատակների անվտանգությունը: Եվ հենց այդ ժամանակ էլ օտար պետությունները հանդես եկան որպես ոչ մահմեդական ժողովուրդների իրավունքների պաշտպան:

«Հայկական հարցի» ձևավորման մեկնակետը դարձավ Բեռլինի համաձայնագիրը, որտեղ տեղ գտան հայերի բողոքները և բարենորոգումներ անցկացնելու մասին խոստումները: Այսպիսով ստեղծվում էր նոր իրավիճակ, երբ այդ «հավատարիմ հպատակը», կորցնելով «օսմանյան սուլթանի» հանդեպ ունեցած վստահությունը, իր անվտանգությունը սկսեց փնտրել այլ երկրների միջամտության կամ էլ անկախության ձեռքբերման մեջ: Արդյունքում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք այսօր հայկական կողմից «ցեղասպանություն», իսկ Թուրքական կողմից «հայերի տեղահանություն» են կոչվում: 1915թ., երբ հրապարակվեց տեղահանության մասին օրենքը, Անատոլիայում բնակվող ավելի քան 2 մլն հայերի մեծ մասը կազմակերպված ու անկազմակերպ գործողությունների հետևանքով ոչնչացվեց: Հայերի մեծ մասը սպանվեց, մահացավ, մի զգալի հատված էլ ավելի ուշ անցավ Թուրքիային սահմանակից երկրներ, որտեղից էլ սփռվեց աշխարհով մեկ: Մի մասն էլ դավանափոխվելով՝ դարձավ «ապրող կորուստ»:

Եթե թուրքական պաշտոնական թեզը փորձում է ապացուցել, թե հայերը, մեղադրվելով ռուսների հետ համագործակցության մեջ, տեղահանվել են Անատոլիայի միայն մի մասից, հատկապես Էրզրում-Վան շրջանից, ապա սա չի արտացոլում ողջ ճշմարտությունը: Հայերը տեղահանվել են Անատոլիայի բոլոր շրջաններից: «Հայերին Ստամբուլում ընդհանրապես ձեռք չեն տվել» արտահայտությունը դրական իմաստով չի կարող մեկնաբանվել: 1915թ. մայիսին Անատոլիայում իրականացված տեղահանությունից առաջ՝ ապրիլի 24-ին, մի գիշերվա ընթացքում Ստամբուլում մեկ առ մեկ հավաքեցին հայ ժողովրդի առաջնորդներին ու մտավորականներին, տարան անհայտ ուղղությամբ և ոչնչացրեցին: Իսկ արդեն մայիսյան տեղահանությունը չտարածվեց Ստամբուլի վրա, որովհետև այնտեղ էին գտնվում հյուպատոսություններն ու դեսպանությունները: Մարդկության պարտքն է անվիճելիորեն ընդունել հետևյալը. օգտվելով Առաջին աշխարհամարտի տարիներին ստեղծված պատերազմական իրավիճակից՝ հային հանեցին իր բնօրրանից և, ըստ հայ պատմաբանների, «փորձեցին արմատախիլ անել Անատոլիայի հողերից»:

Որպես հետևանք, Լոզանի արձանագրությունների համաձայն, նորաստեղծ Թուրքիայի Հանրապետությունը ժառանգեց ընդամենը 300 հազար հայ՝ 170 հազարը՝ Անատոլիայում, 130 հազարը՝ Ստամբուլում: Հայերն այլևս ժողովուրդ չէին, նոր բնորոշմամբ՝ «փոքրամասնություն էին»: Այս բնորոշումը որոշ ժամանակ անց վերածվեց «ազգային փոքրամասնության»: Լոզանի պայմանագրի 37-45-րդ հոդվածները նպատակ ունեին կարգավորել ազգային փոքրամասնությունների իրավական հարցերն արդեն նոր վարչակարգի օրոք: Այդ հոդվածները կարծեք թե հանդիսանում էին «ազգային փոքրամասնությունների սահմանա-

դրություն», որոնք լիովին միտված էին պաշտպանել նրանց իրավունքները: Այսօր շատերի կարծիքով, այդ հոդվածները փոքրամասնություններին չէին շնորհում ինչ-որ արտոնյալ խմբի կարգավիճակ, այլ երաշխավորում էին նրանց՝ մեծամասնության պես հավասար իրավունքներ ունենալը:

Լոզանյան դրույթներն ի զորու չեղան կասեցնելու Հանրապետության շրջանում հայերի իրավունքների ոտնահարումը: Լոզանի պայմանները խախտողը դարձյալ եղավ հենց ինքը՝ պետությունը: Սա մի իրողություն էր, երբ Հանրապետության պատմության ընթացքում հայերն էլ մյուս ոչ մահմեդական փոքրամասնությունների պես ընկալվեցին որպես հարատև անվտանգության խնդիր: Նրանց նկատմամբ ցուցաբերված՝ «դու տարբեր ես, ի ծնե՝ իրավազուրկ, այս երկրում կարող ես ապրել, բայց ավելիին չձգտես, չհանդգնես բազմանալ ու զարգանալ, եթե կարող ես այսպես ապրել, ապրիր և ժամանակի ընթացքում կնվազես ու կդադարես գոյություն ունենալ» վերաբերմունքը միշտ եղավ որպես «բացասական խտրականություն»: Ազգային փոքրամասնությունների գոյությունը որպես մշտական սպառնալիք ընկալելը չփոխվեց Հանրապետության պատմության ընթացքում իշխանության գլուխ անցած ոչ մի քաղաքական ուժի օրոք, որովհետև այդ քաղաքականությունը ուղղորդում էին պետության խորքային իշխանությունները, որոնք ամրագրել էին՝ ազգային փոքրամասնությունները չպետք է բազմանան: Բոլոր միջոցառումներն այդ նպատակին պետք է ծառայեին, ինչն էլ, ինքնըստինքյան, կհանգեցներ փոքրամասնությունների նվազմանը:

Արդյունքում ցանկությունն ի կատար ածվեց. Հանրապետության հիմնադրման ժամանակ 300 հազար հայերից այսօր արդեն մնացել է 50-60 հազարը: 4 հազար տարվա հինավուրց ազգն այսօր Թուրքիայում իր գոյությունը պահպանում է կրոնական մի փոքրիկ համայնքի տեսքով՝ 40 եկեղեցիներով, 17 դպրոցներով, մոտ 50 վաքֆներով (անօտարելի ունեցվածք,- ծ.թ.), ավելի քան

20 միություններով: Եվ հիմա Թուրքիայում գտնվող ազգային փոքրամասնությունը ոչ Լոզանի որոշած փոքրամասնությունն է, ոչ էլ Թուրքիայի Հանրապետության Սահմանադրության բնորոշած քաղաքացին:

Այս կրճատման շրջանը կարելի է համեմատել անսարք ծորակի հետ, որից հեղուկը մերթ ծորում է կաթիլ-կաթիլ, մերթ ժայթքելով դատարկվում: Ազգային փոքրամասնությունների թվաքանակը նվազեցնելու խորքային քաղաքականությունը սկսեց իրականացվել բացահայտորեն: 1942թ. Ունեցվածքի հարկի, 1955թ. սեպտեմբերի 6-7-ի իրադարձությունների, 1964թ. Փոխանակության[1] շրջանները բեկումնային եղան այդ քաղաքականության համար: Իսկ ռազմական հեղաշրջումներից առաջ և հետո ազգայնական ճակատի բյուրոկրատական ճնշումները, ԱՍԱԼԱ-ի, Ղարաբաղի և քրդական հարցերի հետևանքով ստեղծված լարվածության երկարատև ժամանակաշրջանները ծառայեցին ազգային փոքրամասնությունների հոգեբանության մեջ դարձյալ անվստահության զգացումի ձևավորման քաղաքականությանը: Կաթիլ առ կաթիլ դատարկվելը դարձավ շարունակական մի երևույթ՝ հասնելով մինչև մեր օրերը: Ծորակն այդպես էլ երբեք չնորոգվեց:

Իսկ հայերի թվի բավականաչափ նվազումը հաստատող փաստաթուղթ կարելի է համարել Վճռաբեկ դատարանի որոշումը: Պետանվտանգության դատական ատյանի՝ Վահագն Տատրյանի «Գենոցիդ» գրքի առնչությամբ իրականացրած դատաքննությունից հետո Վճռաբեկ դատարանը կայացրեց արդարացման վճիռ, որում, սակայն, կար այսպիսի մի ձևակերպում. «Ըստ էության, մեր երկրում այնքան հայ չի մնացել, որ կարողանա ենթարկվել սադրանքների»:

Նախակրթարանների և միջնակարգ դպրոցների դասագրքերը փաստում են, որ ազգային փոքրամասնությունները դիտարկվում

[1] Հույն և թուրք բնակչության փոխանակում երկու պետությունների միջև (ծ.թ.):

են միայն ու միայն ազգային անվտանգության հայեցակարգի շրջանակում: Այդ կրթական պրոցեսում Թուրքիայում առկա զանազանությունները կարող են որպես հարստություն դաստիարակել աշակերտներին. չնայած կյանքի, հասարակության, բնապահպանության, քաղաքացիության մասին դասերի առկայությանը, դրանցից ոչ մեկում խոսք անգամ չկա ազգային փոքրամասնությունների միասին:

Այբբենարանում նույնիսկ ուրիշ անուն չի հանդիպում, անընդհատ կամ «Ալի՛, գնդակը Այշեին տուր» կամ էլ «Այշե՛, գնդակը Ալիին տուր»: Երբեք չի հանդիպում գնդակը տուր Հակոբին, Դելալին կամ էլ Հրիստոյին: Փողոցում, բակերում, շրջապատում այս մարդիկ ընդհանրապես չկան: Միայն ու միայն մեկ դասագրքում է փոքրամասնությունների անունը հոլովվում, այն է՝ լիցեյի Ազգային անվտանգության դասագիրքը:

Ռազմական դաստիարակների դասավանդած այս դասագրքի «Թուրքիայի Հանրապետության նկատմամբ խաղացված խաղեր» բաժնի «Քայքայիչ գործողություններ» ենթաբաժնում հիշատակվում են փոքրամասնությունները և բնութագրվում հակասական նախադասություններով. «Անկախ լեզվական կամ էլ ռասայական պատկանելությունից (հույն, հայ և այլն), ամենքն էլ Թուրքիայի քաղաքացի են և օրենքի առաջ՝ հավասար: Սա երաշխավորվում է մեր 1924, 1961 և 1982թթ. Սահմանադրություններով: Թուրքիայում մոտ 95% կազմող մեծամասնությունն ունի նույն մշակույթն ու նպատակը, հազարավոր տարիներ կիսում է նույն ճակատագիրը...»: Սա ցույց է տալիս, որ այդ 95%-ից դուրս գտնվող փոքրամասնությունները նույն ճակատագիրը կիսողները չեն: Վերոնշյալ նախադասությունում վկայակոչելով Սահմանադրությունը՝ քաղաքացիության հարցում բոլորը դիտվում են հավասար, սակայն հաջորդ նախադասությունում արդեն տարանջատվում են: Իսկ այս ամենը հստակ ցույց է տալիս, թե ինչպես պետք է ընդունել փոքրամասնություններին և այդ հարցում ինչ սերմանել երիտասարդ ուղեղներում:

Ստեղծվել է մի իրավիճակ, երբ ազգային փոքրամասնությունները մեծամասնության կողմից ընկալվում են որպես անվտանգության խնդիր, և առաջիններում առկա է ապագայի հանդեպ անվստահության սինդրոմը: Սա մի տեսակ վստահության ճգնաժամ է և ճանապարհ է հարթում երկիրը լքելու համար, իսկ մնացողների տեսանկյունից էլ՝ ձևավորում անառողջ հոգեվիճակ: Սովոր են, որ ամեն պահ կարող են կանգնել որևէ սպառնալիքի առաջ: Սրա վառ օրինակն է ծերունի Ֆերման դայու պատմությունը:

Ֆերման դային Մարմարա Էրեղլի գավառի ափամերձ հողերում աճեցնում էր լոլիկ, պղպեղ, եգիպտացորեն, արևածաղիկ, բայց ոչ մի ծառ չէր տնկում: Հարցին, թե՝ ինչու, ծերունին այսպես էր պատասխանում. «Ջեմ տնկում, հարգելիս, որովհետև իմ ողջ կյանքում ուր գնացի, ծառ տնկեցի, բայց մրգերն ուրիշները ճաշակեցին: Ինձ ոչինչ չհասավ: Այդ պատճառով էլ ծառ չեմ տնկում: Ես իմ օրվա ուտելիք բանջարեղենն եմ աճեցնում»: Քաղաքացու՝ սեփական պետության հանդեպ ունեցած անվստահությունը խոսում է իրավիճակի լրջության ու վտանգավորության մասին:

Թուրքական ազգային ինքնության հիմնաշաղախը. հայկական մտազարություն

«Խորքային պետության»[1]՝ հասարակության մեջ ազգային փոքրամասնությունների նկատմամբ սերմանած թշնամական դիրքորոշումը միշտ տվել է իր պտուղները, և դեռ շատ վաղուց հա-

[1] «Խորքային պետություն» - (Derin devlet) պետություն պետության մեջ, Քեմալ Աթաթուրքի օրոք ձևավորված արտոնյալ վերնախավ, որը կազմված է երկրի քաղաքական, ռազմական և գործարար շրջանակները ներկայացնող մարդկանցից: Նրանք ունեն որոշումներ կայացնելու հնարավորություն և դրանք իրականացնելու մեխանիզմներ: Այդ մարդկանց միավորում է քեմալական հանրապետության հիմքերի անձեռնմխելիությունը պահպանելու ձգտումը (Ծ.Թ.):

սարակության գիտակցության մեջ արմատավորվեց փոքրամասնություններին՝ որպես «օտարների», ընդ որում, «իրավազուրկ օտարների» ընկալումը:

Հատկապես հայերը... Պատմությունից եկող հայկական այդ մեծ տաբուի պատճառով հայերն ազգային փոքրամասնության կարգավիճակից վերածվեցին հասարակության ընդհանուր թշնամու: Իսկ այն, որ տարիներ շարունակ Թուրքիային սպառնացող յուրաքանչյուր վտանգի հետևում հայկական ձեռագիր են փնտրում և դա մատուցում հասարակությանը, ասվածի ապացույցն է: Երբեմն հայտարարվում էր, թե ձախ կազմակերպությունների և նրանց զորակից ուժերի շարքերում ներգրավված էին հայեր: Երբեմն էլ պնդում էին, թե քրդական հարցի հիմքում ընկած է հայկականը՝ մինչևանգամ հայտարարելով, թե «Սուլհադդին Ուրուք անունով դավանափոխ մի հայ համարվում է «Հըզբոլլահ»-ի[1] ուղեղը», հայերին էին վերագրում այդ կառույցի հանցագործությունները: Ահա նման ձևով էլ խնդիրները ոչ բացահայտորեն բարդում էին հայերի վրա: Հարկ է ընդունել, որ այդ աշխատանքները նպատակակետին հասցնելու համար «խորքային պետության» կողքին կային «խորքային ԶԼՄ-ներ»: Սրանց համար ամենևին էլ դժվար չէր ժողովրդի մեջ հայ բառը հայհոյանքի վերածել: «Հայի բիճ», «հայի լաճ» և նման այլ վիրավորական արտահայտություններ ներմուծվեցին առօրյա խոսակցականի մեջ:

Այն, որ հայերի դեմ այդ զառանցանքի հիմքում ընկած է լուրջ մտադարություն, կասկածից վեր է: Բացի այդ, այս մտադարության պատմական արմատները ժամանակագրական առումով բավականին խորն են: Իսկ պարանոյայի պատմական հետքերը նախ և առաջ կապված են հողային կորստի համախտանիշի հետ: Նույնիսկ այսօր շարունակվող «հայերը մեր հողերն են պահանջում» սինդրոմի հիմնական պատճառը պատմական իրադարձություններն են: Օսմանյան կայսրության անկման շրջանից սկսած հողային կորուստն ուղեկցվում էր կայսրության հպատակ ժողովուրդների անկախացումով: Արդյունքում Օսմանյան կայսրության դարավոր ռեժիմը, որը կարողանում էր որոշակիորեն ապահովել այդ ժողովուրդների գոյությունը, կայսրությունից ժողովուրդների անջատման հետևանքով քայքայվեց և վերականգնվելու ուժ այլևս չգտավ: Կայսրությունից իրարահաջորդ անջատվողները եղան մի կողմից բալկանյան ժողովուրդները, մյուս կողմից՝ հարավում արաբական ժողովուրդները: Արյունահեղությունը կայսրության համար այլևս անխուսափելի էր: Աստիճանաբար կործանվում էր՝ հետ քաշվելով դեպի Անատոլիա:

Ուշագրավ էր նաև այն, որ հետ քաշվելը տարածքային կորստից բացի ուներ նաև դեմոգրաֆիական նշանակություն: Յուրաքանչյուր կորցրած հողակտորի հետ միասին դեպի Անատոլիա էր ուղղվում թյուրք-մահմեդականների նոր ներհոսք, ինչն էլ իր հերթին դարձավ Անատոլիայում ներքին անդորրի խաթարման հիմնական պատճառը:

Ահա տիրող այդ իրավիճակում Անատոլիայում ապրող ժողովուրդներից մեկն էլ «Օսմանյան կայսրության վերջին ոչ մահմեդական ժողովուրդ հայերն էին»: Այս ամենը, բնականաբար, իր ազդեցությունն էր ունենալու Անատոլիայի «շարժիչ ուժ» հանդիսացող նստակյաց հայ ժողովրդի վրա: Պատմաբանները փորձում են բացատրել, որ հայ ազգը Անատոլիայի ժողովուրդներից ամենավերջինն արթնացողն ու ամենամեծ վնաս կրողն էր: Հայերն իրենց ողբերգությամբ կարծես «վճարեցին Օսմանյան կայսրությունից անջատված բոլոր ժողովուրդների փոխարեն»: Այս մոտեցումը որոշ իմաստով արդարացի է:

Անդրադառնալով հողային խնդրին՝ անհրաժեշտ է ընդունել հետևյալ ճշմարտությունը. հայերը նոր չէին եկել Անատոլիա:

[1] Հըզբոլլահ - 1980-ական թթ. Թուրքիայում ձևավորված ծայրահեղական խմբավորում, որն առնչություն չունի լիբանանյան համանուն կազմակերպության հետ (Ծ.Թ.):

Ըստ որոշ աղբյուրների՝ 4 հազար տարի շարունակ ապրում էին այդ հողերում և, որպես նստակյաց մի հանրություն՝ օժտված ստեղծագործական հատկություններով, տեղի քաղաքակրթության շարունակողները դարձան: Իսկ նրանց կերտած քաղաքակրթությունը բովանդակային առումով և՛ հարուստ էր, և՛ գեղեցիկ: Արհեստավորներ ու արվեստագետներ... արևելյան, բայց հակված Արևմուտքին... Իրենց այս որակներով հայերը, կարելի է ասել, Անատոլիա տարածաշրջանի հիմնաքարերից էին, իսկ եթե կուզեք՝ շարժիչ ուժերից մեկը: Այլ կերպ ասած՝ նրանք հողի պահանջատեր չեն, իրենք են հողը: (Այս թեմայի հետ կապված մանրամասները տե՛ս «Հայկական ինքնության նոր արտահայտչամիջոցները կամ երբ ջուրն իր ճամփան գտնի» վերնագրի ներքո):

Անգամ այսօր, երբ հայերը խոսում են իրենց սիրելի Արարատ լեռից (Աղրը Դաղը)[1], դա մեկնաբանվում է որպես այդ հողերի վրա աչք տնկել: Մինչդեռ պետք է ճիշտ ընկալել հայության համար Արարատի ունեցած խորհրդանշական դերը: Դա ոչ միայն հայ ժողովրդի կորուսյալ հողերի, այլև դրանց հետ ամբողջանալու կարոտն է: Այդ պատճառով էլ քիչ է դա բնորոշել որպես «մի հողի կամ լեռան նկատմամբ ունեցած կարոտ»: Հայ ժողովրդի համար Արարատի շուքն իր չորսհազարամյա գոյության խորհրդանիշն է: «Նոյ մարգարեից» հետո դարձավ կեցության գագաթը... Միայն անցյալ չէ, այլ նաև ապագա... Կարծում են, թե երբ կարոտը հագենա, ինքնությունն էլ կհատնի... Ահա թե ինչու Արարատ լեռան պատկերը կարելի է հանդիպել սփյուռքի հայկական դպրոցներում, եկեղեցիներում, գրադարաններում, միություններում, տարբերանշանների վրա և անգամ յուրաքանչյուր հայի տանը: Հայկական բանաստեղծությունների և երգերի նշանակալի մի հատված ոգեշնչված է Արարատից: Ներկայումս Արարատը հայերի համար

[1] Աղրը Դաղը - Արարատ լեռան պաշտոնական անվանումը Թուրքիայի Հանրապետությունում (Ծ.Թ.):

ոչ միայն այն հեռու երևույթն է, որ երևանցիներն առավոտները դիմավորում են նրան ուղղված հայացքով, այլ այն մոտիկությունը, որ աշխարհի հինգ մայրցամաքներում ապրող հայերը զգում են իրենց պատերից կախված լեռան պատկերներից:

Հայերի հետ կապված Թուրքերի հողային մտագարությունն այսօր որևէ լուրջ պատճառ չունի: Նախ և առաջ, հարցի առնչությամբ հայության շրջանում չկա միասնական պահանջ: Առանց բացառության կարող է խոսք գնալ յուրաքանչյուր հայի՝ իր պատմական հողերի նկատմամբ կարոտի, այլ ոչ թե պահանջատիրության մասին: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը բազմիցս շատ հստակ ասել է, որ Հայաստանը Թուրքիայից որևէ հողային պահանջ չունի: Հայկական սփյուռքի մեծ մասն էլ, ըստ երևույթին, արմատներ է ձգել իր բնակության նոր վայրերում, հետևաբար նրա՝ ներկայիս Հայաստան վերադառնալը ուտոպիա է: Իսկ մարդինալ հատվածների՝ «պատմական Հայաստանի հողերը այսօրվա Հայաստանի հողերի հետ միավորելու» պես ցանկությունն միշտ էլ կա ամեն ազգի մեջ, որը, սակայն, էական նշանակություն չունի: Սրա համարժեքը կա նաև Թուրքիայում, որտեղ որոշ հատվածներ էլ ունեն Հայաստանը քարտեզից ջնջելու մտադրություն: Բայց մի՞թե դա կարող ենք ընդունել որպես ճշմարտություն:

Մեկ այլ կարևոր պատճառ էլ, բնականաբար, հողի և ուժի հարաբերակցությունն է: Հողը ուժով է վերցվում: Իսկ Հայաստանի ուժը ակնհայտ է: Այսօրվա ուժային հավասարակշռության տեսանկյունից Թուրքիան և Հայաստանը անհամեմատ տարբեր են: Հողային մտագարության հետ կապված կարող ենք սահմանել հետևյալը. հայերի հետ կապված Թուրքերի հողային մտագարությունը ոչ թե իրական, այլ շինծու և քաղաքականացված մի պարանոյա է:

Իսկ մտագարության երկրորդ սյունը ձևավորվում է փոխհատուցման երկյուղով: Այդ վախը միևնույն ժամանակ իր մեջ ընդհանուր մեղավորության հոգեբանություն է կրում: Հետևանքը

եղավ այն, որ գնացողների ունեցվածքը մնացողների մեջ բաժանվեց: Ահա սա էլ բավական է ընդհանուր մեղավորության լռությունը բացատրելու համար: Անշուշտ, պատահականություն չէր տարածաշրջանում Ազգային բանակի կողմից իրականացված հիմնականում հայերի տեղահանությունը: Այս հանգամանքը կարևորում են որոշ պատմաբաններ և ընդգծում՝ «հայերը կարող են վերադառնալ» մտավախությունը որպես զենք է օգտագործվել թե՛ անցյալում, թե՛ մեր օրերում: Ճիշտ որ, դա լավ օգտագործվող զենք է, որը կիրառվում է նաև այսօր: Ավելի ուշ՝ հանրապետության շրջանում, Անատոլիայում շարունակվող «հայկական հետքերը ջնջելու գործողության» հետևում թաքնված հիմնական մտավախությունը սա է՝ չթողնել ոչ մի հետք, որպեսզի նրանք չկարողանան ասել՝ «սա մերն է»: Այլ կերպ ասած՝ իսպառ վերացնել բոլոր ապացույցները: Պարզ է նաև, որ այդ ապացույցների կամ էլ հետքերի՝ աչքի առաջ շարունակաբար լինելու հանգամանքը հոգեբանորեն խանգարում է նրանց, ովքեր ապրում են այդ վայրերում: Դա կարող է ստիպել այդ մարդկանց հաշվի նստել իրենց խղճի հետ:

Սակայն կարող ենք մտածել, որ «փոխհատուցման մտագարությունը» և «հողային մտագարությունը» անհիմն չեն: Քանի որ այս խնդիրը Թուրքիայի կողմից ավելի շատ ընկալվում է որպես իրավական հարց: Ակներև է, որ Թուրքիան այն խառը ժամանակաշրջանում իր հրապարակած տարբեր օրենքներով ձեռնարկել էր իրավական միջոցներ: Ամփոփ ասած՝ դրանք հայտնի ժամանակամիջոցների համար հետադարձ ուժ ունեցող օրենքներ էին, և, բնականաբար, այդ ժամանակահատվածում չվերադարձողները, համաձայն օրենքի, զրկվեցին իրենց իրավունքներից: Գուցե սա չի հակասում միջազգային իրավունքի նորմերին: Բայց եթե քննարկենք այս խնդրում իրենց տուժող կողմ համարող մարդկանց՝ ցանկացած պահի իրավական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունքը, ապա հարկ է նշել, որ երևույթը

չպետք է ունենա միայն իրավական մոտեցում: Հիմնականում անհրաժեշտ է ցուցաբերել բարոյական մոտեցում:

Բարոյական մոտեցման մանրամասներին հանգամանորեն կանդրադառնանք «Ի՞նչ պետք է անել» բաժնում: Փոխհատուցման մտագարության մասին առայժմ սահմանափակվենք այսքանով: Հայերի հետ կապված թուրքերի փոխհատուցման պարանոյան, ըստ էության, անլուծելի խնդիր չէ: Սրա լուծումը գտնելու համար պարտադիր չէ վճարել փոխհատուցում: Ավելի շատ բանական ու բարոյական նախաձեռնություններով պետք է հանդես գալ: Թուրքիայի և Հայաստանի միջև փոխադարձ համերաշխության և համագործակցության մթնոլորտում իրականացվելիք համատեղ նախագծերը կողմերին հնարավորություն կընձեռեն ժամանակի ընթացքում հասկանալ, թե ինչ է նշանակում փոխհատուցման ակնկալիք, և թե ինչ՝ փոխհատուցման մտագարություն:

Արդյունքում հայ-թուրքական հարաբերությունների չգոյությունը փոխադարձաբար սնող հոգեխեղումն ու մտագարությունը չպետք է անտեսել: Պետք է ընդունել, որ թուրքական ազգային ինքնության մեջ հայկական մտագարությունը հիմնական շաղախներից է... Հայերը բոլորից տարբեր են և գտնվում են ամենախորքում... Այս մտագարության կամ էլ տաբուի վերացումը կարող է ցնցել ինքնությունը, նույնիսկ որոշ իմաստով փլուզել, որովհետև այդ տաբուն տեղ է զբաղեցնում ինքնության կառույցի հենց հիմքում: Այդ պատճառով էլ, երբ ի հայտ են գալիս այս և նմանօրինակ տաբուներ, ինքնությունը պետք է զգայուն լինի, և ինքնապահպանմանը միտված ջանք գործադրվի: Հայերի որդեգրած հակաթուրքական քաղաքականությունն այդ զգայունությունից հեռու է: ԱՍԱԼԱ-ի անցյալում իրականացրած ահաբեկչական հարձակումները... Հայերի՝ Հայոց ցեղասպանության փաստի միջազգայնացման ջանքերը և որոշ հատվածների հողային ու փոխհատուցման պահանջները... Այս ամենը Թուրքիայում առկա հայկական մտագարությունը նվազեցնելու փոխարեն ավելացնում է այն:

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ... Ի՞ՆՉ ՊԵՏՔ ՉԷ ԱՆԵԼ...

Դերակատարներ... Դերեր... Նախապատվություններ...

Այսօր երկու կողմում էլ կան ազգայնական մարգինալ հատվածներ, որոնք անհանգստանում են «Թուրք» և «Հայ» բառերի կողք-կողքի լինելու կապակցությամբ՝ բացասաբար ազդելով լուռ մեծամասնության ճակատագրի վրա: Եվ ցավոք, մինչ օրս նրանք այդ հարցում որոշիչ դեր են խաղացել: Հայ-Թուրքական երկխոսության ուղղությամբ մի շարք նախաձեռնություններ երկուստեք ծայրահեղական հատվածների կողմից միշտ կացնահարվել են: Միմյանցից սնուցվող և հիմնականում մեկը մյուսով գոյատևող ծայրահեղ ազգայնական հատվածների համար ասպարեզն այլևս դատարկ չպետք է թողնել:

Նրանք «Հայ» և «Թուրք» բառերը միասին կիրառելուց եթե խուսափեն էլ, մեկ է, ճակատագիրն այս երկու ժողովրդին նույն աշխարհագրական գոտում, կողք-կողքի ապրելու է դատապարտել. այլընտրանք չկա...

Երկու ժողովուրդների միջև կրկին նորմալ հարաբերություններ հաստատել կարողանալը դարձել է ժամանակի հրամայական, և այն պետք է պարտադրվի: Այո, «պետք է պարտադրվի», քանզի այդ հարաբերությունների վերականգնումը բնավ էլ հեշտ չի թվում: Նախ և առաջ, հարաբերությունները բարդացնող պատճառները միայն Թուրքերի և հայերի կամքով չեն սահմանափակվում: Կան նաև մի շարք կողմեր, ազդեցության գործոններ և դերակատարներ: Հայկական հարցը սկսեց արծարծվել 19-րդ դարի

կեսերից, և կարող ենք տեսնել, որ այդ ժամանակ հարցի կողմեր հանդիսացող դերակատարները մինչ օրս էլ խաղում են նույն դերը: Ի լրումն սրա, կարելի է տեսնել նաև նոր դերակատարների:

ԽՍՀՄ-ի փլուզումից անմիջապես հետո անկախ հռչակված Հայաստանի Հանրապետությունը, ցավոք, իր ներքին քաղաքական հուզումների և հարևանների հետ դեռևս չլուծված պատմական հարցերի պատճառով ոչ մի կերպ չկարողացավ հասնել ցանկալի հանդարտության: Անկախությունից անմիջապես հետո ծագած ղարաբաղյան հակամարտության խնդիրը վտանգում է Հայաստանի ապագան: Արևելքից Ադրբեջանի, արևմուտքից էլ Թուրքիայի շրջափակումը չի թողնում Երևանին հանգիստ շունչ քաշել: Հյուսիսային հարևան Վրաստանն էլ, զբաղված լինելով իր ներքին խնդիրներով, Հայաստանին հասկացնում է, որ իրենից պետք չէ ավելին սպասել: Հայաստանի միակ հարևանը, որ նրան ձեռք է մեկնում, հարավում գտնվող «մահմեդական մոլլաների երկիր» Իրանն է: Այն ժամանակվա դերակատարներից Ռուսաստանի՝ տարածաշրջանում ունեցած ազդեցությունը անփոփոխ ձևով շարունակվում էր, մինչդեռ ԽՍՀՄ-ի անկումով անկախացող պետությունների արտաքին քաղաքականության մեջ նկատվում են ճկուն որոնումներ և տարածաշրջանում «արևմտյան ուժերի» բազմակողմանի ազդեցություն: Ռուսաստանից անջատված մյուս պետությունների նման Հայաստանն էլ նրա հետ դեռևս կապված է ոչ միայն բարոյական, այլ նաև ռազմական ու տնտեսական տեսանկյունից, բայց միևնույն ժամանակ շարունակում է սիրախաղը Եվրամիության և Միացյալ Նահանգների հետ: 19-րդ դարում տարածաշրջանում ամենաթույլ դերակատարներից ԱՄՆ-ն այսօր արդեն դարձել է ամենազորեղը: Եվրոպան էլ այս անգամ հանդես է գալիս ոչ թե միմյանց հետ մրցակցող առանձին պետությունների ձևով, այլ Եվրամիություն կոչվող միացյալ կառույցի դիրքերից՝ օրեցօր ուժեղացնելով տարածաշրջանում իր ազդեցությունը և ընդլայնելով հետաքրքրությունների շրջանակը:

Տարածաշրջանում հզորների հետաքրքրությունները կենտրոնացած են Թուրքիայի և Հայաստանի միջև առկա խնդրի վրա: Պետք է խոստովանել, որ վերջին 15 տարիների ընթացքում ԱՄՆ-ի կողմից պաշտոնական և ոչ պաշտոնական խողովակներով Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման գործընթաց սկսելու համար գործադրվող ջանքերն այնքան էլ արդյունավետ չեղան: Ստամբուլում կայացած ՆԱՏՕ-ի վերջին գագաթնաժողովում, հաշվի առնելով Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության գործընթացը, հայ-թուրքական հարաբերությունների բարելավման հարցն ավելի շատ հանձնարարվեց Եվրամիությանը: Իսկ ԵՄ-ն էլ Թուրքիայի և Հայաստանի նկատմամբ սկսեց իրականացնել վերահսկողություն, ինչն էլ հարաբերությունների հաստատումը հեշտացնելու փոխարեն ավելի դժվարացնում է, որի պատճառները տարբեր են. և՛ անցյալում, և՛ այսօր Արևելքի նկատմամբ Արևմուտքի ունեցած հետաքրքրությունը Թուրքիան ընկալում է որպես միջամտություն, ինչն էլ առաջացնում է ազգայնականների հակազդեցությունը: Իսկ Արևմուտքը, անտեսելով դրանք, շարունակում է անցյալի իր ամբարտավան կեցվածքը: Սա ապացուցելու համար մի օրինակն անգամ բավական է. Եվրախորհրդարանում, Ֆրանսիայի Սենատում, Գերմանիայի Բունդեսթագում կամ էլ այլ երկրների քաղաքային և տեղական խորհուրդներում «Հայոց ցեղասպանության» վերաբերյալ ընդունվող ցանկացած որոշում Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունները մեղմելու փոխարեն ավելի շատ լարում էր:

Բոլոր այս դերակատարներին միացավ նաև բավական ազդեցիկ, հայությանը վերաբերող բոլոր հարցերի ճակատագիրը որոշող նոր դերակատար՝ հայկական սփյուռքի ակտիվ հատվածը: Այդ ակտիվությունը պայմանավորված է Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Եվրոպայի հայկական համայնքների գոյությամբ: Այդ երկրներում հայկական սփյուռքը կարող է խոչընդոտել Թուրքիա-Հայաստան հարաբերությունների հաստատմանն ուղղված անկեղծ ջանքերը,

քանի որ սփյուռքի ակտիվիստներն իրենց առջև չունեն հայ-թուրքական հարաբերությունների բարելավման «խնդիր»: Ընդհակառակը, այդ հատվածներում իշխում է այն համոզմունքը, որ նրանք, ովքեր փորձում են բարձրացնել այդպիսի խնդիր, վնասում են «հայ դատին»: Դրանից բացի, սփյուռքի այդ ակտիվությունը ազդում է ոչ միայն տվյալ երկրի, այլև Հայաստանի արտաքին քաղաքականության վրա:

Վերջապես «ի՞նչ պետք է անել» հարցի պատասխանը գտնելու համար օգտակար է, որպեսզի մենք հաղորդակից լինենք տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներին: Մերձավոր Արևելքի հարցը օրվա գլխավոր խնդիրն է. հակամարտության կամ խաղաղության գործընթացները հիմնականում այստեղ են կենտրոնացած: Կովկասում առկա զարգացումներն ու փոփոխություններն այժմ երկրորդ պլան են մղված, որի հետևանքով դրանք որոշ չափով ընթանում են իրենց բնականոն հունով: Իսկ Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների հարցը թողնելով իր հունի մեջ, ըստ էության, թողնվում են բախտի քմահաճույքին: Հարաբերությունների ընթացքն ավելի շատ սառեցվեց Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության գործընթացով, և միաժամանակ հետաձգվեց բանակցային գործընթացը: ԵՄ-ի Եվրոպական հարևանության ծրագիրը, որը մենք կարող ենք բնութագրել որպես «Թուրքիայի միջոցով եվրոպականության» տարածման նախագիծ, «Կովկասի երեք փոքրիկ հանրապետություններին»՝ Հայաստանին, Ադրբեջանին և Վրաստանին, չնորհելու էր հարևանության հատուկ կարգավիճակ, որն էլ միմյանց նկատմամբ պարտավորեցնելու էր Թուրքիային և Հայաստանին: Այս քաղաքականությունը, հասկանալի և ընդունելի լինելով հանդերձ, անբավարար է թվում:

ԵՄ-ը, ԱՄՆ-ը և Ռուսաստանն ունեն ստանձնելու շատ ավելի կարևոր և կենսական նշանակության պատասխանատվություններ, որոնք ոչ միայն այսօր, այլ նաև անցյալում խաղացած դերի արժեքն են: Իսկ առանց այդ գինը վճարելու հնարավոր չէ նպաս-

տավոր ներդրում ունենալ թուրք և հայ ժողովուրդների միջև խաղաղության հաստատման գործում: Այդ պատճառով էլ «ի՞նչ պետք է անել» հարցը հարկավոր է վերաձևակերպել «ով ինչ պետք է անի»-ի, և ավելի ճիշտ է առանձին-առանձին արժևորել յուրաքանչյուրի բաժին պարտավորությունը:

«Ով ինչ պետք է անի» հարցի հիմնական կողմերը անշուշտ հայերն ու թուրքերն են: Իրական դերակատարները նրանք են, և ասպարեզ ուրիշներին չպետք է թողնել: Հակառակ դեպքում, ուրիշ դերակատարների առկայությունը, հարցի լուծումը էլ ավելի խրթին դարձնելով, կարող է վերածել այն գորդյան հանգույցի: Թուրքերի և հայերի՝ ժամանակակից մեթոդին առավելություն տալն արդեն անխուսափելի է: Իսկ այդ մեթոդը հենց կողմերի երկխոսությունն է: Այս շրջանում ոչինչ չպետք է խանգարի այդ երկխոսությանը:

Երկու կողմերի մարգինալ հատվածները երկար ժամանակ համառորեն աղավաղում էին այդ երկխոսության իմաստը և անգամ չէին ընդունում դրա գոյությունը: Հայկական կողմի նման հատվածների՝ «1.5 մլն զոհերի պատճառով ոչ մի երկխոսություն էլ չի կարող լինել» տեսակետը երկար ժամանակ շրջանառվեց: Իսկ երկխոսության կողմնակիցներին մեղադրում էին դավաճանության մեջ: Մինչդեռ դիալոգի կողմնակիցները ո՛չ ժխտողներ էին, ո՛չ էլ դավաճաններ: Նրանք ուղղակի ապագայում առանց խնդիրների հարաբերություններ հիմնելու ջատագովներ էին:

Ահա երկխոսության կողմնակիցներից ֆրանսիացի մտավորական Ժան Կլոդ Քեբափչյանի պատասխանը այդ հատվածներին.

«Իհարկե, զոհերի հիման վրա ոչ մի երկխոսություն չի կարող ծավալվել: Ըստ էության, ոչ ոք էլ չի ցանկանա նման երկխոսություն: Մեր ուզածը ոչ թե մահվան, այլ կյանքի վրա հիմնված երկխոսությունն է: Եթե տաբուն վերացնելու, լռությունը խախտելու, մեր հիշողությունը միասին վերականգնելու ճանապարհը

երկխոսությունը չէ, ապա ի՞նչն է: Արտաքին ճնշո՞ւմը: Այս հարցին թե՛ հայերը, թե՛ թուրքերը անկեղծ պատասխան պետք է տան: Մի՞թե ձեզ զոհացնում է այս ճանապարհով մինչ օրս մեր ձեռք բերած արդյունքը»:

Մինչև այսօր բանակցություններին տուրք չտվողը կամ էլ դրանից խուսափողները, անշուշտ, միայն հայկական մարգինալ հատվածները չեն: Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը մինչև երեկ, իսկ որոշ հարցերում նույնիսկ մինչև այսօր, հեռու է երկխոսություն սկսելուց: Չնայած մեր օրերում երկխոսություն բառը հաճախ է կիրառվում, ուշադրությունից չի վրիպում երկխոսության պայմանական լինելու հանգամանքը: Թուրքիան դիալոգ տերմինը կիրառելուց առաջ խոսում է «հաշվի նստելուց»... պատմության հետ հաշվի նստելուց:

«Հարցի կարգավորումից հետո նոր միայն հարաբերություն կհաստատենք» մոտեցումը, որը կարևորում է պատմության հետ հաշվի նստելու գաղափարը, երկրորդ պլան մղելով երկխոսության և հարաբերությունների հաստատումը, անորոշ կացության մեջ է գցում և երկխոսությանը դեմ լինելն այլ կերպ է արտահայտում: Ասելով, թե «նախ թող ընդունեն ցեղասպանությունը, հետո...», կամ էլ՝ «նախ ցեղասպանությունը ճանաչել տալուց թող հրաժարվեն, հետո...», երկու կողմերն էլ շատ լավ գիտակցում են, որ իրենցից և ոչ մեկը չի զիջելու: Խնդրո առարկան այն իրականությունն է, որ տեղի ունեցած այս դեպքերը հայերն ընկալում են որպես ցեղասպանություն: Հայությունը երբեք չի հրաժարվի իր այդ հոգեվիճակից: Իսկ նրանք, ովքեր ասում են, թե «նախ եկեք պարզենք պատմությունը, ապա նոր հարաբերություններ հիմնենք», շատ լավ գիտեն, որ հայերի համար պատմական հարցի լուծումը մանրուք չէ, դրանով իսկ անորոշության են մատնում հարաբերությունների հեռանկարը: Մինչդեռ երկխոսություն և հարաբերություն ասվածը ենթադրում է նաև նույն այդ պատմական հարցի լուծումը:

Երկխոսությունից ոչ պակաս կարևոր է երկխոսության ոճը: Օրինակ՝ ուշադրավ է արտգործնախարար Աբդուլլահ Գյուլի[1] հետևյալ հայտարարությունը. «Հարցերը լուծվելուն պես մենք տեր կկանգնենք չքավորության մեջ գտնվող 1.5 մլն հայերին: Այնտեղ ոչ ոք չի մնում, հայերը հեռանում են»: Եթե հարգարժան Գյուլի այս խոսքերը նույնիսկ լավ նպատակով էլ ասված լինեին, բացահայտորեն ցույց են տալիս, որ Թուրքիան Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցում շտապողականություն չի ցուցաբերում: Նպատակը եթե սա էլ չէ, Գյուլի ոճի մեջ կարելի է նկատել հայերի ազգային արժանապատվությունը վիրավորելու փորձ, այն է՝ «աղքատության մեջ գտնվող 1.5 միլիոն հայերին տեր կկանգնենք»: Գյուլը, մոռանալով Հայաստանի անկախ պետություն լինելու փաստը, շարունակում է «հավատարիմ հպատակին» տեր կանգնելու տիրոջ ավանդույթները:

Իրոք... Հայաստանում ժողովուրդը տնտեսական ճգնաժամ է ապրում: Գործազրկության պատճառով կին թե տղամարդ, ուրիշ երկրներում աշխատանք գտնելով և հավաքած փոքր միջոցներով Հայաստանի իրենց հարազատներին օգնելով, հազիվ կարողանում են գոյատևել: Սակայն 4 հազար տարվա պատմություն ունեցող և այսօր այդ վիճակին հասած հայ ժողովրդի ողջ պատմական անցյալը մի կողմ թողնել և նրան գնահատել միայն այսօրվա իրավիճակի տեսանկյունից բավական անարդար է: Բայց հայ ժողովուրդը, անգամ շրջափակման պայմաններում, արժանապատվորեն փորձում է հաղթահարել տնտեսական այդ ճգնաժամը: Նրանք ոչ մեկից օգնություն չեն խնդրում և չեն էլ սպասում, որ ինչ-որ մեկը իրենց տեր կանգնի: «Ազգային արժանապատվություն» ասվածը ամեն ժողովրդի ազնվագույն հատկանիշներից է, որը հենց այսպիսի դժվարին իրավիճակներում է արտահայտվում: Իսկ պետությունների, ինչպես նաև ազգերի միջև հիմնվելիք երկխոսության լեզուն այս աստիճան նվաստացուցիչ չպետք է լինի:

Սեփական ազգային արժանապատվության նկատմամբ հարգանքը պայմանավորված է մյուսի ազգային արժանապատվության նկատմամբ դրսևորած ակնածանքով: Եթե ուրիշի հանդեպ հարգանք չցուցաբերենք, մեր նկատմամբ հարգալից չեն լինի: «Տեր կանգնելով» «հարաբերություն հաստատելու» և «օգնելու» մասին արտահայտությունները հակառակ կողմի արժանապատվությանը մի տեսակ կարևորություն չտվող խոսքեր են: «Անհրաժեշտ է երկխոսություն սկսել» արտահայտությունը դեռ վաղուց կիրառվում է տարբեր քաղաքական գործիչների և գործարարների կողմից: Երբեմն հարաբերությունները միայն փողի և տնտեսական շահի տեսանկյունից են կարևորվում: Երկխոսությունը և հարաբերությունները միայն տնտեսական շահերով արժևորելը արդեն դարձել է ժամանակակից մոտեցում: Մինչդեռ Թուրքիայի և Հայաստանի պես անցյալի ծանր հարցերով բարդույթավորված պետությունների հարաբերություններում բարոյական մոտեցումն առավել կարևոր է:

Իսկ երկու ժողովուրդների միջև հարաբերությունների բարելավման և երկխոսության ծավալման գործընթացը պետք է սկսվի հենց բարոյական նվաճումների շնորհիվ: Պատմությունից ծանր ժառանգություն ստացած և մինչ օրս միմյանց բավական անվստահ աչքերով նայող երկու ժողովուրդների ապագայի ամենամեծ երաշխիքը կլինի հարաբերությունների կարգավորման արդյունքում միասնաբար վերանվաճվելիք վստահությունը:

Հարաբերությունների բնականոնացում. հենց սա է իրական լուծումը: Ապագան որոշողն էլ երկու ժողովուրդների փողոցային առևտրում, սրճարանային զրույցներում սկիզբ առած երկխոսությունն է: Այդ խոսակցությունները, «ցեղասպանության» մասին քննարկումները կնպաստեն երկու ժողովուրդների՝ միմյանց նորից բացահայտելուն: Հարաբերությունների և երկխոսության զարգացումը հիմնականում պայմանավորված է մի կողմից երկու

[1] Աբդուլլահ Գյուլ - 2007-ից Թուրքիայի Հանրապետության նախագահ (Ծ.Թ.):

պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ, սահմանների բացմամբ, մյուս կողմից՝ քաղաքացիական շփումներով:

Այս իմաստով մեծ պարտականություն է ընկնում Թուրք և հայ մտավորականների, հասարակական կազմակերպությունների ուսերին:

Հարկ է ընդունել, որ մինչ օրս Թուրք և հայ մտավորականների, հասարակական կազմակերպությունների գործադրած այս ջանքերն անբավարար և անարդյունք են եղել:

Երկու ժողովուրդների հարաբերությունների կարգավորումը չպետք է թողնել միայն երկու պետությունների պաշտոնական շփումներին կամ շփումների բացակայությանը: Հիմա, երբ այս երկու պետությունները պաշտոնական մակարդակով միմյանցից մեկուսացված են, անհրաժեշտ է զարկ տալ ժողովրդական դիվանագիտությանը:

Փականի առաջին ծածկագիրը.
Սահմանի բացում...
Դիվանագիտական հարաբերությունների հաստատում...

Թուրքիայի և Հայաստանի սահմանների բացման հետ կապված պետք է ասել, որ երկու կողմում էլ սահմանների բացման կողմնակիցները մեծամասնություն են կազմում: Անշուշտ, երկու կողմում էլ չցանկացողներ կան, սակայն եթե նրանք այս պահի համար որոշիչ էլ լինեն, միևնույն է, մեծամասնություն չեն կազմում: Թուրքական կողմում սահմանի փակ մնալու կողմնակիցների մոտեցումները տարաբնույթ են: Ոմանք չեն կարողանում հանդուրժել Հայաստան պետության գոյությունը որպես այդպիսին, ոմանք էլ սահմանի բացումը «արմատական Քոչարյանի» ներքին քաղաքականության համար հնարավոր մի հաղթաթուղթ են դիտում: Մի որոշ հատված էլ կարծում է, որ սահմանը փակ պահելով կարելի է ճնշում գործադրել Հայաստանի վրա Ղարաբաղի և ցեղասպանության հարցերում: Իսկ Հայաստանում էլ կա մտավախություն, որ մեծ ձուկը կարող է կուլ տալ փոքր ձկանը: Նրանք կարծում են, թե 70 միլիոնանոց Թուրքիայի կողմից Հայաստանի նվաճումը ֆիզիկապես ու տնտեսապես անխուսափելի է: Թուրքիան տնտեսապես անհամեմատ հզոր է: Հայաստանը նրան վաճառելու ոչինչ չունի, ավելի շուտ նրանից գնելու բան ունի: Եվ այդ իմաստով սահմանի բացումը կարող է օգտակար լինել միայն Թուրքիայի համար: Մյուս կողմից էլ երկու հատվածներում մեծամասնությունը կարծում է, որ սահմանների բացումը օգտակար կլինի: Անգամ Թուրքիայի սահմանամերձ շրջանների ԱՇԿ-ին հարող տեղական ինքնակառավարման մարմիններն են այդ կարծիքին: Այստեղի բնակչությունն ամեն տարի տարբեր նախաձեռնություններով պահանջում է սահմանների բացումը: Վերջին նախաձեռնությունը Կարսի բնակչության հավաքած և խորհրդարան ներկայացրած 50 հազար ստորագրություններն էին: Չնայած այս ամենին, սահմանները դեռևս փակ են:

Այն դեպքում, երբ Թուրքիայի հետ հարաբերությունների բացակայության պայմաններում Հայաստանը հայտարարում է, որ «պատրաստ է առանց նախապայմանների հարաբերություններ հաստատել», Թուրքիան առաջ է քաշում երեք պայման՝ «հեռանալ Ղարաբաղի գրավյալ տարածքներից», «հրաժարվել ցեղասպանության ճանաչման գործընթացից» և «վերահաստատել Կարսի պայմանագիրը»: «Հիմա սրանցից ո՞րն է առաջնային» հարցի պատասխանը՝ կապված ժամանակի և օրակարգի հետ, տարբեր է. մի օր Կարսի պայմանագիրն է, մի ուրիշ օր՝ Ղարաբաղի հիմնախնդիրը, իսկ ցեղասպանության հարցը միշտ էլ կա ու կա: Մինչդեռ հայ-թուրքական հարաբերությունների վրա դրված փականը, մեզ հայտնի մի շարք պատճառներով, հնարավոր չէ բացել բանալիի մեկ պտույտով:

Սա իրականում բարդ ծածկագիր ունեցող փական է: Ուստի այստեղ օգտագործվելիք բանալին պտույտ առ պտույտ պետք է բացի այդ կողպեքը: Յուրաքանչյուր ծածկագրի գաղտնագրումը հեշտացնելու է հաջորդի լուծումը, սակայն առաջինների շարքում չպետք է տեղ զբաղեցնի «պատմությունը»: Նրանք, ովքեր կարծում են, թե հարաբերությունները կարելի է հիմնել միայն պատմական խնդիրների լուծումից հետո, սխալվում են: Դա մոլորություն է: Բանալիի առաջին պտույտը Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումն ու սահմանների բացումը պետք է լինի: Դրանից հետո ավելի կհեշտանա Ղարաբաղի, պատմության, ինչպես նաև սահմանների հետ կապված խնդիրների լուծումը: Հարաբերությունների հաստատման առաջին քայլը պետք է լինի ոչ թե պատմության հետ կապված խնդրի հաղթահարումը, այլ հենց հարաբերությունների հիմնումը, ինչն էլ կնպաստի այդ խնդիրների լուծմանը:

Այստեղից հետևություն. Կարսի պայմանագրի վերահաստատումը չի կարող լինել փականը բացելու առաջին ծածկագիրը:

Որոշ փորձագետներ գտնում են, որ եթե առաջընթաց գրանցվի «Կարսի պայմանագրի վերահաստատման» հարցում, ապա մնացած հարցերը կդադարեն լինել նախապայման: «Ղարաբաղի» և «ցեղասպանության» հարցերն էլ ժամանակի ընթացքում վերջիվերջո կլուծվեն:

Այդ մոտեցման տրամաբանությունն այն է, որ Հայաստանի կողմից Կարսի պայմանագրի վերահաստատումը կդառնա փակ դռները բացելու առաջին բանալին: Հենց այդ թեման էր, որ քննարկվեց վարչապետ Թայիփ Էրդողանի[1] ԱՄՆ և Ռուսաստան կատարած այցերի ժամանակ: «Մենք Հայաստանի հետ ցանկանում ենք հաշտվել, սակայն նրանք նույնիսկ չեն ուզում ճանաչել

[1] Ռեջեփ Թայիփ Էրդողան - Թուրքիայի Հանրապետության ներկայիս վարչապետ և «Արդարություն և զարգացում» իշխող կուսակցության առաջնորդ (Ծ.Թ.):

1921թ. Կարսի պայմանագիրը: Թող նրանք մի քայլ անեն ընդառաջ, մենք երկուսը կանենք»,- հայտարարել էր Էրդողանը: Անշուշտ, այստեղ կարևոր հարցը սա է. Թուրքիայի հետ հարաբերություն հիմնել ցանկացող Հայաստանը ինչու՞ չի օգտագործում այս բանալին: Հայաստանի դիրքորոշումն այս հարցում ո՞րն է:

Հայաստանի կեցվածքը հասկանալու համար նախ պետք է տեսնենք, թե իրենից ինչ է ներկայացնում Կարսի պայմանագիրը: Կարսի պայմանագիրը ստորագրվել է 1921թ. հոկտեմբերի 13-ին մի կողմից Թուրքիայի Ազգային մեծ ժողովի, մյուս կողմից Խորհրդային Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, ինչպես նաև Ռուսաստանի միջև: Այդ պայմանագրով հստակեցվել են Թուրքիայի այսօրվա արևելյան սահմանները: Կարսի պայմանագիրը վերահաստատելու Թուրքիայի պահանջը պատճառաբանվում է նրանով, որ Հայաստանը պատշաճ հարգանք ցուցաբերի Թուրքիայի սահմանների նկատմամբ, և որ վերջնականապես պարզ դառնա, թե արդյո՞ք Հայաստանը ունի տարածքային պահանջներ: Թուրքիան այս պահանջով փորձում է հասկանալ Հայաստանի իրական նպատակը: Իսկ Հայաստանի տեսանկյունից Թուրքիայի այս համառությունը այլ բան չէ, քան «գործը տանել դեպի անդունդ»: Ասվածի բովանդակությունը հետևյալն է. «Հայաստանի Հանրապետությունը անկախությունից ի վեր ո՛չ Տեր-Պետրոսյանի, ո՛չ էլ Քոչարյանի օրոք Կարսի պայմանագիրը չճանաչող գրավոր կամ բանավոր հայտարարությամբ երբեք հանդես չի եկել: Կարսի պայմանագիրը ստորագրվել է 1921թ. այն ժամանակվա իշխանությունների կողմից, 1922 թվականին էլ՝ հաստատվել կողմերի խորհրդարաններում: Հաստատման մասին որոշումներն էլ հանձնվել են կողմերին: Եվ քանի որ գոյություն չունի այնպիսի մի կետ, որը պահանջի որոշ ժամանակ անց վերահաստատել այն, այսօր կողմերից մեկի՝ այդ պայմանագիրը վերահաստատելու պահանջն անիմաստ է: Բացի այդ, գոյություն ունի փաստացի մի դիրքորոշում, ըստ որի, կողմերը ճանաչում են միմյանց սահման-

ները: Ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ Թուրքիայի կողմից սահմանները խախտելու փորձի մասին որևէ խոսք չկա: Սա էլ պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ գործում է սահմանների հետ կապված պայմանագրի համապատասխան կետը»:

Հայաստանը, քննարկելով պայմանագրի՝ սահմանների հետ կապ չունեցող որոշ դրույթներ, պնդում է, որ թուրքական կողմը չի գործում համաձայն Կարսի պայմանագրի: Ասել կուզի. «Կողմերը 1922թ. կրկին հավաքվեցին Թբիլիսիում և որոշում ընդունեցին պայմանագրի դրույթների կիրառման մասին: Համաձայն դրա, կողմերը պարտավորվեցին բացել դեսպանություններ և հյուպատոսություններ: Եվ դա արվեց: Մինչև 1924թ. Երևանում գործում էր Թուրքիայի դեսպանատունը, իսկ Գյումրիում՝ հյուպատոսարանը: Կարսում էլ Հայաստանն ուներ իր հյուպատոսարանը: Սակայն 1924թ. Թուրքիան դադարեցրեց հարաբերությունները: Այսպիսով, Կարսի պայմանագրի հիմնական դրույթներից մեկը Թուրքիան խախտեց: Կարսի պայմանագրի մեկ այլ դրույթով նախատեսվում էր, որ Թուրքիան չպետք է փակի երկաթգիծը և պետք է հիմնվեն երկկողմ առևտրային հարաբերություններ: Այսօր այդ ամենը չկիրառողը հենց Թուրքիան է: Այդ իսկ պատճառով դեռ պետք է պարզել, թե ով է խախտում Կարսի պայմանագիրը»:

Թուրքիան առաջիններից էր, որ ճանաչեց Հայաստանի անկախությունը: Դրանով իսկ դիվանագիտական հարաբերություններ հիմնելու ուղղությամբ տևական երկկողմ բանակցություններ սկսվեցին: Կարսի պայմանագրի վերահաստատումն այդ օրերին Թուրքիայի կողմից նույնպես քննարկվում էր, սակայն համապատասխան մի արձանագրությամբ այդ թեման հիանալիորեն հաղթահարվում էր: Բայց երբ եկավ արձանագրությունը ստորագրելու պահը, հայկական ուժերը գրավեցին Քելբաջարը, և Թուրքիան անմիջապես դադարեցրեց բանակցությունները: Ղարաբաղի պատերազմով Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերություններում ճեղք բացվեց: Հետո փակվեցին

սահմանները, և այլևս հնարավոր չեղավ լինել նախկինի պես:

Ի՞նչ էր իրենից ներկայացնում այդ արձանագրությունը: Երկու պետություններն էլ պատրաստվում էին համագործակցության, հայտարարում, որ որևէ զգուշավորություն չկա նախկինում ստորագրված բոլոր պայմանագրերի նկատմամբ, և հարկ չկա առանձին-առանձին վերանայել դրանք: Ահա Կարսի պայմանագիրն էլ դրանցից մեկն էր և դադարելու էր խնդրահարույց լինելուց: Սակայն այսօր, ցավոք, պատրաստված, բայց չստորագրված այդ արձանագրությունը այդպես էլ իրականություն չի դառնում: Թուրքիան համառ պահանջատերի կեցվածք է ընդունել Հայաստանի ներքին քաղաքականության տեսանկյունից նրբանկատություն պահանջող հարցում, ինչն էլ այն լուծելու փոխարեն ավելի է բարդացնում: Նախ հարկավոր է հասկանալ այդ հարցի էությունը: Կարսի պայմանագիրը Հայաստանի անելանելիության, պարտության ու տարածքային կորստի մասին վկայող փաստաթուղթ է: Եվ շատ բնական է, որ հայության շրջանում այդ պարտությունը չընդունողները ամեն հնարավոր պահի հանդես գան ազգայնական քաղաքականության դիրքերից: Օրինակ, 1993թ. դաշնակցական մի պատգամավորի՝ ՀՀ խորհրդարանական հանձնաժողովներից մեկին արված Կարսի պայմանագիրը չընդունելու մասին օրենք ընդունելու առաջարկը մերժվեց հենց այն ժամանակվա իշխանությունների կողմից, և դա էլ այդ օրերից սկսած վերածվեց Հայաստանի հիմնական քաղաքականության:

Ի սկզբանե, ինչպես Թուրքիայի հետ ոչ կոշտ հարաբերություններ զարգացնող Լևոն Տեր-Պետրոսյանի, այնպես էլ կոշտ դիրքորոշմամբ հանդես եկող Քոչարյանի օրոք այս նուրբ հարցերի համարձակ քննարկումների և միևնույն ժամանակ ներքաղաքական հուզումների ականատեսը դարձանք: Լևոն Տեր-Պետրոսյանը Թուրքիայի հետ ոչ կոշտ հարաբերությունների պատճառով անգամ կորցրեց իր քաղաքական հեռանկարը: Իսկ Քոչարյանի՝ «Թուրքիայից տարածքային պահանջ չունենք» հայտարարու-

թյունը երկրի ներսում և դրսում սուր քննադատություններ թիրախ դարձավ: Թուրքիայի՝ Հայաստանի իշխանություններին ներկայացվող Կարսի պայմանագիրը վերահաստատելու պահանջը հարցի կարգավորմանը հետամուտ հայկական իշխանությունների հանդեպ լարում է ազգայնական ուժերին: Իսկ Հայաստանը հասկանում է, որ Թուրքիան դա գիտակցաբար է անում և այդ պնդումով Հայաստանի ազգայնականների հացին կարագ քսելով՝ գործը տանում է դեպի կործանում:

Ակնհայտ է, որ Հայաստանը երկընտրանքի առջև է... Եվ Թուրքիան էլ դրա հրահրողն է: Մինչդեռ եթե երկու կողմն էլ անկեղծ են, իրականում դժվար չէ խնդիրը հաղթահարել դիվանագիտորեն: Պետք է միայն կամք դրսևորել:

Ղարաբաղյան գործոնն էլ իր հերթին 1993թ. դարձավ հարաբերությունների դադարեցման մեկ այլ պատճառ: Կովկասի ապագային սպառնացող և փոխադարձ հաշտությամբ անհապաղ լուծում պահանջող պատմական լուրջ հարց է: Այդ կարգավորման շրջանակում պետք է հաշվի առնել ժողովուրդների անկախության պահանջները, անվտանգության հարցերը և իրավունքները: Պետք է ապահովել նաև տարածաշրջանից արտագաղթածների խաղաղ տունդարձն ու խաղաղ կյանքը: Հարցի լուծման համար միջազգային նախաձեռնությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի գլխավորությամբ շարունակվում են, այստեղ կարևոր է նաև Թուրքիայի գործադրելիք ջանքը: Անշուշտ, Ղարաբաղի հիմնախնդիրը հիմնականում Ադրբեջանի և Հայաստանի միջև գոյություն ունեցող հարց է: Իսկ Թուրքիայի և Հայաստանի հարաբերություններն այդ հարցով պայմանավորելն ավելի է դժվարացնում իրավիճակը: Մինչդեռ Թուրքիան, Հայաստանի հետ հարաբերություններ զարգացնելով, կկարողանա Ղարաբաղի հարցում կառուցողական դեր ստանձնել և կողմերի միջև հանդես գալ որպես միջնորդ:

Ժամանակ առ ժամանակ Թուրքիայի միջնորդության մասին

խոսքերը Հայաստանի կողմից անկեղծությամբ չեն ընդունվում, և դրա հիմնական պատճառը հարաբերությունների բացակայությունն է:

Ուշագրավ է ՀՀ ԱԳՆ ղեկավար Վարդան Օսկանյանի հետևյալ հայտարարությունը. «Անկասկած, ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի հետաքրքրությունը տարածաշրջանի նկատմամբ ավելի է կարևորվում, և պետք է ընդունել, որ Թուրքիայի դերը նույնպես շատ կարևոր է: ՆԱՏՕ-ի ռազմավարական գոտին դեպի Կովկաս առանց Թուրքիայի անհնար կլիներ: Եվ այս հավելյալ դիրքը Թուրքիայի վրա նոր պարտավորություններ է դնում: Թուրքիան և՛ ՆԱՏՕ-ի, և՛ ԵՄ-ի նոր տեսլականներում ունի կամուրջի նշանակություն: Այս նոր ռազմավարական տեսլականն ու հավատ ներշնչող միջնորդի պարտավորությունն ի կատար ածելու համար անհրաժեշտ է, որ Թուրքիան բոլոր երեք երկրների հետ էլ շատ լավ հարաբերությունների մեջ լինի: Մինչդեռ նա այդ կարգավիճակից դեռ շատ հեռու է: Այժմ անհրաժեշտ է համատեղ ուժերով ապահովել հաղորդակցման ուղիների բացումը: ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի տարածաշրջանում հարաբերության նոր տեսլականի համար այս շփման եզրերը արդեն կենսատու անհրաժեշտություն են: Օրինակ՝ այս տեսլակաների շրջանակում պետք է բացել սահմաններն ու երկաթուղային ճանապարհները: Կամուրջի նշանակություն ունեցող Թուրքիան այդ ինչպե՞ս է կամուրջ դառնալու առանց ճանապարհների բացման»:

Թուրքիա-Հայաստան հարաբերություններն այնքան են պայմանավորված Ղարաբաղյան հարցով, որ եթե Թուրքիա-Հայաստան սահմանը բացելու անհրաժեշտության մասին մամուլում երկու նախադասություն էլ գրվի, ապա Թուրքիայում ազգերի ներկայացուցիչները իսկույն կարձագանքեն: «Հայաստանի հետ եկեք լավ հարաբերություններ հիմնենք» ասող հոդվածագիրներին նամակներ են հղում՝ հիշեցնելով Հայաստանի նվաճողական քաղաքականությունն ու պահանջելով հետևյալը. «Նախ և առաջ Հայաստանը թող հրաժարվի իր նվաճողական քաղաքականությու-

նից, թող հեռանա Ադրբեջանի անբաժան մաս կազմող Լեռնային Ղարաբաղից և թող ավելի քան 1 մլն ադրբեջանցի փախստականները վերադառնան իրենց տները»: Ադրբեջանն իր այս քաղաքականությամբ հույս ունի Հայաստանին իր ճանկերի մեջ պահել Թուրքիայի օժանդակությամբ, դրանով իսկ ձգձգել Հայաստանի տնտեսական ճգնաժամը և հասնել զիջումների Ղարաբաղյան հարցում: Նա ամեն պատեհ առիթով Թուրքիային հիշեցնում է այդ մասին: Իսկ դա երբեմն անցնելով թուրք-ադրբեջանական եղբայրության սահմանները՝ կարողանում է Թուրքիայի դեմ տնտեսական շանտաժի վերածվել: Բաքու-Ջեյհան նավթամուղի հարցում Թուրքիայի գործոնը հաշվարկած հանգուցյալ Հեյդար Ալիևի «կամ սահմանադուռը, կամ խողովակը» արտահայտությունն այդ քաղաքականության ամենավառ օրինակն է:

Այնուամենայնիվ, այդ տնտեսական արգելքների քաղաքականությունը, որն ընդհանուր առմամբ ունեցավ իր արդյունքը, բավական չեղավ Հայաստանին ծնկի բերելու համար: Գուցե Հայաստանին մի որոշ ժամանակ տնտեսական ճգնաժամի ենթարկեց, գուցե կարողացավ արագացնել դեպի սփյուռք արտագաղթը, սակայն չկարողացավ արգելք լինել Հայաստանի՝ նորից ինքնուրույն ոտքի կանգնելուն: Իսկ սա ապացուցեց այդ քաղաքականության սնանկությունը: Թուրքիայի տեսանկյունից Հայաստանի հետ հարաբերություններն Ադրբեջանով պայմանավորելն աստիճանաբար կորցնում է իր նպատակահարմարությունը:

Նախ և առաջ, Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության գործընթացը չի սահմանափակվում հարևան պետության հետ սահմանները բացելով: Թուրքիան, մինչ օրս իր հարևանների հետ մի շարք դիվանագիտական, ներառյալ տարածքային խնդիրներ ունենալով, նրանց հետ սահմանները չի փակել, դիվանագիտական հարաբերությունները չի խզել: Ահա թե ինչու ղարաբաղյան հիմնախնդրի պատճառով Հայաստանի հետ հարաբերությունների բացակայությունը շարունակելն անիմաստ է: Չնայած Թուրքիայի և Սիրիայի միջև տարիներով առկա է Հաթայի հարցը, և չնայած PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանը երկար ժամանակ ապաստանում էր Սիրիայում, Թուրքիան այս երկրի հետ սահմանները չփակեց:

Նույն ձևով էլ Հունաստանի հետ չփակեց սահմանը, հակառակ այն բանի, որ կան մի շարք տարածքային խնդիրներ, ինչպես նաև կիպրական հարցը: Այս տեսանկյունից Հայաստանի դեմ դրված պայմանները հիմնականում շինծու և անիմաստ են:

Մյուս կողմից կարող ենք ասել, որ Ղարաբաղում այսօր մոտ են կանգնած խնդրի լուծմանը: Հնարավոր է և լուծվի: Քանի որ բոլոր հատվածների կողմից արդեն լիովին ընկալվել է այն, որ ղարաբաղյան հարցի կարգավորման այս երկար գործընթացը լուրջ խոչընդոտ է Կովկասի երկրների կայունության համար: Սահմանային խնդիրները առանձնապես չեն ոգևորում տարածաշրջանում ներդրում անել ցանկացողներին, ինչից էլ վնաս են կրում տարածաշրջանային երկրները: Բացի այդ, տարածաշրջանի վերաբերյալ նոր մի տեսլական ներկայացնող Եվրամիության առկայությունը կարող է արագացնել հարցերի լուծումը: ԵՄ-ի՝ Ադրբեջանի ու Հայաստանի վրա ճնշումը կարևոր գործոն է հարցի լուծման տեսանկյունից:

Տարածաշրջանում ընդհանուր շահերի գոտի ձևավորելու Եվրամիության գաղափարի՝ սահմանային հարցերից ավելի կարևոր լինելու հանգամանքն ի վերջո իշխանավորների կողմից կարողացավ ընդունվել: Ահա այսպիսի իրավիճակում Ադրբեջանով պայմանավորված Թուրքիայի քաղաքականությունը արդեն փոփոխման կարիք ունի: Նույնիսկ ուշ է արդեն:

Կողպված պատմությունը բացել ու հաղթահարել

Հայ-թուրքական հարաբերություններում հիմնական արգելքը պատմական քննարկումներն են, որոնք ի զորու չեն մոտ ապա-

գայում հաշտություն ապահովել երկու պետությունների միջև, քանի որ մտքերն ու խոսքերը փականի տակ են: Բացի այդ, պատմությունը ոչ միայն պետությունների, այլև ժողովուրդների միջև ծագած հարց է: Այդ պատճառով Թուրքիայի և Հայաստանի միջև պատմության լուծումը չի նշանակի հարցի լուծում Թուրքերի և հայերի միջև: Արդյունքում, պատմության հետ կապված պետությունների միջև ձեռք բերվելիք հաշտությունը կլինի լոկ քաղաքական, իսկ ժողովուրդների միջև հաշտությունը քաղաքական որոշումներով ձեռք չի բերվում. այն հնարավոր է ժամանակի ընթացքում բարոյական մոտեցումներով: Փոխընկալման փոփոխություն հնարավոր է միայն հարաբերությունների ու երկխոսության պայմաններում, երբ սկզբնավորվի կարգավորման գործընթաց, և տեղի տան կարծրատիպերը: Պատմությունը պետք չէ լուծել, այն պետք է հասկանալ: Իսկ հասկանալու համար ժամանակ և ջանք է հարկավոր: Սա մեկ օրում և պետական որոշմամբ լուծվելիք հարց չէ:

Պատմության կողպված լինելու պատասխանատվությունը հիմնականում չի կարելի բարդել միայն մեկ կողմի կամ էլ Թուրքերի և հայերի վրա: Պատասխանատվության իրենց մասնաբաժինն ունեն հարցում ընդգրկված կամ էլ դրան քաջատեղյակ բոլոր դերակատարները: Դրանից բացի, այդ պատասխանատվությունը միառժամանակ հետաձգվեց կամ անտեսվեց: Աշխարհի երկրները պատմական իրադարձություններին տիրապետում են միայն իրենց արխիվային տվյալներով և նախընտրում են տարիներ շարունակ լռել ու նշանակություն չտալ: Պատմության հայտնի դերակատարների՝ ֆրանսիացիների, անգլիացիների, գերմանացիների, ավստրիացիների և ամերիկացիների 90 տարվա և նույնիսկ ներկայիս երկդիմի կեցվածքներն այդ անտարբերության ամենավառ օրինակն են: Ըստ երևույթին, հենց այդ պատճառով է, որ «Հայոց ցեղասպանության ճանաչման» հարցը միայն 90 տարվա վերջին երեսնամյակում կարողացավ միջազգայնացվել:

Պատմության կողպված լինելու պատճառները, անշուշտ, պետք է մեկ առ մեկ ուսումնասիրել, սակայն անկախ պատճառներից այս պատմության փականը բացելը և հաղթահարելը մեր առջև դրված խնդրի երկու հիմնական բաղկացուցիչներն են: Իսկ Թուրքիայում մինչև վերջերս տաբու էր հենց այդ կողպվածությունը: Թուրքիան սեփական պատմության հետ հաշվի նստելու, հատկապես «Հայոց ցեղասպանության» հարցում սկզբից ի վեր մի կողմ թողնելով հարթ ճանապարհը՝ նախընտրեց խորդուբորդ ճամփան: Բացի այդ, նա չեղավ այդ խորդուբորդ ճանապարհի վերելքների ու վայրէջքների հիմնական որոշողը: Անկախ օրվա հրամայականից նա բավարարվեց միայն պաշտպանական միջոցներ ձեռնարկելով:

Երբ իրավիճակը բարդացավ, պատասխանատուներին հայտնաբերեցին, ձերբակալեցին և մահապատժի դատապարտեցին: Իսկ երբ լարվածությունն անցավ, նույն այդ պատասխանատուները հերոսացվեցին, և նրանց հարազատներին էլ հատուցեցին հայերից մնացած ունեցվածքով:

Եկավ օրը, երբ թեման դարձավ տաբու և թաքցվեց: Սակայն օտար պետությունների կողմից ցեղասպանության ճանաչմամբ խնդիրը վեր հանվեց:

Սկզբում կարծես այս հողերում ոչ մի հայ էլ չի բնակվել... Հետո Դոլմաբահչեի պալատի ճարտարապետը ոչ թե հայազգի Պալյանն է եղել, այլ՝ իտալացի Պալին: Անի կոչվող քաղաք չի էլ եղել, եղել է «Անը»: Կարճ ասած, ապրողներ եղել են, բայց ոչ այդքան շատ... Քիչ էին ու ավելի քչացան... Է՜հ, գաղթի ենթարկվեցին... Ինչ արած, որ ճանապարհին մի որոշ մասը հիվանդությունից մահացավ... Է՜հ, նրանք էլ մարդ էին... Իրոք որ ափսոս էին... Ճիշտ է, մի մասը մահացել է, բայց մեծ մասը՝ սպանվել... Հետո՞... ոչ մի հետո... Մի խոսքով, որոշ բաներ եղել են, սակայն դրանք էլ, ըստ էության, անհիմն էին:

Հետաքրքիր զարգացումներ տեղի ունեցան: Թուրքիան «Հայոց

ցեղասպանության» դեմ մի նոր պաշտպանական մարտավարության անցավ: Դրա առաջին նշանները եղան 2000թ., երբ նախագահ Քլինթոնի նախաձեռնությամբ վերջին պահին ձախողվեց ԱՄՆ-ի Կոնգրեսում «Հայոց ցեղասպանության մասին օրինագծի ընդունումը»:

Անկարան, առաջին անգամ խուսափելով հայկական պահանջատիրությանը «հաղթողի» աչքով նայելուց, որոշեց հարցը դնել քննարկման: Ահա թե ինչու առաջին անգամ Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) նիստում «հստակեցվեցին Թուրքիայի՝ նման ծանր իրավիճակում չմնալու համար ձեռնարկվելիք անհրաժեշտ գործողությունները», որին իսկույն հաջորդեցին կազմակերպչական աշխատանքները:

2001թ. փոխվարչապետ Դևլեթ Բահչելիի գլխավորությամբ ստեղծվեց «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի համակարգող խորհուրդ»: Իսկ սրա համակարգողը ԱԱԽ գլխավոր քարտուղարի առաջին տեղակալն էր: Խորհրդի կազմում ընդգրկված էին Զինված ուժերի գլխավոր շտաբի, Արդարադատության, Ներքին և Արտաքին գործերի նախարարությունների, ԱԱԽ-ի քաղաքական և հասարակական հարաբերությունների վարչության բարձրաստիճան պաշտոնյաները, Ազգային հետախուզական ծառայության (MİT) ներկայացուցիչը, Պետական արխիվի գլխավոր տնօրենը, ԹՊԸ-ի նախագահը և կառավարությանն առընթեր հիմնադրամի ներկայացուցիչը:

2002թ. ապրիլին պետությունն արդեն այս հարցի շուրջ սկսեց կրթական մեծ աշխատանք տանել, դասագրքերում հայտնվեց այդ թեման. «ասել է թե՝ սխալ ենք գործել, որ չենք ուսուցանել», «վերջապես գլխի ընկանք»: Այնուհետև Բարձրագույն կրթական խորհրդի կազմում ստեղծվեց «Հայ-թուրքական հարաբերությունների ազգային կոմիտե», համալսարաններում սնկի պես շատացան հայ-թուրքական հարաբերությունների հետազոտական կենտրոնները, հեռուստատեսությամբ ցուցադրվեցին հակաքրոցչական բնույթի փաստագրական ֆիլմեր ու հաղորդումներ և, վերջապես, տարրական ու միջնակարգ կրթական հաստատություններում նույնպես սկսեցին զբաղվել այդ թեմայով: Կրթության նախարար Հուսեյին Զելիքի կողմից դպրոցներ ուղարկվեց «Հայկական անհիմն պնդումների դեմ շարադրության մրցույթ» կազմակերպելու մասին մի շրջաբերական: Իսկ ժամանակի ամենամեծ տաբուն նախակրթարանի սաների միջև մրցույթի առարկա դարձնելը վկայում էր տիրող խուճապի մասին:

Պատմաբանների միջև չլուծված պատմական խնդրի հավասարումներից մեկը որպես բացարձակ տեղեկատվություն երիտասարդ ուղեղները լցնելը, անշուշտ, պատմություն դասավանդելու հետ որևէ կապ չունի: Մինչդեռ դպրոցում ինֆորմացիան ոչ թե պետք է թելադրվեր, այլ՝ քննարկվեր: Շրջաբերականը, ըստ էության, կոչված էր ոչ թե հայկական պնդումները քննարկելուն, այլ աշակերտներին պարտադրելուն, թե «հայկական պնդումները անհիմն են»:

Նախակրթարանների և միջնակարգ դպրոցների պատմության դասագրքերում Հայկական հարցի վերաբերյալ բաժինները պատմական օբյեկտիվ ինֆորմացիա չէին պարունակում: Սա պայմանավորված էր միջազգային հանրության հետաքրքրությունը շարժող հայկական պնդումների ազդեցությունից թուրք երիտասարդներին պաշտպանելու մտահոգությամբ: Թերի, սխալ, աղավաղված կամ չափազանցված տեղեկություններով աշխատում էին կաղապարել երիտասարդ ուղեղները: Հակառակ սրան՝ լավատես լինելու պատճառներ ունեինք: Արդյունքում ահա ժամանակին տաբու համարվող այս «անհիմն» թեման նախակրթարաններում շարադրության մրցույթի էր վերածվում: Հարցը, ընդգրկելով հասարակական բոլոր շերտերը, արդեն նպաստում էր տաբուի վերացմանը: Նժույգին թարս հեծած մտրակել ճգնող անփորձ ձիավորի ջանքեր էր հիշեցնում այս ամենը: Նա մտրակում էր, իսկ նժույգն առաջ էր սլանում: Այս ընթացքն էլ անխու-

սափելիորեն ժխտումից տանում էր դեպի ընդունում:

Հայկական հարցի առնչությամբ թուրքական այսօրվա պաշտոնական թեզը «համառության և փնտրտուքի բախման» միջև է, այդ պատճառով էլ երերում է: Այդ «համառությունը» համապատասխանում է պետական ավանդական դիրքորոշմանը, իսկ «փնտրտուքը»՝ թուրքական քաղաքականության նոր մոտեցումներին: Այլ կերպ ասած, ինչպես և մյուս արդելված թեմաներում, այնպես էլ Հայկական հարցում անխուսափելի է պետության և քաղաքականության բախումը: Այն դեպքում, երբ ստատուս քվոյի կողմնակից պետության ավանդական կեցվածքը չի նպաստում հարցի լուծմանը, Էրդողանի կառավարության փոփոխություն բերող գաղափարը վերածվում է լուծում հետապնդող մոտեցման: Եւ ի հայտ է գալիս դեռևս պատասխան փնտրող հետևյալ հարցադրումը. «Ո՞վ կհաղթի, ստատուս քվո՞ն, թե՞ փոփոխությունը: Թուրքիան Հայկական հարցում ո՞ր ուղղությամբ է գնալու՝ ժխտմա՞ն, թե՞ անխուսափելի ընդունման»:

Թուրքիայում Հայկական հարցի այսօրվա իրավիճակը հասկանալ կարողանալու համար հնի փոխարեն անհրաժեշտ է նոր պատկեր, որի շրջանակում պարզաբանումներն այս կերպ են դասվում.

1. Պաշտոնական թեզի առաջնային դրույթներն արդեն կորցնում են իրենց կենսունակությունը և՛ պետության, և՛ քաղաքականության, և՛ հասարակության մեջ: Իր դիրքերը զիջում է այս հողերում հայերի գոյության փաստը ժխտող, նրանց հետքերը ջնջող դիրքորոշումը: Այլևս անուրանալի է, որ ժամանակին Անատոլիայի բոլոր շրջաններում բնակվել են հայեր: Հայերից մնացած շինությունների և տաճարների ավերակները տասնյակ տարիների ընթացքում ամբողջովին ոչնչացնելու կամ ձևափոխելու, տեղանունները փոխելու, տեղական արխիվները մաքրելու և հետք սրբող նմանատիպ այլ գործողություններն արդյունք չտվեցին: Նման իրավիճակում անտեսելու և հերքելու քաղաքականությունը տեղի է տալիս:

Այսօր արդեն ժամանակին այս հողերում հայերի բնակվելու փաստի հետ, բացառությամբ մի շարք մարգինալ «համառ» հատվածների, մեծամասնությունն ի վերջո կարողացավ համակերպվել:

2. Այլևս հնարավոր չէ ժխտել, որ Անատոլիայում հայության մեծ մասի ներկայությունը զգալիորեն կրճատվեց 1915թ. հետո: Այս կորուստը չսահմանափակվեց միայն ռուսների դեմ պատերազմական գործողությունների շրջաններով, մի քանի տարվա ընթացքում տեղահանեցին հայերին նաև այն բնակավայրերից, որոնք ռազմաճակատային չէին:
3. Մարգինալ հատվածների կողմից դեռևս թմբկահարվող այն կարծիքը, թե «հիմնականում թուրքերը չեն հայերի ցեղը ոչնչացրել, այլ հայերն են ցեղասպանության ենթարկել թուրքերին», կորցնելով իր կշիռը, տեղը զիջում է հետևյալին. «Երկկողմանի կռիվ էր»:
4. Հայկական հարցի համապարփակ քննարկման համար անհրաժեշտ է նոր ընդհանուր մտածելակերպ:
5. Այդ ընդհանուր փնտրտուքը դժվարացնող պատճառները թե՛ արտաքին, և թե՛ ներքին գործընթացներն են: Արտաքինը հայության կողմից աշխարհով մեկ տարվող աշխատանքների ճնշող ազդեցությունն է, իսկ ներքինը՝ Թուրքիայում ժողովրդավարության ձևավորման փուլն է, որն էլ Թուրքիայի սեփական խնդիրն է:
6. «Հայկական հարցը» դարձել է թուրքական պաշտոնական թեզի, պաշտոնական դիրքորոշման և քաղաքացիական ոլորտի կազմած եռանկյունու տարանջատման լուրջ պատճառ: Այն իր համար նոր ուղիներ է փնտրում քաղաքացիական ոլորտի աջակցությամբ, այլ ոչ թե տարբեր հարթություններում առկա պաշտոնական ներկայության (իշխանությունների խոսք), պաշտոնական թեզի (պետության խոսք) շրջանակներում:

Կարելի է ասել, որ Հայկական հարցի առնչությամբ թուրքական պաշտոնական թեզը մնացել է անփոփոխ, նոր գործընթաց չի թևակոխել կամ էլ չի վերանայվել: Սակայն չի բացառվում տարբերություն նկատել պաշտոնական թեզի և պաշտոնական ներկայության միջև: Ակնհայտ է, որ ինչպես մի շարք այլ հարցերում, այնպես էլ այս հարցում պաշտոնական դիրքորոշման ներկայացուցիչն իշխանություններն են, իսկ պաշտոնական թեզինը՝ պետությունը, որոնք միմյանցից տարբերվում են: Այսօր պաշտոնական թեզը, ըստ էության, զբաղեցնում է հեգեմոն դիրքեր, որի խոսափողը ԹՊՀ-ն է: Պաշտոնական թեզը, սկիզբ առնելով պետության խորքերից, տարածվելով բյուրոկրատական մեխանիզմների տարբեր անկյուններում, ազդելով և ազդվելով դրանցից, արդյունքում մարմնավորվում է ԹՊՀ-ում: Իսկ պաշտոնական ներկայությանը համապատասխանող ուժը իշխանություններն են: Պաշտոնական թեզը ձևավորում է պաշտոնական դիրքորոշումը բոլոր ժամանակների համար՝ ազդեցություն ունենալով նաև ներկայիս իշխանությունների վրա, սակայն այս անգամ էական մի տարբերությամբ: Թայիփ Էրդողանի կառավարությունը ինչպես մի շարք այլ բարդ խնդիրներում, Հայկական հարցում ևս ազդեցություն կրելով պետական դիրքորոշումից, ճկուն կերպով պետությանն է փոխանցում իր դիրքորոշումը: Եվ եթե նույնիսկ տեղ էլ չգտնի պաշտոնական թեզում, կկարողանա առաջացնել նուրբ տարբերություն պաշտոնական ներկայության մեջ:

Թուրքիայում կա նաև մի ոլորտ, որը պաշտոնական հարթությունից դուրս մնալով՝ ավելի ազատ է գործում: Դա քաղաքացիական ոլորտն է, որ վերջին տարիներին աստիճանաբար ընդարձակվում է: Խոսքը Հայկական հարցի կապակցությամբ առկա պաշտոնական մոտեցման անշարժությանը հակառակ՝ Թուրքիայի քաղաքացիական ընագավառում վերին աստիճանի ակտիվության մասին է: Այն, ինչ տեղի է ունենում այդտեղ, գուցե փոփոխություն չէ բառիս բուն իմաստով, բայց դրական իմաստով կարող է տեղաշարժ համարվել: Քաղաքացիական ընագավառը, որը ներկայումս աստիճանաբար ընդարձակվում է, նեղացնելով պաշտոնական թեզի սահմանները, պատրաստվում է գրոհի: Այդ պատճառով պաշտոնական թեզը, իր կաշվից դուրս գալով, կջանա ներկայություն ապահովել ամեն տեղ և գործը հասցնել մինչև մարտահրավեր, ինչն էլ կուղեկցվի պարտադիր ցնցումներով:

Քանի որ պաշտոնական թեզ, պաշտոնական ներկայություն և քաղաքացիական ընագավառ եռանկյունու մեջ առկա են այդ տարբեր մոտեցումներն ու ազդեցությունները, առանց հասկանալու դժվար է բացատրել այն, ինչ տեղի է ունեցել Թուրքիայում Հայկական հարցի առնչությամբ:

Սփյուռքահայերի՝ Թուրքիան այսօր լավ չճանաչելու հիմնական պատճառներից մեկն էլ կապված է այդ իրադարձություններին մոտիկից հաղորդակից չլինելու հետ: Սփյուռքը մի կողմից զարմանում է դրական զարգացումներ տեսնելով, սակայն մյուս կողմից էլ, նկատելով այդ զարգացումները կասեցնելու ջանքեր, ինքն իրեն հանգստացնելով՝ ասում է. «Թուրքիան երբեք չի փոխվի»: Մինչդեռ ընդունեն, թե՝ ոչ, Թուրքիայում շարժում նկատվում է: Դրանում, բնականաբար, լինելու են ներքին հակասություններ: Թուրքիայում գոյություն ունեցող հակասությունները բացատրվում են այն բանով, որ կողմերին առանց վերլուծության հասկանալ հնարավոր չէ: Եղած օրինակներով ասվածն ավելի պարզ է դառնում...

Մի կողմում մինչև նախակրթարանների դասագրքեր պաշտոնական թեզի խցկումն ու աղավաղված պատմության դասավանդումն է, մյուս կողմում կրթության նախարարն է, որը ստիպված է դա իրականացնել: Մեկ այլ կողմում այդ գրքերի փոփոխության համար արշավ սկսած քաղաքացիական հասարակությունն ու դիմադրություն ցույց տվող ուսուցիչներն են: Եվ, վերջապես, նույն

այդ դասագրքերը դրական իմաստով վերակազմելու մասին խոսողը դարձյալ ինքը՝ կրթության նախարարն է:

Մի կողմում պետական բյուրոկրատական ապարատում ձևավորված «Հայոց ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի գաղափարախոսությունն» է և այդ մեխանիզմի մշակած մարտավարությամբ ու մեթոդներով հասարակության տարբեր գիտական կազմակերպություններին թելադրելու ջանքերն են, մյուս կողմում էլ այդ պարտադրանքին դեմ դուրս եկող անկախ գիտնականներն ու մտավորականներն են, ինչպես նաև այն քաղաքական ուժը, որը խիզախություն է ցուցաբերում՝ լսելու յուրաքանչյուր հատվածին հենց խորհրդարանում:

Ահա այս ամենը պաշտոնական թեզ, պաշտոնական դիրքորոշում և քաղաքացիական ոլորտ եռանկյունու ամենավառ արտահայտությունն է: Թայիփ Էրդողանի կառավարության, այլ կերպ ասած՝ «պատմությունը թողնենք պատմաբաններին» պաշտոնական դիրքորոշման դեպքում էլ անգամ շատ պարզ երևում է, որ ԹՊԸ-ն ամենևին էլ մտադիր չէ պատմական իրողությունների դիտարկումը թողնել անկախ պատմաբաններին: Զորօրինակ՝ ԹՊԸ-ի հավակնոտ և գիտական աշխատանքների անլրջությունը: Այդ անլրջության առաջին օրինակը անցյալ տարի այդ հավակնոտ աշխատություններից առաջինը համարվող «Հայերը, աքսորը և արտագաղթը» վերնագրով գիրքն էր: Այդտեղ շոշափվող այն թեզերը, որոնք հայության շրջանում առաջացնում են հակազդեցություն, խոսում են ԹՊԸ-ի բուն գործունեության մասին: Ինչպես բնակչության ուսումնասիրության վերաբերյալ գրված ծավալուն աշխատության մեջ, այնպես էլ դրա հետ կապված գրքի հեղինակներից ԹՊԸ-ի նախագահ Հալաչօղլուի տարբեր առիթներով տված հարցազրույցներում առաջ են քաշվում հետևյալ տեսակետները. «1.5 մլն հայեր չեն զոհվել, այլ տարբեր պատճառներով այդ ժամանակ մահացել են մոտ հարյուր հազար հայեր:

Շուրջ 1.5 մլն տեղահանված հայերից 1.4 մլն-ը վերադարձել է, իսկ հայերի կողմից սպանված թուրքերի թիվը վեց հարյուր հազարի է հասնում»: Շրջանառվող նման տեսակետները շարժեցին հայության ծիծաղը: Իսկ Հալաչօղլուի հետևյալ հայտարարությունը՝ «եթե գիտեն, որ հայերին պատկանող զանգվածային գերեզմաններ կան, ուրեմն թող գան ու ցույց տան, պատրաստ եմ դրանք էլ բացել», ասվածի ամենավառ օրինակն է: Այնուամենայնիվ, ըստ հայկական կողմի, հայ և թուրք պատմաբանների միջև հետաքրքրությամբ սպասվող Վիեննայի հանդիպման և փաստաթղթերի փոխանակության խափանման հիմնական պատճառը հենց ԹՊԸ-ի նախագահի այդ բացասական վարքագիծն էր:

Այստեղ փակագծերը բացելով՝ օգտակար է քննադատական հայացք ուղղել Վիեննայի հանդիպումից հրաժարված հայկական կողմի պահվածքին: Այսպիսով, նախքան հանդիպումը «այո» ասել, իսկ ավելի ուշ տարբեր պատճառաբանություններով դրանից հրաժարվելը ոչ թե համարժեք քայլ է՝ ուղղված թուրքական պաշտոնական թեզի պատմական գնահատականներին, այլ՝ աջակցություն նրա այսօրվա քաղաքական գործելաոճին: Քանի որ ԹՊԸ-ի նպատակը ոչ թե հայությանը կամ աշխարհին որոշ բաներ բացատրելն է, այլ սեփական կիսադաշտում խաղալը: ԹՊԸ-ի՝ «հայերը դարձյալ փախան» լոզունգը միշտ մրցանակ է բերելու սեփական տրիբունա: Այլ կերպ ասած՝ այդ լոզունգը դժվարացնում է բոլոր նրանց գործը, ովքեր փորձում են Թուրքիայի քաղաքացիական ոլորտում հանդես գալ նոր մոտեցումներով:

Հայության՝ «մենք ոչ մեկի հետ երբեք չենք քննարկի՝ ցեղասպանություն եղել է, թե ոչ» մոտեցումը գուցե հասկանալի հոգեվիճակ է, սակայն այն դեպքում, երբ ավելանում են փաստաթուղթ կոչվող տվյալները, անհասկանալի է անտեսել և չքննարկել հակառակ պնդումները: Արդյունքում չքննարկվելիք հարցերը իրական տեղեկությունների վրա հիմնված իրադարձություն-

ներ են, և դարձյալ այդ տեղեկություններն են, որ որևէ վտանգ չեն ներկայացնելու քննարկման ժամանակ: Պատմաբանները թող չքննարկեն՝ ցեղասպանություն եղել է, թե ոչ, դա կապված է նրանց հոգեվիճակի հետ, սակայն չքննարկել տեղեկությունները անիմաստ է. չքննարկելու անվան տակ տեղեկության արգելափակումը չի կարողանա անխոցելի դարձնել այն:

Այսօր ԹՊԸ-ի կառույցում կենտրոնացված պաշտոնական թեզը որդեգրել է հարձակողական ոճ, որին, անշուշտ, պետք չէ հարմարվել, սակայն անհրաժեշտ է այդ պնդումներին պատասխան տալ՝ այդ ոճի լարած թակարդի մեջ չընկնելու համար: Թաներ Աքչամի՝ «Հայերը, աքսորը և արտագաղթը» գրքին ուղղված քննադատական վերլուծությունները դա կատարեցին հավուր պատշաճի: Անտեղի քննարկումից խուսափելը, անշուշտ, ճիշտ մեթոդ է, բայց անտեղի է անհրաժեշտ քննարկումներից խուսափելը:

Հայկական հարցն այսօր այն մակարդակում է, երբ այն փորձում են համապատասխանեցնել «պնդում» թե «փաստ» լեզվական հասկացություններից մեկին: Մի կողմ թողնելով կատարվածը՝ կարևորում են իրադարձության անվանումն ու իրավական կողմը: Մինչդեռ հարցը չի սահմանափակվում հայ և թուրք պատմաբանների միջև փաստաթղթերի մրցապայքարով: Իսկ այս դեպքում հարցը կմնա իրողությունը հավաստող և բացատրող (բացատրել չկարողացող) փաստաթղթերի միջև՝ չհասնելով հիմնական հասցեատիրոջը: Այնինչ փաստաթուղթը, ճիշտ թե սխալ, ամեն ինչ չէ, գլխավորը՝ մարդ այն ինչպես և որտեղից կարդա:

Թուրքական կողմը վերջին ժամանակներում բավական հաճախ է խոսում հարցը միջազգային հաշտարար դատարան հասցնելու մասին, ինչը հայկական կողմը ընկալում է որպես քողարկման փորձ: Այս մոտեցման հիմնական մտահոգությունը հասարակության ուշադրությունը հարցից շեղելն է, հետաձգելը և օրակարգից հանելը: Այնպես որ, «պատմությունը թողնենք պատմաբաններին» համառոտ ձևակերպմամբ մոտեցման մեջ անդամ նկատվում է այդ մտահոգությունը: Այսօր կան հայ և թուրք այնպիսի պատմաբաններ, որոնք կարողանան հարցն իրար մեջ քննարկել: Հատկապես արտերկրում պարբերաբար կազմակերպվող աշխատանքներին այլազգի պատմաբաններն էլ են մասնակցում: Բայց, ցավոք, նրանց հաջողացրած հանդիպումները դեռևս չեն կարողացել տեղափոխվել Թուրքիա: Իսկ մինչ այդ պետք է խոսել Թուրքիայում անհետաձգելի մի գործընթացի մասին, որի դեպքում կձևավորվի անկախ պլատֆորմ, և թուրք պատմաբանների ու մտավորականների միջև իրականացվելիք քննարկումները ուժաթափ կանեն պաշտոնական թեզը:

Ամենակարևոր քայլն էլ ահա այդ անկախ գործընթացով է պայմանավորված՝ ապահովել հարցի քննարկումը հասարակական ողջ սպեկտրով լիարժեք ազատության պայմաններում: Դա Թուրքիայի առաջնային պարտականությունն է: Հակառակ դեպքում, երկու կողմերի պաշտոնական պատմաբանները կբռնվեն կույր պայքարի, և դրանից արդյունք սպասելը պատրանք է: Այդ հարցը ծագել է այս հողերում, և տերն էլ այս ժողովուրդներն են: Այժմ տեղի ունենալիք անհրաժեշտ գործընթացը ժողովրդի տեղեկացված լինելու իրավունքի լիարժեք գործածումն է: Իսկ դրանից հետո մնացածն իր հունով կընթանա: Այդ գործընթացի շրջանակում, երբ ստեղծվի անկախ դաշտ, հարցի կապակցությամբ այն առավելության կհասնի պաշտոնական ոլորտի նկատմամբ: Պաշտոնական թեզը, որը փորձում է տարբեր մարտավարություններով, մեթոդներով, «նոր» հորջորջվող հին մոտեցումներով կամ էլ «հարձակողական» ոճով նեղացնել այդ անկախ դաշտը, ըստ էության, մարտահրավեր է նետում ոչ թե աշխարհին, այլ՝ սեփական ժողովրդին:

Եթե Թուրքիան պատմական հետազոտության ընթացքում չթերանա «պատմահամեմատական» մեթոդը կիրառելիս, ապա ցանկացած հարցի լուծում ավելի հեշտ կգտնի: Հակառակ այն բանին, որ Թուրքիան Հայկական հարցը լուծելու համար հույսը դրել

է մանկահասակ ուղեղների վրա, նրա առաջնային պարտականությունը այդ թեմայի առնչությամբ երկրի բոլոր մեծահասակների համար այլընտրանքային տեղեկատվություն ապահովելն ու քննարկման հնարավորություն ընձեռող անկախ միջավայր ստեղծելն է: Արտասահմանում գրված գրքերն ու հոդվածները, թարգմանված փաստագրական ֆիլմերը պետք է անաչառորեն ներկայացվեն հասարակության դատին: Միայն այսպիսի անկախ միջավայրում հնարավոր կլինի խոսել պատմական քննարկման և պատմությունից դասեր քաղելու մասին: Այդպիսի միջավայրը ճանապարհ կհարթի հարցի մեղմացման և կարգավորման համար:

Թուրքիան այդ անկախ միջավայրից, ընդհանուր առմամբ, հեռու է: Նա իր մեջ դեռ ժողովրդավարացման պայքար է մղում:

Մարդիկ իրենք իրենց գրաքննության ենթարկելով է, որ կկարողանան իրենց տեսակետները «ազատորեն» շարադրել: Ծայրաստիճան անհանդուրժողականություն է ձևավորվել հատկապես ներսից բարձրացող «հակադրվող ձայների» նկատմամբ: Պետության և հասարակության ծածուկ համագործակցությամբ ու համատեղ հակազդեցությամբ փորձ է արվում խեղդել այն տեսակետները, որոնց համաձայն «տեղի ունեցածը ցեղասպանություն էր կամ էլ էթնիկական զտումներ»՝ այլախոհների վրա փակցնելով «հայի ծառա» պիտակը: Ամեն տեսակ օրինական և ապօրինի մեթոդներ բանեցնելով՝ սևացնում և ոչնչացնում են հակադրվող տեսակետները: Համացանցում զետեղվում են հայհոյանքներ ու սպառնալիքներ, իսկ ԶԼՄ-ների կողմից իրականացվող հարձակումները հիմնականում հիշեցնում են լինչի դատաստան տեսնելու կոչեր: Այդ իրավիճակն արդեն իսկ հակասում է «թող հայերը գան, միասին հանձնաժողով ստեղծենք և քննարկենք» տեսակետին: Դեռ մեծ հարցական է, թե իրենց ասած «ծառաներին» հանդուրժել չկարողացողներն ու նրանց ձայնը կտրել ջանացողները ինչպես են կարողանալու հանդուրժել «տերերին»:

Թուրքիայում «Արարատ» ֆիլմի ցուցադրմանը խոչընդոտելուն ուղղված իրադարձությունները, կամ Թուրքիայի ներսում հակադրվող ձայների դեմ ուղղված կոշտ մոտեցումները, կամ էլ Բողազիչիի, Բիլգիի և Սաբանջիի համալսարանների նախաձեռնած «Հայկական գիտաժողովը» քաղաքական գործիչների, ԶԼՄ-ների և հասարակության միջոցով տապալելու փորձերը ցույց տվեցին, որ այնքան էլ հեշտ չէ ստեղծել ժողովրդավարական քննարկման միջավայր տաբուից ձերբազատվել սկսած Հայկական հարցի համար:

Այդ օրինակները բացահայտորեն ցույց են տալիս, որ Թուրքիայում օրենքների առկայությունը կամ քաղաքական հեղինակությունների որոշումներն ի զորու չեն ապահովել իրական ազատություն: Երբեմն իշխանություններն անգամ իրենց որոշումներն են թողնում հասարակական հակազդեցությունների կամքին: Այդ մասին է խոսում «Արարատ» ֆիլմի օրինակը: Ֆիլմի ցուցադրման մեջ որևէ վտանգ չտեսնող իշխանությունները, ցավոք, չկարողացան խոչընդոտել ֆիլմն արգելելու կողմնակից մարդինալ ուժերին. արդյունքում ֆիլմը չցուցադրվեց:

Հայացք նետելով անցյալում և ներկայում Թուրքիայի Քրեական օրենսգրքին և դրա կիրարկումներին՝ պետք է ասել, որ «Հայոց ցեղասպանություն եղել է» արտահայտությունը որպես հանցանք դիտելու և քրեական պատասխանատվության ենթարկելու մասին որևէ հոդված չկա: Այդուհանդերձ, նման արտահայտության կիրառումը քրեական պատասխանատվությունից բացի հանգեցնում է ուրիշ վատ հետևանքների: Այդ իսկ պատճառով, եթե այս թեմայի շուրջ արտահայտվողները տեղի ունեցածը մեկնաբանում են որպես ցեղասպանություն, բնականաբար, հիմնականում խուսափում են «դա ցեղասպանություն էր» նախադասությունից: Իսկ նրանք, ովքեր գրում են «Հայոց ցեղասպանություն» արտահայտությունը, «ինչ լինում է, թող լինի» մտահոգությամբ, ապահովության համար այն վերցնում են չակերտների մեջ, որը կարելի է հասկանալ:

Հանրապետության պատմության ընթացքում չեմ կարող վկայաբերել գեթ մեկ դեպք, երբ որևէ մեկին դատապարտեն ու քրեական պատասխանատվության ենթարկեն հենց միայն այն բանի համար, որ նա ասել է. «Դա ցեղասպանություն էր»: Եթե նույնիսկ չկա էլ, ապա անհրաժեշտ է պարզաբանել, թե որն է Թուրքիայի մտավախությունը, որ դատարանում հարց չի բարձրացվում հենց այդպիսի արտահայտության համար: Եվ շատ պարզ է, որ եթե մեկին «ցեղասպանություն է տեղի ունեցել» ասելու համար կանգնեցնեն թուրքական դատարանի առջև, ապա այս հարցում աշխարհի ունեցած հետաքրքրությունը, զգայունությունը և միջամտությունը թույլ չեն տա Թուրքիային հաղթող դուրս գալ: Նրանք, ովքեր օգտագործում կամ չեն օգտագործում «ցեղասպանություն» բառը և Հայկական հարցի առնչությամբ հանդես են գալիս պաշտոնական դիրքորոշմանը հակասող արտահայտություններով, դատապարտվում են «թուրքական ինքնությունը վիրավորելու» կամ «ժողովուրդներին միմյանց դեմ հրահրելու» մեղադրանքներով: Այսպիսի օրինակներ շատ կան: Վերջին շրջանում այս կապակցությամբ օրակարգում հայտնված Օրհան Փամուքի[1], Հրանտ Դինքի կամ էլ Ռագըփ Զարաքոլուի[2] դատավարությունները ցույց են տալիս, որ նրանք թիրախ են դարձել հիմնականում Հայկական հարցի հետ կապված քննարկումների պատճառով: Սակայն պատասխանատվության են ենթարկվում թուրքական ինքնությունը կամ էլ պետությունը վիրավորելու մեղադրանքով:

[1] Օրհան Փամուք - թուրք հայտնի գրող, Նոբելյան մրցանակակիր: Փամուքի դեմ «թուրքական ինքնությունը վիրավորելու» մեղադրանքով քրեական գործ էր հարուցվել այն բանից հետո, երբ նա շվեյցարական ամսագրին տված հարցազրույցում հայտարարել էր, որ 20-րդ դարասկզբին «սպանվել է 30 հազար քուրդ և 1 մլն հայ» (Ծ.Թ.):

[2] Ռագըփ Զարաքոլու - թուրք գրող, հրատարակիչ, իրավապաշտպան, «Բելգե» հրատարակչատան հիմնադիր, ղեկավար: Հայոց ցեղասպանության վերաբերյալ կազմակերպած քննարկումների, ինչպես նաև այդ թեմայով գրքերի հրատարակման համար Թուրքիայում ենթարկվել է հետապնդումների (Ծ.Թ.):

Հայկական հարցի առնչությամբ պաշտոնական թեզին հակասող «թաքնված խոսքերը» միշտ ենթատեքստով արտահայտողներից առաջինը Թուրքիայում Իսմայիլ Բեշիքչին էր: Իսլամական հրատարակչատների՝ «Իթթիհատ վե Թերաքքիի»[1] դեմ տպագրված հուշագրերում նա առաջինը հանդես եկավ «բացահայտորեն հակադրվող խոսք»-ով: Բեշիքչին այդ թեմային լայնորեն տեղ է հատկացրել «քրդական հարցին» նվիրված իր գրքերում, որն էլ պաշտոնական թեզին հակադրվող խոսքի սկիզբ կարելի է համարել: Անկասկած, իր գրածների պատճառով տասնյակ տարիների ազատազրկման դատապարտված և կյանքի մեծ մասը ճաղերի ետևում անցկացրած Բեշիքչիի զրկանքների հիմնական պատճառներից մեկը «քրդական հարցի», ինչպես նաև «Հայկական հարցի» նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունն էր: Բեշիքչիի կողքին դնելով Ֆիքրեթ Բաշքայայի «Հարացույցի կրախը», Օսման Այթարի «Համիդիյե գնդերը», Սերդար Ջանի «Տատիս հեքիաթները» և Թաներ Աքչամի «Թուրքական ազգային ինքնությունը և Հայկական հարցը» գրքերը, որոնք Թուրքիայում հրատարակված նույնպես հակադիր տեսակետ արտահայտող գրքեր են, և հատկապես «Բելգե» հրատարակչատան թուրքերեն թարգմանած և լույս ընծայած հայտնի հայ պատմաբան Վահագն Տատրյանի «Գենոցիդ», Իվ Տերնոնի «Հայկական տաբու» և Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» գրքերը, թուրքերի ունեցած տեղեկություններին ավելացնում են պաշտոնականին հակադրվող այլընտրանքային տեղեկություններ:

Այդ գրքերից մի քանիսի հեղինակներն ու հրատարակիչները դարձյալ տարբեր մեղադրանքներով դատարանի առջև կանգնեցին, մի մասը դատվեց, մի մասն էլ արդարացվեց: Իսկ «Հայկական տաբու» գրքի արդարացման վճիռը փաստացի խրատա-

[1] «Իթթիհատ վե Թերաքքի» - «Միություն և առաջադիմություն», երիտթուրքերի կուսակցությունը, որի իշխանության օրոք իրականացվեց Հայոց ցեղասպանությունը (Ծ.Թ.):

կան օրինակ էր և ինքնին ավելին էր, քան ուղղակի արդարացումը: Գիրքը, որը հայտնվել էր դատարանում թուրքաբնակ հայերին սադրելու մեղադրանքով, արդարացվեց այն հիմնավորմամբ, որ «Թուրքիայում այլևս չի մնացել սադրանքի ենթարկվելիք հայ»:

Իսկ «Հայոց ցեղասպանության» առնչությամբ հակադիր կարծիքներ արտահայտողներն այսուհետև քրեական պատասխանատվության կենթարկվեն, թե ոչ, դեռևս անորոշ է: Թուրքական նոր Քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի հիմնավորման մեջ կա այսպիսի ենթատեքստ. «Հայկական հարցի կապակցությամբ պետական շահերին հակասող արտահայտություններ անել և դրա համար դրսից օգուտ ապահովել»: Փաստորեն «ազգային շահերին հակասող գործողություն» ձևակերպումը և ազգային շահերի շրջանակը ոչ հստակորեն ներկայացնելը նշանակում է, որ սպառնալիքը երբեք չի վերանալու:

Այնուամենայնիվ, այսօրվա մի շարք գրքերի հրատարակմամբ սկսված հակադիր կարծիքների արտահայտումն արդեն հասարակության լայն շրջանակների հետաքրքրությունն է շարժել: Ամեն օր տարբեր քննարկումների ընթացքում ի հայտ են գալիս տարբեր հոդվածներ, ուսումնասիրություններ և արտահայտություններ, ինչով էլ աստիճանաբար ավելանում է բազմակարծության չափաբաժինը: Խոսքի ազատության ստեղծած միջավայրում արդեն տեսանելի են այնպիսի օրինակներ, երբ չեն կարողանում դատարանի առջև հրապարակավ մեղադրել «ցեղասպանություն է եղել» ասողներին:

Արդյունքում, Թուրքիան աշխարհին ձեռնոց նետեց և ցանկացավ երևան հանել բոլորի ձեռքի տակ եղած ինֆորմացիան և արխիվները: Իսկ այս դեպքում լիովին անբացատրելի է դառնում, թե այդ կոչն արած Թուրքիան ինչպես է քրեորեն հետապնդելու հակադիր կարծիք հայտնողներին: Ըստ երևույթին, Թուրքիան դա գիտակցում է...

Պաշտոնական խոսքի ճնշմանն ընդդիմացող գիտնականների կողմից սեպտեմբերին Բիլգիի համալսարանում կազմակերպված «Հայկական գիտաժողովը» ապացուցեց, որ Թուրքիան այլևս թևակոխել է անդառնալի մի գործընթաց: Մինչև վերջին պահը կոնֆերանսը տապալել ցանկացողների ջղաձգություններն ապացուցեցին, որ գիտաժողովն ունի դարակազմիկ նշանակություն: Քննարկումները մինչ այդ ունեին անհատական բնույթ: Բայց այդ գիտաժողովով ազդարարվեց մի գործընթացի սկիզբ, երբ պաշտոնական խոսքից զատ պատմական անցքերը քննարկվում էին գիտական շրջանակներում, մամուլում կամ էլ հասարակական բաց քննարկումներում՝ անկախ գիտնականների ու մտավորականների համագործակցությամբ: Տեղի ունեցածը պաշտոնական պատմագրությանը հակառակ համընդհանուր օգուտ տալու իմաստ ուներ: Դրա հետևանքով էր, որ պաշտոնական տեսակետի պաշտպաններն աղմուկ էին բարձրացնում, դրա հետևանքով էր, որ արդարադատության նախարար Ջեմիլ Չիչեքը խորհրդարանի ամբիոնից այդ մարդկանց անվանում էր «հայրենիքին թիկունքից հարվածողներ», դրա հետևանքով էր, որ Վարչական դատարանն իրեն և Թուրքիային զավեշտալի դրության մեջ չդնելու հիմնավորումներով կոնֆերանսն այդ չեղյալ էր հայտարարում: Չնայած բոլոր այս խոչընդոտներին, գիտաժողովը հնարավոր եղավ սեպտեմբերին կազմակերպել, ինչը մեկ անգամ ևս ապացուցեց, որ Թուրքիան Հայկական հարցի կապակցությամբ նոր գործընթաց է մտել, որտեղից արդեն հետդարձ չկա:

Կոնֆերանսի կայացումը Թուրքիային արտաքին աշխարհի առաջ ամոթով մնալուց միայն չփրկեց, այլ նաև ուղի հարթեց Թուրքիայում Հայկական հարցը քննարկելու համար: Այն հուշեց, թե ինչպիսի մեթոդներով ու ինչ ոճով պետք է քննարկել այդ բարդ խնդիրը: Սրանով էր բացատրվում այն հանգամանքը, որ նախքան գիտաժողովը պաշտոնական տեսակետի կողմնակիցները հարց էին բարձրացնում՝ «ինչո՞ւ մենք էլ կոնֆերանսին

հրավիրված չենք»: Այո, այդպիսի բարդ հարցերում ընդհանուր հայտարարի գալու համար մեկ կանոն և մեկ ոճ պետք է լինի: Հարկ է ընդունել, որ գործ ունենք շատ դժվար խնդրի հետ: Իրադարձությունները երկուստեք սև ու սպիտակ ընկալող ու լուսաբանող կողմեր կան, որոնք հարցին մոտենում են բավական անփութորեն և պատմության ցավալի անցքերը քննարկում ոչ վայել ձևով: Մեկ-երկու նախադասությունից հետո կամ միմյանց դավաճանության մեջ են մեղադրում, կամ էլ մեկը մյուսին վիրավորում, ինչն էլ ավելի է բարդացնում իրավիճակը: Սա նաև կոնֆերանսի ժամանակ տեղի ունեցավ... Պաշտոնական թեզի կողմնակից մի տիկին, որին ի վերջո հաջողվեց մասնակցել գիտաժողովին, դեռ ռեկտորների «բարի գալուստ» ասելու ժամանակ էր սադրանքի առիթներ փնտրում: Իսկ մեկ ուրիշն էլ, ով հրավիրված չէր կոնֆերանսին, հայտարարելով, թե ինքը պրոֆեսոր է, շատ ինքնավստահորեն ներս մտավ: Եվ հենց առաջին նիստի ժամանակ հարց տալու իրեն ընձեռված հնարավորությունն օգտագործեց մարդկանց միտումնավոր վիրավորելու համար: Նման գիտնականի կեցվածքը վառ ապացույց է վերը հիշատակվածի:

Արդյունքում այդ գիտաժողովը մեկ անգամ ևս ցույց տվեց, որ կողմերը նախքան հանդիպումը նախապատրաստվելով մի ոճ պետք է զարգացնեն: Առաջնահերթ պայմանն այն է, որ այդ ոճը մշակողները հանդիպեն և քննարկեն: Այլապես հակառակ կողմերը սևն ու սպիտակը ինչպե՞ս են համադրելու: Այս հարցի պատասխանը գտնելը հեշտ չէ, բայց անհնար էլ չէ:

Մի կողմ դնենք հարցի առնչությամբ թուրքերի և հայերի միջև առկա հակասությունները և անցնենք Թուրքիայի ներքին հակասություններին: Նախ պարզաբանենք, թե ինչ է նշանակում մեր ասած հակասությունը. մի կողմում պաշտոնական թեզն ու դրա ազդեցությունը կրողներն են, մյուս կողմում՝ պաշտոնական թեզի ճնշումներին չենթարկվողներն ու անկախ քննարկման մեթոդներ կիրառողները... այլ խոսքով, պատմության տեսանկյունից ստատուս քվոյի կողմնակիցներ ու պահպանողականներ և փոփոխության կողմնակիցներ ու հեղափոխականներ: Իհարկե, նրանք իրենց ներսում ունեն վիթխարի տարբերություններով աչքի ընկնող դասակարգում, ինչն էլ շատ բնական է: Մինչև այսօր առաջին շարքը զբաղեցնում են կտրուկ, սև և սպիտակ մտածողները: Սրանց հետևում են մնում ավելի չափավոր, մոխրագույն երանգի մտածողները: Կոնֆերանսը ցույց տվեց նաև, որ անկախ պատմաբանների միջև ինչքան էլ լինի հայացքների տարբերություն, ժամանակի ընթացքում նրանք կարող են իրենց աշխատանքներով մեկ ընդհանուր ոճ զարգացնել: Գոնե քամահրանքով չեն խոսում հարցի վերաբերյալ, տեղի ունեցած ցավալի իրադարձությունները գիտակցում են և հարցին փորձում մոտենալ անհրաժեշտ ոճով: Իսկ պաշտոնական թեզի սպասավորների մեծամասնության շրջանում, ցավոք, այդ հարցի կապակցությամբ ոչ մի ջանք, ոչ մի պրպտում չի նկատվում: Ներկայումս գրավոր և բանավոր խոսքի ժամանակ չեն խուսափում ցավ պատճառող բառեր օգտագործելուց: Սա էլ հակառակ կողմից նայելիս ընկալվում է որպես հարցի նկատմամբ նրանց կողմից ցուցաբերված անհարգալից վերաբերմունք: Այդ պատճառով և նման վիրավորական ոճով համառելն ու բողոքելը, թե «մեզ ինչու կոնֆերանսին չեն հրավիրել», իրականում անիմաստ է:

Սա էլ ցույց է տալիս, որ այդ հատվածին նախ անհրաժեշտ է յուրացնել հարցի քննարկման էթիկական կողմը և հարգանք ցուցաբերել հակառակ կողմի դիրքորոշմանը: Օգտակար կլինի, որ լինեն նման ոճ զարգացնողներ, որոնք էլ կկարողանան երկխոսություն ծավալել հակառակ կողմի հետ: Արդյունքում առջևում եղած օրինակներում հնարավորինս տեղ է գտնելու հայտնի ոճը, իսկ վերը նշված կտրուկներն էլ այդ օրինակների ազդեցությամբ պետք է որ մեղմանան և միանան քննարկմանը: Ասել է թե, թուր-

քերը հայերի հետ քննարկում սկսելուց առաջ կարիք ունեն հետևողական բանակցային գործընթացի: Չի բացառվում, որ հայերի հետ երկխոսության ժամանակ օգտագործվելիք ջանադիր ոճն էլ այդ գործընթացից ածանցվի: Այդ գիտաժողովի նկատմամբ աշխարհի ցուցաբերած հետաքրքրությունը պետք չէ թերագնահատել: Քանի որ այդ հետաքրքրությունն ազդանշանն է այն բանի, թե ինչպես է Թուրքիան շրջադարձ կատարում: Կոնֆերանսի երկու հաջեցած օրերը վկայում էին, որ Թուրքիան հասել է շրջադարձային կետի: Եվ կարծես Թուրքիան քանդում էր կարծրատիպերից մեկը... Իսկ կարևորն այն էր, որ բոլորը դա գիտակցում էին: Այո, ճիշտ որ, հետայսու Թուրքիայում «Հայկական հարց»-ն ավելի համարձակ քննարկելու բնույթ էր ձեռք բերելու: Նոր ձայներն ու նոր մոտեցումներն իմաց էին տալու իրենց մասին: Համարձակորեն ասվելու և գրվելու էր այն ամենը, ինչից մինչ այդ խուսափում էին: Եվ այսպիսով գուցե գտնվի այն ամենը, ինչը կորցրել ենք, գուցե վերակենդանանան մահացածները:

Իսկ կոնֆերանսից հետո «Հյուրրիյեթ» օրաթերթում լույս տեսած Բեքիր Ջոշքունի ընդվզող ոճով հոդվածը, անկասկած, տասն այդպիսի «Հայկական կոնֆերանս» արժեր: Ջոշքունն իր հոդվածում նշում էր, որ իր տատը որբ մնացած հայ աղջնակներից էր, ինչը մեզ ուղղված ակնարկ էր: Եթե հաղթահարենք մեր ներսի վախն ու մի կողմ թողնենք զգուշավորությունը, ապա ըստ նրա, հնարավոր է, որ բոլորս էլ Թուրք կամ հայ հարազատներ ունենանք: Եվ, բնականաբար, մեզ էր հանձնում մեր փնտրած ոճի «բանալիները»....

Եկեք նախ հասկանանք միմյանց...

Եկեք նախ միմյանց վշտի նկատմամբ հարգանք ցուցաբերենք...

Եկեք նախ միմյանց ապրելու հնարավորություն տանք...

Հայ և Թուրք հասարակությունների միջև ընդհանուր հիշողության վերականգնումը ամենակարևոր գործընթացն է, որը խիստ անհրաժեշտ է հասարակության յուրաքանչյուր անդամին: Այդ տեսանկյունից «պատմությունը թողնենք պատմաբաններին» ասողներն այնքան էլ իրավացի չեն: Պատմությունը միայն պատմաբաններին հնարավոր չէ Թողնել: Եվ հետո, այդ արտահայտությունն անկեղծ չէ: Պատմությունը Թողնել պատմաբանների՞ն, երբ մամուլում, հեռուստատեսությամբ և հետազոտական աշխատություններում ամեն օր կմախքի կտորտանքներ են հրամցվում իբրև պատմություն, երբ դասագրքերը դեռևս լի են Թշնամական բնորոշումներով, երբ դրանից ծնվում է ատելություն: Զորսհազարամյա պատմության մասին գեթ մի տող անգամ դպրոցում չի ընթերցվել, դա մինչ օրս արգելված է: Կազմակերպված շարադրության մրցույթներն ու պատմության դասագրքերը հայ երեխայից կամ երիտասարդից պահանջում են սեփական պատմական ինքնությանը հակառակվող նախադասություններ: Եթե դա նրան հոգեբանական տանջանքի ենթարկելու միտում չէ, ապա ի՞նչ է: Մի՞թե բազեներն ու արծիվներն արյունոտ որսամսի կտորները նախ իրենց ստամոքսներում չեն մարսում, հետո նոր ձագուկներին տալիս: Մեր երեխաները, մեր ձագուկները այդկերպ մատուցված պատմությունը ինչպե՞ս են կարողանալու մարսել:

Բարդ ու ցավոտ պատմության մասին խոսում ենք ամենաբարդ և ամենացավոտ կողմերով: Ամբողջությամբ փորձում ենք խոսել մահացածների և սպանվածների մասին: Համաձայնության չգալով զոհերի թվաքանակի շուրջ՝ քննարկում ենք, թե «ո՞վ է սկզբում սպանվել, ով՝ հետո, ո՞վ է շատ սպանել, ով՝ քիչ»: Տեղի ունեցածը «ցեղասպանությո՞ւն էր, թե՞ ոչ» հարցադրմանն ենք շարունակ կառչած մնում: Ի՞նչ պետք է անել հարցի քննարկման նպատակով հող նախապատրաստելու համար, ի՞նչ պետք է անել կողմերին կարգավորման գործընթացի մեջ ներգրավելու համար: Այս տեսանկյունից շատ կարևոր է, թե «ինչպես ենք կարողանալու նոր մոտեցումներով խոսել 1915-ի մասին»: Հարցը միայն մա-

հացածների և սպանվածների մասին չէ, ի՞նչ է, չե՞նք կարող մի քիչ էլ ապրողներից խոսել: Չէ՞ որ 1915-ի զոհերի հետ մեկտեղ կան նաև վերապրածներ: Նրանց թիվն ինչքա՞ն է: Նրանց հետ ի՞նչ եղավ, որքա՞նը կարողացան համալրել սփյուռքի շարքերը, որքա՞ննայս երկրում մնալով կարողացան շարունակել կյանքը: Եթե անգամ կարողացան շարունակել, ապա ինչպիսի՞ պայմաններում: Բոլորը մուսուլմա՞ն դարձան, բոլորին դավանափոխեցի՞ն: Հարկադրաբար կամ հոժարակամ իսլամ ընդունածները հետագայում այդ վայրերում ինչպե՞ս ապրեցին, այսօր նրանց սերունդները ինքնության ինչպիսի՞ գիտակցության կրողներ են: Եվ ինչո՞ւ 1915-ի մասին խոսելիս չպետք է կարողանանք քննարկել հար և նման մի շարք հարցեր: Եվ ինչո՞ւ չպետք է միավորենք փրկողներին ու փրկվածներին այդ ողբերգական իրադարձությունների մեջ:

Սակայն տեսնում ենք, որ վերապրածների մասին խոսելն ավելի վտանգավոր, ավելի դժվար է: «Ակօս»-ում մեր զետեղած տեղեկությունն այն մասին, որ Աթաթուրքի հոգեդուստր Սաբիհա Գյոքչենը հայկական ծագում ունի, սվիններով ընդունվեց՝ ապացուցելով, որ եթե Թուրքիայում հնարավոր է խոսել 1915-ի զոհերի մասին, ապա վերապրածների մասին՝ երբեք հնարավոր չի լինի: Բացի այդ, հայության շրջանում էլ վերապրածներից խոսելը բավականին դժվար է: Երևանում իմ ուսումնասիրությունների արդյունքում պարզեցի, որ այնտեղ էլ վերապրածների մասին որևէ գիտական աշխատություն չկա, և սրտները չի էլ ցավում դրա համար: Զգիտեմ, թե ճանաչված հայ մի պատմաբանի՝ թեմայի առնչությամբ ցուցաբերած մոտեցումը ձեզ այնպես կհուզի՞, ինչպես ինձ: «Վերապրածների վերաբերյալ որևէ ուսումնասիրություն չունենք: Բացի այդ, մենք կարծում ենք, որ նրանց թիվն ամենևին էլ քիչ չէ: Սակայն այդ ուղղությամբ որևէ հետազոտական աշխատանք անհրաժեշտ չենք համարում: Արդյունքում 1.5 մլն սպանված հայերի վերաբերյալ

պաշտոնական թեզ ունենք, որն էլ ավելորդ տեղեկությունների կարիք չունի»: Հասկանալի է, որ հենց այդ տեսակետի պատճառով տարբերություն չի դրվում վերապրածների և զոհվածների միջև: Վերապրածները նրանց համար, փաստորեն, չեն ապրում: Մինչդեռ այդ հողերում շարունակում են ապրել նրանց թոռներն ու ծոռները:

Անկասկած Հայկական հարցի հաղթահարման միակ ճանապարհը ժողովրդավարական քննարկումն է և խոսքի ազատությունը: «Ցեղասպանություն չի եղել» հայտարարության համար ԹՊԸ-ի նախագահ Յուսուֆ Հալաչօղլուի դեմ Շվեյցարիայում սկսված դատավարությունը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ անգամ Եվրոպան որոշ զգայուն հարցերում չի կարողանում պայքարել ժողովրդավարության հիմնական սկզբունքների՝ մտքի և խոսքի ազատության համար:

Հիմնական հաջողությունը պայմանավորված է ոչ թե դատական վիճիռներով կամ էլ պարտադրող օրենքներով, այլ բազմակարծության միջավայրի և խոսքի ազատության ապահովմամբ: Սխալ տեսակետները միշտ կարելի է հերքել միայն ազատության պայմաններում: Ճնշումը, պարտադրանքը և խոչընդոտները միայն կարող են սխալ տեսակետներն ավելի ամրապնդելու պատճառ դառնալ:

Գուցե հնարավոր կլիներ հասկանալ, եթե Շվեյցարիայում օրենքը սահմանափակվեր միայն իր հասարակության շրջանակներով: Այդ օրենքի ընդունմամբ պետք է սեփական ժողովրդին բացատրել, թե ինչ է իրենից ներկայացնում ցեղասպանությունը: Իսկ այն դեպքում, երբ ինֆորմացիան անկախ չէ, և դուք հասարակությունների նկատմամբ կիրառում եք նույն օրենքը, ինքնաբերաբար առաջ է գալիս հիմնական պարադոքսը: Այն հասարակություններում, որտեղ տեղեկացված լինելու իրավունքը բավականաչափ չի օգտագործվում, մարդիկ խոսում են իրենց իրազեկվածության չափով, և եթե պաշտպանում են այն, ապա դա ինչ-

պե՞ս եք հանցանք համարելու: Իսկ երբ դուք դա վերածեք հանցանքի, մի՞թե այդ անձնավորությանը միացրած չեք լինի ցեղասպանության դեմ պայքարին: Եթե մարդ գործում է իրազեկվածության իր չափով, ձեր ընդունած այդ օրենքն ինչպիսի՞ փոփոխություն կարող է մտցնել նրա հայացքներում: Այդ օրենքի հանդեպ ունեցած վախի պատճառո՞վ է դեմ լինելու ցեղասպանությանը, թե՞ իր մեջ արմատացած դեմ լինելու գաղափարի: Կարճ ասած՝ առանց այդ մտաուղղվածության փոփոխության ինչպե՞ս է լուծվելու ցեղասպանության հարցը:

«Հայոց ցեղասպանության» հարցի առնչությամբ անհրաժեշտ է ևս մեկ անգամ անդրադառնալ հետևյալ իրողությանը. այսօր Թուրքիայի առջև դրված խնդիրը ո՛չ «ժխտումն» է, ո՛չ էլ՝ «ընդունումը»: Նրա հիմնական խնդիրը «գիտակցելն» է: Էականը այն է, որ թուրք հասարակությունը հասնի պատմական իրողության գիտակցմանը: Սա հնարավոր է միայն Թուրքիայում ընթացող ժողովրդավարացման պայքարի զարգացմամբ: Իսկ գիտակցման գործընթացում Թուրքիան կարիք ունի պատմական լուրջ այլընտրանքային հետազոտության և անհրաժեշտ ժողովրդավարական միջավայրի: Գիտակցման գործընթացն ապրող հասարակության անդամներին ներսից պարտադրվում է ժխտում, իսկ դրսից քաղաքական ճնշումներով ու օրենքներով՝ ընդունում: Նման մեթոդը ամենամեծ հարվածն է՝ ուղղված գիտակցման գործընթացին: Չգիտակցված որևէ ժխտում կամ ընդունում որևէ մեկի համար շահեկան չէ: Իսկ այդ գործընթացը չգիտակցող կամ անտեսող արտաքին ճնշումները այն միայն ձգձգում են: Նրանք, ովքեր տեղի ունեցող գործընթացում թուրք հասարակությանը պարտադրում են ընդունել պատմական իրողությունը, եղածը որպես «ցեղասպանություն» որակել և խոստովանել, անտեղյակ են թուրք հասարակության այսօրվա իրականությունից: Արդյունքում, թուրք հասարակությունը ոչ թե իրողությունը իմանալով է ժխտում, այլ իր իմացածն է պաշտպանում: Այս հասարակու-

թյունն ինչպե՞ս կարող է 90 տարվա վաղեմության պատմական ցավերն ընկալել և բնորոշել, երբ գործն անավարտ է, ու իրավական գնահատական չեն ստացել դեռ երեկվա «Սուսուրլուքի դեպքը[1]», «Հրզբոլլահի դիակների» հայտնաբերման հետ կապված իրադարձությունները: Բացի այդ, հասարակությունը տարիներ շարունակ գտնվում է այս աստիճան ապատեղեկատվության տարափի ներքո:

Մշակվելիք անհրաժեշտ քաղաքականության գլխավոր առանցքը. Ընդհանուր շահի ոլորտները

Հակառակ այն բանի, որ ի վերջո իրականություն դարձավ հայության անկախ պետականություն ունենալու դարավոր իղձը, հայերի շրջանում դեռևս առկա են մտահոգություն և անհանգստության զգացում, ինչն անտեղի չէ... Հայկական ինքնության մեջ վճռորոշ դեր խաղացող իրողություն է... Փոխանակ նվազեն մտահոգություններն այն մասին, թե հնարավոր կլինի պահպանել Հայաստանի անկախությունը, անվտանգությունը, և որ ամենակարևորն է՝ երկրում և տարածաշրջանում կստեղծվի տնտեսական և ժողովրդավարական կայուն իրավիճակ, դրանք գնալով ավելանում են: Հայաստանի Հանրապետությունն անկախության հռչակումից անմիջապես հետո հանձն առավ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը, և այդ պատճառով խզվեցին նրա հարաբերությունները երկու հարևանների՝ Ադրբեջանի ու Թուրքիայի հետ: Օրա-

[1] Սուսուրլուքի դեպք - հայտնի է Սուսուրլուքի սկանդալ կամ Սուսուրլուքի ավտովթար անունով: 1996թ. նոյեմբերի 3-ին Սուսուրլուքի շրջանում տեղի ունեցավ ավտովթար, որի ժամանակ զոհվեց երեք մարդ, այդ թվում՝ Թուրքիայի անվտանգության ծառայության բարձրաստիճան մի պաշտոնյա և հանցավոր աշխարհի հեղինակություններից մեկը, ով երկար տարիներ հետախուզման մեջ էր գտնվում Ինտերպոլի և թուրքական հատուկ ծառայությունների կողմից: Իսկ վթարի ժամանակ ավտոմեքենայում գտնվող թուրք պատգամավորը ստացել էր մարմնական վնասվածքներ (Ծ.Թ.):

կարգում առկա հնարավոր կոնֆլիկտային մթնոլորտը տարածաշրջանում անկայունության ներկայիս հիմնական պատճառն է: Հայաստանը, որի սահմաններն ամբողջությամբ փակ են չորս հարևան պետություններից երկուսի հետ, հիշեցնում է աջից և ձախից սեղմված սենդվիչի: Ընդհանուր առմամբ, ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումից է կախված Հայաստանի՝ այդ նեղ կացությունից դուրս գալն ու իրական անվտանգության, հաստատուն կայունության ապահովումը: Քանի դեռ չի հանդուցալուծվել ղարաբաղյան խնդիրը, տարածաշրջանն ու Հայաստանը հանգիստ չեն ունենա: Այդ հարցի առկայությունը դժվարացնում է տարածաշրջանին և աշխարհին Հայաստանի ինտեգրումը:

Ղարաբաղյան հարցն ազդում է ոչ միայն քաղաքական, այլ նաև մեծամասամբ երկրի տնտեսական և ժողովրդավարական կայունության վրա: Հիմնականում այդ անկայուն մթնոլորտի պատճառով է, որ ակնկալվածի չափով չեն արվում սփյուռքի և օտար կապիտալի ներդրումներ Հայաստանում: Դեպի երկիր ուղղվելիք արտաքին կապիտալը սպասում է կայունության հաստատմանը: Իսկ ժողովրդավարական անկայունության տեսանկյունից Ղարաբաղի ունեցած դերը քննարկման ենթակա չէ: Ղարաբաղյան հիմնախնդրի հետ կապված քաղաքականությունը մեծամասամբ հանդես է գալիս ազգայնական և պահպանողական դիրքերից, ինչը շրջափակել է երկրի մյուս բոլոր քաղաքական ուժերին: Ղարաբաղի հարցի շուրջ ազերիների հետ յուրաքանչյուր հանդիպում կամ էլ առաջընթաց, իսկույն վերածվելով «ի՞նչ ենք անում, զիջմա՞ն ենք գնում» մեղադրանքի, դառնում է ներքաքաղաքական քննարկման նյութ՝ կապելով հիմնականում իշխանության ձեռքերը:

Այսպիսով, ղարաբաղյան խնդիրը տեսականորեն վերածվել է Հայաստանի ներքաղաքական մրցապայքարի: Իսկ այլ իրական ժողովրդավարական հարցեր դուրս են մնում և՛ իշխանության, և՛ ընդդիմության պայքարից:

Այդուհանդերձ, ղարաբաղյան հարցը մի շարք միջնորդ դերակատարների և գործոնների առկայության պատճառով հեշտ լուծվող հարց չի թվում: Տարածաշրջանի գլխավոր դերակատարներից Ռուսաստանը, հարցի լուծմանը միջնորդող ԵԱՀԿ Մինսկի խումբը, Վրաստանի միջոցով տարածաշրջանում ամրապնդվել սկսող ԱՄՆ-ն և անգամ ազդեցություն չունեցող Թուրքիան, մինչ օրս չեն կարողանում գտնել հարցի լուծումը: Նրանց տեսանկյունից մինչև այսօր ունեցած ամենամեծ ձեռքբերումը հրադադարի հաստատումն ու պահպանումն է: Սակայն բուն հարցի առնչությամբ նշանակալի ներդրումներ դեռևս չկան: Արդյունքում արտաքին այդ դերակատարներից յուրաքանչյուրը տարածաշրջանում ունի իր շահերը, ու նրանց միջամտությունը խնդրի կարգավորումը հեշտացնելու փոխարեն ավելի է բարդացնում: Սրա մասին բազմիցս արտահայտվել են և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի նախագահները: Քանի դեռ մասնավոր շահերը չեն հանգել ընդհանուրին, հարցի լուծումը, ցավոք, անհնար կլինի թե՛ միայն կողմերին թողնելու դեպքում, և թե՛ ուրիշների միջամտության դեպքում: Ահա թե ինչու տարածաշրջանում անհրաժեշտ հիմնական քաղաքականությունը պահանջում է ստեղծել ընդհանուր շահի ոլորտներ և ընդհանուր շահերը վեր դասել մասնավորից:

Տարածաշրջանի երկրների միջև ընդհանուր շահի ոլորտների ստեղծումը միայն նրանց ջանքերով անհնար է: Այդ ոլորտների ստեղծումը հիմնականում պետք է իրականացվի արտաքին դերակատարների աջակցությամբ: Մինչ օրս տարածաշրջանում ընդհանուր շահի ոլորտների ստեղծումը, ցավոք, ցանկալի մակարդակի չի կարողացել հասնել: Սրանցից գլխավորը Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀԿ) մեջ Հարավային Կովկասի երեք փոքր հանրապետությունների ընդգրկումն էր, սակայն եթե ՍԾՏՀԿ-ն օգտակար էլ լինի, այն սահմանափակվում է հստակ մեխանիզմներով ու նախագծերով: Իսկ

ՍԾՏՀԿ-ում Թուրքիայի առաջարկած Կովկասյան կայունության պակտը չարժանացավ Հայաստանի հավանությանը՝ «Թուրքիան անկողմնակալ չէ» պատճառաբանությամբ: Հնարավոր է, որ այդ մոտեցման մեջ իր մեծ դերը խաղաց Ռուսաստանի բացասական կեցվածքը: Իսկ հայերը, ցավոք, ամբողջությամբ դուրս մնացին իրականացվող ընդհանուր շահի նախագծերից: Բաքու-Ջեյհան նավթամուղը այդ մեկուսացման կարևոր օրինակներից է: Մինչդեռ, եթե այդ նավթամուղն անցներ Հայաստանով, գուցե այսօր կարագացներ ղարաբաղյան հարցի կարգավորումը: Սակայն տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերած խմբերի շահերն առավել կարևոր էին: Չնայած ավելի ռացիոնալ էր Հայաստանին օգտագործել որպես միջանցիկ ճանապարհ, այնուամենայնիվ ազերիների կտրուկ կեցվածքի պատճառով Հայաստանին նման առաջարկ չարվեց:

15 տարվա անկախություն ունեցող «Հարավային Կովկասի փոքր հանրապետությունները» «անկախ գործել» և «անկախ մնալ» կարողանալու համը նոր են միայն զգում: Անկախության բացակայության շրջանում բացառապես ԽՍՀՄ-ի միջոցով իրականացվող բոլոր շփումները անկախությունից հետո տեղափոխվեցին ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ՍԾՏՀԿ-ի, Եվրախորհրդարանի, ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի պես միջազգային կազմակերպությունների և միություններ հարթություն: Ի թիվս սրա, աշխարհի տարբեր պետությունների հետ հիմնած և զարգացրած երկկողմ հարաբերություններն օրեցօր խորանում են: 15 տարվա ընթացքում հազիվ քայլող «Կովկասի երեք փոքրիկները» այսօր արդեն անկախության չափահաս տարիքում են:

Եվրախորհրդի կազմում միաժամանակ ընդգրկվելը Հայաստանում և Ադրբեջանում առաջ բերեցին ոգևորության նոր ալիք: Ավելի վաղ Եվրախորհրդին անդամակցած Վրաստանի հետ միասին երեք երկրները միմյանց արդեն որոշ չափով ճանաչեցին «եվրոպականացմամբ»: Բացի այդ, արտաքին աշխարհի հետ

շփման մեծացումը ճանապարհ հարթեց ներքին դրական փոփոխությունների համար: Եվրոպայի հետ մերձեցումը արագացրեց Հայաստանում իրականացվող ժողովրդավարացման գործընթացը: Արդեն Հայաստանի խորհրդարանի և կառավարության աշխատանքների մի նշանակալի մասն ուղղվեց ժողովրդավարական իրավական պետություն ստեղծելուն, և կարող ենք սահմանադրական ու օրենսդրական փոփոխությունների ականատեսը լինել: Նման փոփոխություններ են կատարվում նաև Ադրբեջանում և Վրաստանում:

ԱՄՆ-ի և ԵՄ-ի միջև երբեմն մրցակցության, երբեմն էլ ընդհանուր շահագրգռվածության վերածված «տարածաշրջանային հետաքրքրությունը» աստիճանաբար սկսում է ավելանալ ու դառնալ որոշիչ: Թուրքիան մինչ օրս տարածաշրջանում իր քաղաքականությունը սահմանափակել է միայն Ադրբեջանով և Վրաստանով, չի կարողացել զգալի նախաձեռնությամբ հանդես գալ և միշտ ուշացել է: Թուրքիան մի տեսակ միջնորդ է ԱՄՆ-ի, ԵՄ-ի և Ռուսաստանի միջև մշտապես ընթացող մրցակցությունում: Դարձյալ անդրադառնալով տարածաշրջանի նկատմամբ Եվրոպայի հետաքրքրությանը և «Թուրքիայի միջոցով Կովկասին հարևան լինելու» նրա ծրագրին, ԱՄՆ-ի կովկասյան քաղաքականությունը Թուրքիայի միջոցով իրականացնելուն, կարող ենք ասել, որ դրանք ինչքան էլ ձգձգվեն, միևնույն է, Թուրքիայի նշանակությունը տարածաշրջանում մեծանում է: Որքան էլ Արևմուտքը Թուրքիայի միջոցով դեպի Կովկաս տարածվի, հարավկովկասյան հանրապետությունների դեպի Արևմուտք ուղղվելը նույն ձևով իրականացվելու է Թուրքիայի միջոցով: Այսպիսով, Թուրքիայի՝ օրերից մի օր ԵՄ-ին անդամակցելու հնարավորությունը հույս ներշնչեց կովկասյան այդ երկրներին՝ «ինչո՞ւ մենք էլ չանդամակցենք»:

Այսօր դեռևս հնարավոր չէ քննարկել դա, բայց այդ հույսը Կովկասի երիտասարդ հանրապետություններում մեծ ոգևորու-

թյուն և ուրախություն կարող է առաջացնել: Տարածաշրջանին առաջադրվելիք այդպիսի մի նախաձեռնությունը հավակնում է դառնալ ընդհանուր շահի իրական ոլորտ և տարածաշրջանի խաղաղության ու կայունության ապահովումը հեշտացնող նախագիծ: Եվրամիությունը շատ լավ գիտակցում էր, որ այդ նախաձեռնությունը տարածաշրջանում առաջ կբերի ոգևորություն, և երեք երկրներին միանգամից «Եվրամիությանը հատուկ հարևանության կարգավիճակի» հեռանկար առաջարկելով՝ տարածաշրջանում սկսեց ավելի ազդեցիկ դառնալ: Կովկասում Եվրամիության ընդհանուր շահերի ոլորտ ստեղծելու գաղափարը և՛ Թուրքիայի, և՛ կովկասյան երկրների տեսանկյունից ոգևորիչ է... ՆԱՏՕ-ի վերջին գագաթաժողովի հետ մեկտեղ Թուրքիան իր ստանձնած նոր առաքելությամբ սկսեց Կովկասում ավելի ազդեցիկ քաղաքականություն վարել: «Թուրքիայի միջոցով եվրոպականություն, Թուրքիայի միջոցով դեպի Արևմուտք» մոդելով բնորոշվող առաքելության իրականացմամբ ամբողջովին փոխվելու է տարածաշրջանի դեմքը: Սակայն դեռ հարց է՝ կկարողանա՞ Թուրքիան իրականացնել այդ առաքելությունը:

Եվրոպայի դիվանագիտական ուղեծրում առկա հարցերը հավանաբար հետաքրքրում են նաև թուրքական արտաքին քաղաքականությանը, որովհետև հնարավոր զարգացումներն ավելի են մեծացնում հետաքրքրությունը Թուրքիայի ապագայի համար: Իսկ այդ հարցերից ներկայումս ամենաքիչ շրջանառվողը հետևյալն է. «Եթե վիճակն այսպես շարունակվի, ապա հնարավո՞ր է, որ Եվրոպան Հայաստանին և կովկասյան մյուս երկրներին ավելի շուտ ընդգրկի ԵՄ-ի կազմում, քան Թուրքիային»: Այս հարցի պատասխանը նախ և առաջ այնքան հեռու է իրականությունից, որ հնարավոր է՝ հարցն ինքնին ընկալվի որպես մի ռոմանտիկ հարց, որի պատասխանով չեն էլ հետաքրքրվում: Սակայն ամեն դեպքում օգտակար կլինի, որ մեր դիտարկումներում հարցն ընկալենք ոչ ուտոպիստական և փոքր քայլեր անենք այդ ուղղությամբ:

Եթե ուշադրություն դարձնենք, ապա կնկատենք, որ հարցը սկսվում է հետևյալ պայմանով. «Եթե վիճակն այսպես շարունակվի»: Այդ դեպքում անհրաժեշտ է նախ և առաջ վերլուծել «ընթացքը»: Այդ իրավիճակում պատկերը շատ հստակ է... Ինչպես Թուրքիան, այնպես էլ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանն իրենց հայացքն ուղղել են դեպի ԵՄ: Նրանց նպատակը լիիրավ անդամակցությունն է՝ միևնույն ժամանակ գիտակցելով, որ ներկայումս դա շատ դժվար է իրենց առջև ծառացած բազում խոչընդոտների պատճառով: Դրանցից առաջինն այն է, որ Եվրամիությունն արդեն ցանկություն չունի ավելի ընդլայնվել: Հատկապես ԵՄ անդամ երկրների հասարակական կարծիքում յուրաքանչյուր ընդլայնում ընկալվում է իբրև սեփական չափանիշներից հեռացման փորձ, և իշխանություններին ստիպում են հրաժարվել այդ մտքից: Այս ճնշումը գնալով ուժեղանում է: Ակնհայտ է, որ ընդլայնման գործընթացի շարունակությունը կարող է հանգեցնել ԵՄ հիմքերի խարխլմանն ու մինչև անգամ փլուզմանը: Որոշ երկրներում, հատկապես Ֆրանսիայում, սահմանադրական փոփոխությունները ընդլայնման այդ քաղաքականությանը հակազդելու հիմնական պատճառն են: Ահա թե ինչու ներկա պահին Կովկասի երկրների և, բնականաբար, Հայաստանի ԵՄ անդամակցությունը իսկապես նման է մի ռոմանտիկ ակնկալիքի: Դրանից բացի, պետք է հիշել, որ դեռևս Թուրքիայի անդամակցությունն է հարցականի տակ...

Մի կարևոր հանգամանք ևս. ԵՄ անդամ պետություններում «Հայոց ցեղասպանության ճանաչման» առնչությամբ ավելացող համաձայնության առկայությունը: Այդ համաձայնությունն ավելի ընդգծվեց, երբ Ֆրանսիային հետևեց Գերմանիան: Ավելին, նույնիսկ Անգլիան, որ ամեն հարմար առիթով միշտ աջակցում է Թուրքիային, հավանական է, որ միանա այլ խմբի: Վերջերս, երբ Թուրքիան նամակով բրիտանական խորհրդարանից պահանջել էր վերանայել «Կապույտ գիրքը», պետք է զարմանալի չթվար հնա-

բավոր հակառակ արդյունքը: Արդյո՞ք Եվրոպայի երկրներից յուրաքանչյուրում աստիճանաբար իր տեղը գտնող այդ համաձայնությունը կվերածվի մի նոր քաղաքականության, արդյո՞ք այդ նոր քաղաքականությունը չի ընկալվի որպես «դրական խտրականություն Հայաստանի նկատմամբ», և որ ամենակարևորն է, արդյո՞ք դա այն հիմնական որոշիչ հարցն է, որով պայմանավորված է Հայաստանի ԵՄ անդամակցությունը: Իսկ հարցի պատասխանը սերտորեն կապված է Թուրքիայի հետագա գործելաոճի հետ:

Գերմանական խորհրդարանում «Հայոց ցեղասպանության» հետ կապված լիագումար նիստի և մինչև այսօր եվրոպական այլ երկրներում տեղի ունեցած նման միջոցառումների միջև կա էական տարբերություն: Գրեթե բոլոր խմբակցությունների ներկայացուցիչները միաձայն հանդես եկան և, մի կողմ թողնելով Թուրքիան, սկսեցին հարցաքննել իրենք իրենց: Խոսում էին պատմության իրադարձություններում իրենց պատասխանատվության մասնաբաժնից: Արդյունքում գերմանական խորհրդարանի կողմից «Հայոց ցեղասպանության» վերաբերյալ այդ ուղղությամբ ընդունվեց մի ընդհանուր որոշում: Այդ որոշման մեջ հիմնական թիրախը ոչ թե Թուրքիան էր, այլ հենց իրենք: Այդ նոր մոտեցումը, անշուշտ, կունենա իր հեռանկարը: Կարևոր զարգացում է, երբ Եվրոպան տեր է կանգնում պատմության մեջ ունեցած իր պատասխանատվությանն ու գիտակցում դա: Բացի այդ, պետք է կարևորել ոչ միայն այդ պատասխանատվության գիտակցումը, այլ նաև անցյալի հատուցումը: Իսկ դա հայտնի է, թե ինչպես... Երկու ժողովուրդների միջև հարաբերությունների խզման պատճառ դարձան եվրոպացիները, հիմա էլ պետք է օժանդակեն այդ հարաբերությունների վերականգնմանը: Թուրքիայի և Հայաստանի միջև ընդհանուր շահի ոլորտներ ստեղծելու համար պետք է գործի դրվեն բոլոր ռեսուրսները:

Հնարավոր է, որ Եվրոպան ունի այդ հարաբերությունները վերականգնելու ցանկություն: Ե՛վ Եվրախորհրդարանից, և՛ յուրաքանչյուր եվրոպական երկրից արվող առանձին հայտարարություններն ուղղված են Թուրքիայի և Հայաստանի՝ որպես երկու լավ հարևանի միջև հարցերի լուծումները խրախուսելուն, որոնք մի քիչ էլ ստիպողական բնույթ ունեն: Դրանք բնավ էլ անհանդուրժողական չեն: Այնպես որ, Հայաստանի նկատմամբ Թուրքիայի նոր մոտեցման մեջ առկա է ոչ միայն Միացյալ Նահանգների, այլ նաև Եվրոպայի խորհրդատուի դերը: Այդ պատճառով կարող ենք ասել, որ ԵՄ-ի՝ ներկայումս Թուրքիայի և Կովկասի երկրների նկատմամբ որդեգրած քաղաքականությունը շատ ճիշտ ուղու վրա է: Թուրքիայի և Կովկասի երկրների ճակատագրերը միմյանց կապող այդ ճիշտ քաղաքականությունը նպատակ ունի Թուրքիայի՝ ԵՄ անդամակցությամբ մյուսներին ևս մոտեցնել Միությանը և նույնիսկ ընդգրկել նրա կազմում: Այլ կերպ ասած՝ նման ձևով ստեղծվել է ընդհանուր շահի ոլորտ:

Լավ, իսկ եթե Թուրքիան ԵՄ անդամակցության ճանապարհին կամակորություն անի կամ գործընթացն արհեստականորեն երկարաձգի, այդ դեպքում կփոխվի՞ այդ քաղաքականությունը: Եվ եթե փոխվի, ապա ո՞ր ուղղությամբ: Նման հարց կարելի է բարձրացնել Թուրքիա-Հայաստան հարաբերությունների տեսանկյունից: Եթե Թուրքիան հապաղի և շարունակի հատկապես Հայաստանի հետ քաղաքականության մեջ իր ամբարտավան և հարաբերությունների հետաձգմանն ուղղված կեցվածքը, ապա այդ դեպքում մի՞թե Հայաստանը ջանք չի գործադրի փոխելու վերոնշյալ քաղաքականությունը: Այսօրվա իրականությամբ հարցերի պատասխաններն իրոք ուտոպիստական կամ ռոմանտիկ են: Այն դեպքում, երբ դեռ Թուրքիան չի անդամակցում Եվրամիությանը, խոսել Եվրոպայի հետ աշխարհագրական որևէ առնչություն չունեցող կովկասյան երեք հանրապետությունների ու հատկապես Հայաստանի անդամակցության մասին, բավական դժվար է: Սակայն չպետք է մոռանալ սփյուռքահայության գործոնը, որը ներկայումս այդ ուղղությամբ հանդես չի գալիս որևէ

նախաձեռնությամբ և իր ողջ ջանքերը գործադրում է ցեղասպանության ճանաչման հարցում Թուրքիային ճնշելու համար: Իսկ եթե նույն այդ սփյուռքը սթափվի և Թուրքիայի փոխարեն զբաղվի Հայաստանի ապագայով ու իր նպատակը դարձնի նաև Հայաստանի ԵՄ անդամակցությունը, այդ ժամանակ էլ ռոմանտիկ ակնկալիքը կվերածվի ռեալ քաղաքականության: Այդ դեպքում հայտնի չէ, թե ԵՄ-ն ինչպես կդիմակայի սփյուռքին: Եթե սփյուռքի յուրաքանչյուր հատված բնակություն հաստատած իր երկրում այդ ուղղությամբ աշխատի և տեղի իշխանությունների վրա ճնշում գործադրելով դրական խտրականություն պահանջի, ապա կարող է այսօրվա բավականաչափ ռոմանտիկ այդ կանխատեսումը վերածել իրատեսական քաղաքականության:

Ղարաբաղյան հիմնախնդիրն այսօր այն խոչընդոտներից մեկն է, որը թույլ չի տալիս Եվրոպային դրական խտրականություն ցուցաբերել Հայաստանի նկատմամբ: Եվրոպան, որն աստիճանաբար ավելի է բարձրացնում իր ձայնը Ադրբեջանի տարածքային ամբողջականության առնչությամբ, շատ հավանական է՝ դրական մոտեցում ցուցաբերի Հայաստանի նկատմամբ՝ վերջինիս կողմից ղարաբաղյան հարցի լուծման դեպքում:

Ընդհանրացում... Խոսում ենք այն Եվրոպայի մասին, որը սկսել է աստիճանաբար գիտակցել իր խաղացած պատմական դերը, ունեցած պատասխանատվությունը և անցյալի հատուցման անհրաժեշտությունը... Խոսում ենք այսօր քնած, բայց վաղն արթնանալու դեպքում կարևոր գործոն հանդիսացող սփյուռքի գոյության մասին... Խոսում ենք այն մասին, որ երբ սթափվի սփյուռքը, անցյալի հատուցումը կարող է վերածվել դրական խտրականության, ինչն էլ Հայաստանի համար կարող է վերածվել իրավունքի ճանաչման... Ճիշտ որ, ներկայիս բոլոր ռոմանտիկ կանխատեսումները սրանք են: Սակայն կա նաև մեկ այլ բան. այս ամենը մեծապես կախված է Թուրքիայի պահվածքից: Իսկ որոշ կանխատեսումներ այդպես էլ ռոմանտիկ կմնան, թե՞...

Վախի փոխարեն ցանկություն

Թուրքիայում Եվրամիության անդամակցության ճանապարհին ժողովրդի վճռականությունը պետական համակարգում ունի հարկադրական բնույթ: Հիմնականում պետք է դիտարկել Թուրքիայի այդ «ստիպողական վճռականությունը»: Թուրքիայում իշխանության ավանդական օլիգարխիկ համակարգի պետական հետևողականությունն ինչպե՞ս կհանդուրժի համաձայնել իր գերիշխանության մի մասի գնով կողմնորոշվել դեպի Եվրամիություն: Ինչպե՞ս կհամակերպվի երկար տարիներ իր համառ քաղաքականությունից հրաժարվելու մտքին Եվրամիությանն անդամակցելու համար: Ո՞րն է այդ անելանելի վիճակից դուրս գալու ուղին. արևմտյան արժեքներ դավանելու ցանկությո՞ւնը, թե՞ արևելյան մնալու վախը:

Շատ հանգիստ կարող ենք ասել, որ Թուրքիան և Եվրամիությունը ոչ թե ձգտում են միմյանց, այլ՝ վախենում մեկը մյուսից: Եվրամիությանը չանդամակցելու դեպքում ապագայում կնվազի Թուրքիայի ռազմավարական նշանակությունն աշխարհում: Մինչևանգամ Թուրքիայի Հանրապետության զինվորականների ուշադրության կենտրոնում է ՆԱՏՕ-ի պես մաշված կառույցից դուրս մնալու հավանականությունը, ինչն էլ օգնում է հասկանալ, որ օլիգարխիկ իշխանությունն իր զբաղեցրած դիրքերից ետ քաշվելու հնար չունի... Իսկ Եվրոպայի հիմնական երկյուղը և Թուրքիային Եվրամիության կազմում ընդգրկելու միակ հիմնավորումը հետևյալն է. Եվրոպայից դուրս մնացած Թուրքիան կդառնա աշխարհի կենտրոն նետված պայթուցիչ և անհայտ է, թե «քաղաքակրթությունների բախման» ժամանակ որտեղ կհայտնվի:

Թուրքիայի և Եվրամիության հարաբերությունները որոշող գլխավոր գործոնը բխում է ոչ թե փոխադարձ «ցանկությունից», այլ՝ փոխադարձ «երկյուղից»:

Քանի որ այդ հարաբերության շարժիչ ուժը վախն է, հարաբերությունները երկու կողմի համար էլ և՛ անխուսափելի են, և՛

միևնույն ժամանակ ծանր: Կողմերն առաջ են շարժվում ոչ թե «ցանկության», այլ «վախի» շարժիչով: «Վախով» աշխատող այդ շարժիչները քանի դեռ չեն վերածվել «ցանկությամբ» աշխատող շարժիչների, ճանապարհը բավականաչափ կերկարի:

Իսկ ժամանակ առ ժամանակ կողմերի՝ «չենք ընդդրկի» կամ էլ «չենք անդամակցի» արտահայտություններով միմյանց վախեցնելու փորձերի ետևում առկա հոգեբանական պատճառը, ըստ երևույթին, հայտնի է: Փոխադարձ վախ ներշնչելու այդ փորձերը կազմված են միմյանց համոզելուց և ինքնախաբեությունից, որովհետև իրականության հրամայականը սա է. «Վախեցնել՝ նշանակում է հենց վախենալ»:

Մյուս կողմից, վախը հեռանկար չունի... Եթե Թուրքիան վախը փոխարինի ցանկությամբ ու սեփական կամքով կարողանա ուղղվել դեպի Եվրոպա, իր առջև դրված հարցերը ավելի համարձակորեն կկարողանա լուծել: Նմանապես Հայաստանի հետ հարաբերությունների հարցում էլ ուրիշների ստանձնած առաքելությունն ինքը կարող է հոժարակամ իրականացնել: Այդ ճանապարհն էլ անցնում է Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունների հաստատման և ընդհանուր շահի բնագավառների ստեղծման միջով: Դիվանագիտական հարաբերությունների հաստատման դեպքում այդ բնագավառները կավելանան: Եթե Թուրքիան իր արտաքին քաղաքականության մեջ առաջնորդվի «վաստակի՛ր ու շահի՛ր» բանաձևով, ապա հնարավոր է, որ «Արդարություն և զարգացում» իշխող կուսակցությունը այդօրինակ քաղաքականություն զարգացնի Հայաստանի նկատմամբ: Էներգետիկ, գյուղատնտեսական, արդյունաբերական, շինարարական, զբոսաշրջության, սպասարկման և մի շարք այլ ոլորտներում երկու երկրների միջև համատեղ նախագծերի իրականացումը բնավ էլ դժվար չէ: Այդ դեպքում, անկասկած, մեծ կլինի աշխարհի աջակցությունը:

Թուրքիայի և Հայաստանի միջև ընդհանուր շահի ոլորտների ստեղծումը կարևորվում է երկու հիմնական գործոնով: Առաջին՝

այդ ոլորտներում համատեղ ներդրավվածության և ընդհանուր թերապիայի հնարավորությունն... Երկրորդ՝ ընդհանուր շահի ոլորտներում ապահովելով նաև սփյուռքի ներդրավվածությունը կսկսի մեղմանալ վերջինիս վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ: «Փոխադարձ օգնության» ընկալմամբ այդ ոլորտների ստեղծումը հետագայում կարող է ապահովել մեկ օգուտ ևս. ինքնաբերաբար կհանգեցնի «փոխհատուցում վճարելու» հարցի լուծմանը, որից այսօր Թուրքիան շատ է վախենում, իսկ հայերն էլ մտքից չեն հանում: Այսօր վրեժի դիրքերից դրված փոխհատուցման հարցը ժամանակի ընթացքում ինքնըստինքյան կփոխհատուցվի փոխադարձ օգնության ընկալմամբ և համակեցությամբ: Վաղվա վատ սպասելիքները կամ վրեժի մտավախությունները կարող են վերանալ միայն ու միայն երկուստեք բարի նպատակների և համերաշխության դեպքում:

Իսկ ողջ այս գործընթացը սերտորեն կապված է կողմերի որդեգրած ոճի հետ: Սակայն Թուրքիայի ներկայիս ոճը, ցավոք, սպասված մակարդակից հեռու է:

Բնականաբար, հայության վրա հակառակ ազդեցություն են ունենում Թուրքիայի այնպիսի մոտեցումները, ինչպիսին է «Հայաստանին ազատելով սփյուռքից ունեցած տնտեսական աջակցության ակնկալիքներից՝ կկրճատենք սփյուռքին տրվելիք գիջումները» մոտեցումը: Հայությունը Հայաստանի և սփյուռքի հետ մեկ ամբողջություն է կազմում: Շահեկան է այն ոճը, որի կիրառման դեպքում լուծման բոլոր առաջարկները կներառեն այդ ամբողջությունն ու չեն տարանջատի այն: Նույն ձևով դարձյալ որոշ շրջանակների կողմից արվող «Հայաստանի բնակչությունը ինչ է որ... մեզ հետ թող լավ լինեն, մենք էլ նրանց տեր կկանգնենք» արտահայտությունը ինքնահավան ոճով է, և չպետք է մոռանալ, որ դա վիրավորում է հակառակ կողմին: Անիմաստ է, երբ Թուրքիան փորձում է Հայաստանի հանդեպ նոր մոտեցում ցուցաբերել, սակայն հին ոճով: Նոր նախաձեռնությունը նոր ոճով պետք է զարգացնել...

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայ-թուրքական հարաբերությունների բացակայության վերաբերյալ գրածս տողերը հիմնականում նոր տեսակետներ չեն: Վերջին տասը տարիների ընթացքում այս հարցի շուրջ ինչ որ գրել եմ և ինչ էլ որ պիտի ասեի, դրանց մեկ բովանդակությունն է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ողջ այդ ընթացքում ունեցել եմ խոչընդոտներ, հարկ եմ համարում ընթերցողին տեղեկացնել, որ չէի ցանկանա մեկ անգամ ևս նման իրավիճակում հայտնվել:

Որպես Թուրքիայում բնակվող հայ, տարբեր հասցեատերերի դիմելիս հատկապես երկու հանգամանք եմ կարևորել. առաջին՝ տվյալ հասցեատիրոջը քննադատելու կարողությունը, երկրորդ՝ այդ հասցեատերերին միմյանց հետ չշփոթելը... Ցավոք, այդ հասցեատերերը մեծամասամբ նույն կարևորությունը չտվեցին: Եվրոպացիների հետ խոսելիս նրանց եմ քննադատել, սակայն իմ այս քննադատություններից հայերը կամ թուրքերը, իրենց բաժինը ստանալով, կարծիքները փնովել կամ գովաբանել են: Թուրքերի հետ էլ խոսելիս նրանց եմ քննադատել, բայց, սրանից էլ եվրոպացիները կամ հայերը իրենց բաժինը ստանալով, քննադատություններին ուղղել են պարսավանքի կամ գրվատանքի խոսքեր: Բնականաբար, հայերի հետ էլ խոսելիս նրանց եմ քննադատել, սակայն դրանից էլ հատկապես թուրքերը, իրենց բաժինը ստանալով, ձևակերպումները հանդիմանել կամ գովաբանել են: Կարծում եմ, որ դա ինձ նման մեկի համար այսուհետև անխուսափելի մի խոչընդոտ է դառնալու: Սակայն ինչ արած, այս ամենի դեմ ես անկեղծ լինելուց բացի այլ միջոց չունեմ: Եթե հասցեատերերն ինձ չփոթեն, միևնույն է, ես նրանց չեմ չփոթի, սա է ամբողջը...

Այստեղ ևս մեկ անգամ կցանկանայի կրկնել «սա ցեղասպանությո՞ւն էր, թե ոչ» քննարկումների հետ կապված իմ ընկալումները: Ես ոչ կարող էի մասնակցել ապրիլի 24-ին կազմակերպվող երթին, ոչ էլ՝ իմ նախնիների հիշատակը հավերժացնող հուշակոթողներ կանգնեցնել: Սակայն նրանց ոչ այն օրերում թողեցի, ոչ էլ մեր օրերում քարացրի: Ստանձնեցի նրանց իմ մեջ ապրեցնելու գործը: Ուժերիս սահմաններում նրանց իմ ապագան տարա: Ես մաքառում էի «ամենքի» և «ամեն ինչի» դեմ, ով կփորձեր կանգնել նպատակիս ճանապարհին: Իհարկե, ես գիտեմ նախնիներիս հետ պատահածը: Սա ձեզանից ոմանք համարում են «կոտորած», ոմանք՝ «ցեղասպանություն», ոմանք՝ «տեղահանություն», ոմանք էլ՝ «ողբերգություն»: Իմ նախնիներն էլ Անատոլիա բառն արտաբերելիս «ջարդ» էին ասում: Երբ մի պետություն իր քաղաքացիներին, այդ թվում անպաշտպաններին, նշանակություն չտալով՝ երեխա, կին, տարեց, իրենց միջավայրից արմատախիլ անելով, անհայտ և անծայրածիր ճանապարհներ է հանում, և դրա հետևանքով էլ ոչնչանում է մի ժողովրդի մեծ մասը, այսօր, երբ մենք պատեպատ ենք խփվում՝ կատարվածը բնութագրելու բառեր գտնելու համար, մեր մարդ լինելու առանձնահատկությունը էլ ո՞ր բնորոշմամբ պետք է սահմանել: «Սրան ցեղասպանությո՞ւն ասենք, թե՞ գաղթ». եթե նման խորամանկություններ ենք անելու և երկու դեպքում էլ նույն ձևով չենք կարողանալու դատապարտել՝ ցեղասպանության փոխարեն տեղահանություն կամ էլ տեղահանության փոխարեն ցեղասպանություն բառը նախընտրելով, մեր մարդկային ծագման արժանապատվության ո՞ր մասն ենք կարողանալու փրկել:

Իմ բողոքը կապված է ոչ թե միջազգային ասպարեզ իջեցված

արտահայտությունների բովանդակության, այլ այդ արտահայտություններն ընտրված ընագավառում և պատեհ առիթով կիրառելու հետ:

Սկսենք «ընագավառից»:

Մենք՝ այսօրվա հայերս, որ փորձում ենք շարունակել 90 տարի առաջ պատմական դրամա ապրած դժբախտ մարդկանց գոյությունը, մինչև ե՞րբ ենք թույլ տալու, որ աշխարհի տարբեր պետությունների խորհրդարաններ դա արդիական քաղաքականության նյութ դարձնեն: Մի՞թե ձևացնելու ենք, թե չենք տեսնում, որ այդ հարցը օրակարգում ընդգրկողների հետևում իրենց քաղաքական և ազգային ակտուալ շահերն են: Դեռ որքա՞ն պետք է թույլ տանք և նախաձեռնող լինենք, որ անցյալի մեր այս դրաման կապիտալ դառնա ուղղաթիռների վաճառքի և ընտրությունների ժամանակ կամ երրորդ ազգերի շահադիտական նպատակների համար: Մի՞թե այսպես ենք վճարելու մեր պարտքը նախնիներին: Մի՞թե այսպես ենք ապացուցելու մեր նախնիների հետ ունեցած կապը: Ահա ճշմարտությունն իր ողջ մերկությամբ... Մի՞թե ցեղասպանության բանաձևերով հետաքրքրվողներն իրենց քաղաքականությունը չեն փոխում օրվա թելադրանքով: Ո՞րն է այստեղ մարդկային մոտեցումը և որը՝ բարոյական: Մի՞թե ժամանակը չէ, որ հայությունը գիտակցի այդ խեղկատակությունը:

Քանի դեռ չենք ազատվել սերնդեսերունդ փոխանցվող հոգեխեղումից, հայությունը խաղաղ ապագա ստեղծելու հնարավորություն չի ունենա: Մեր պատմության ընթացքի մութ դրվագին կառչած մնալը վկայում է այդ խեղման մասին: Դժբախտաբար, մենք չենք կարողանում պատմության այդ մութ հատվածից որևէ կերպ տեղափոխել մեզ ներկա: «Ի՞նչ, այսինքն մոռանա՞նք այդ օրերը»,- անկասկած այսպիսի մի հարց կարող է հնչել: Սա դատարկ հարց է... Մոլորությունն է խեղումից ազատվելն ու կազդուրվելը ընկալել որպես «անցյալի մոռացում»: Մարդ սեփական

անցյալը ինչպե՞ս կարող է մոռանալ, ինչո՞ւ մոռանալ: Բայց եթե փորձ է արվում մի ազգի գոյությունը շարունակել՝ սնելով նրա ներկան ու ապագան միայն այդ մութ դրվագով, ապա ի՞նչ է դա, եթե ոչ խեղումային վիճակ: Ահա թե ինչու բժշկի, դեղատոմսի և բուժման ձևի ճիշտ ընտրությունը մեծ կարևորություն ունի:

Ասելով, թե «հայկական հարցի քննարկման ասպարեզը պետք է լինեն ոչ թե երրորդ երկրների խորհրդարանները, այլ հենց իրադարձությունների հիմնական կողմերը և մեր տարածքները», միևնույն ժամանակ ուզում ենք մատնանշել, թե որտեղ կարելի է գտնել բուժումը: Արդյո՞ք բավարար չէ, որ միայն երկու ժողովուրդների միջև ծավալվելիք երկխոսությամբ այս հարցը դադարի խնդիր լինելուց: Մեր պատասխանը շատ հստակ է. «Այո, բավարար է, և, ըստ էության, այլընտրանք չկա»: Նույնիսկ եթե սա դիտվի չափից դուրս լավատեսություն, մենք չպետք է խուսափենք ասել հետևյալը. ո՞վ կարող է պնդել, որ երկու երկրների միջև առանց նախապայմանների հիմնվելիք նորմալ հարաբերություններն ու երկխոսությունն այնպիսի հիանալի զարգացումներ կարող են ապահովել, որ թուրքական կողմի՝ «եկեք հիմա էլ մի քիչ մեր պատմությունից խոսենք» առաջարկին ի պատասխան՝ հայերը չեն ասի. «Մի՞թե հիմա դրա ժամանակն է, եկեք մի կողմ դնենք անցյալն ու զբաղվենք մեր ժողովուրդներին երջանկացնելու համար սկսած մեր համատեղ գործերով»:

Մենք այս հողերում երկար ժամանակ միասին ենք ապրել, ընդհանուր հիշողություն ունենք: Սակայն ընդհանուր հիշողությունը վերածեցինք մենահունչ հիշողության: Ամենքս մեր իմացած լարն ենք նվագում: Մինչդեռ ինչո՞ւ նորից չկառուցենք մեր ընդհանուր հիշողությունը՝ մենախոսությունը վերածելով երկխոսության: Իսկ եթե սա հաջողացնենք, մի՞թե մերժած չենք լինի մյուս երկրների խորհրդարանների կողմից օրենքներ ընդունելու նախաձեռնության համար պատեհ առիթը: Երկխոսության միջավայրում հարկ չի լինի ոչ ժխտել, ոչ էլ «ներողությո՛ւն խնդրիր»

պահանջ ներկայացնել: Ավելին՝ այս երկխոսությունն ինքնին կընկալվի որպես ներողության մի գործընթաց: Ի՞նչ է, անպայման պետք է սպասենք երրորդ պետությունների՝ իրենց շահերից բխող համառ միջնորդությա՞նը: Եթե մենք որոշենք մեզ համար պատեհ առիթը, ապա խնդիր չի լինի ավելի մարդկային և շուտափույթ լուծում գտնելը...

Պետք է ընդունել, որ Թուրք հասարակությունը՝ քաղաքական գործիչը, մտավորականը և ժողովրդի մեծ հատվածը, որ գտնվում է այնպիսի մի հիվանդագին հոգեվիճակում, որ կարող ենք անվանել «հայկական մտագարություն», համակրանքի նման մթնոլորտի պատրաստ չէ: Սակայն չմոռանանք մի հանգամանք, որն անհրաժեշտ է ևս մեկ անգամ հիշեցնել: Մինչ օրս «Հայկական հարցը» Թուրքիայում տաբու էր. տեղեկությունը ոչ թե ազատորեն, այլ, ընդհակառակը, ուղղորդված էր շրջանառվում: Այդ պատճառով էլ, իհարկե, հեշտ գործ չի լինելու տարիներ շարունակ նման մթնոլորտից սնված հասարակության համար արագ և նոր նախաձեռնություններով հանդես գալը: Ասում են, թե հայերի՝ միջազգային ասպարեզում 26 հազար գրավոր աշխատությունների դեմ Թուրքիան ունի միայն 15-20 հրատարակություն: Հնարավոր է՝ այդպես է: Սակայն կա մեկ այլ ճշմարտություն ևս: Թուրքիայում էլ տվյալ թեմայով հազարից ավելի հրատարակություն կա, որոնց դեմ երկրում տպագրված այլընտրանքային՝ հայկական տեսակետը պաշտպանող աշխատությունների թիվը միայն մի ձեռքի մատների վրա կարելի է հաշվել: Իսկ սա ցույց է տալիս, որ եթե ներսում առկա տեղեկությունը հնարավոր չի լինում դուրս տեղափոխել, ապա դրսում առկա հակառակ տեղեկությունն էլ հնարավոր չի լինում ներս տեղափոխել: Այդ պատճառով էլ փոխադարձ համակրանքի մթնոլորտի ձևավորում ապահովելու համար առաջին ջանքը այդ տեղեկատվության փոխանակմամբ պետք է լինի:

Շատ ավելի հնարավոր է երկխոսություն ծավալել և միմյանց համակրանքով վերաբերվել այն ժամանակ, երբ հասարակությունները հասնեն համեմատելի տեղեկատվության: Մյուսներից ավելի կարևոր է մեր՝ հարցի տերերիս խոսքը, որը հնարավոր կլինի ապահովել միայն այդ կերպ:

Այստեղ կցանկանայի հատկապես ընդգծել «ցավն ուսերին առնելով՝ այն պատվով կրել» արտահայտությունը: Հայությանը կոչ եմ անում որդեգրել այդ ոճը: Մեր իրականությունը միայն մյուսների ընդունելո՞վ է իրականություն դառնալու: Արդյո՞ք մեր ներաշխարհը կհանդարտվի, եթե մեր իրականությունը շարունակի թեմա մնալ տեղի ունեցած ողբերգության ականատես պետությունների ընդունելու արդարամտության կամ չընդունելու անարդարության միջև: Նրանց ժանգոտված խի՞ղճն է կարողանալու մաքրել մեր սրտերը: Թող մեր իրականությունը մեզ մնա, նրանց ժանգոտված խիղճն էլ՝ իրենց...

Եկեք փրկենք մեր պատմական վիշտը այդ մարդկանց ձեռքերից... Ընդունել-չընդունելը թող նրանց խղճի հարցը լինի, սակայն այս աշխարհում ոչ ոք, բնավ ոչ ոք՝ ո՛չ հայը, ո՛չ Թուրքը, և ո՛չ մի երկրաբնակ չկարողանա շահարկել, քաղաքականացնել այդ ցավը... Եկեք մենք՝ որպես այդ մարդկանց սերունդներ, նման անբարոյականություն հետայսու թույլ չտանք... Մեր ցավը մեր ուսերին առնենք և, եթե հարկ է, պատվով տանենք մինչև այնտեղ, որտեղ հավաքվելու են բոլոր մարդիկ ահեղ դատաստանի օրը:

Ամենքս կրում ենք կատարվածի դեմ այն վախկոտ ըմբոստությունը, որ կա մեր մեջ, չենք կարողանում դուրս գալ և արտահայտվել: Չենք կարողանում մտածել ու խոսել, և իրականում մեր վիճակը վախկոտ ըմբոստությունն է: Դեռևս մեզ գերի պահող առասպելական խոսքերը մի կողմ նետելու համարձակություն չենք կարողանում ցուցաբերել: Ոմանց ստեղծած «ցասում, վրեժ, հող, փոխհատուցում» գաղափարները լցնում են դատարկությունը հենց մեր անհամարձակության արդյունքում: Կարծես հայության միակ իրականությունն այդ գաղափարներն են եղել: Ըստ ձեզ, իմ նախնիների կյանքի գինն իրականում ի՞նչ կարժե-

նա: Ենթադրենք՝ ինչ-որ բան տվեցին... Մեզանից ո՞ր մեկը կկարողանա դա կուլ տալ:

Քանի դեռ հայերը և թուրքերը միմյանց նկատմամբ իրենց անառողջ կեցվածքներից չեն ազատվել, հատկապես հայերի՝ իրենց ինքնությունն առողջ ձևով նորից կերտելու հնարավորությունը իրական չէ: Եվ քանի դեռ թուրքերը 1915-ի մասին իրենց հայացքներում համակրանքի արժանի մի մոտեցման չեն հանգել, հայկական ինքնության ցավոտ գալարումը շարունակվելու է: Իսկ հիմնական հարցն այն է, որ հայը կարողանա ազատվել իր ինքնության մեջ առկա թուրքին թշնամի դիտելու պատկերացումից... Հայկական ինքնությունը «թուրքից» ազատվելու երկու ճանապարհ ունի: Առաջինը թուրքիայի՝ (որպես պետություն և հասարակություն) հայ ազգին համակրելու վարքագծի որդեգրումն է և, ի վերջո, հայ ազգի ցավը կիսելու գիտակցման ցուցադրումը: Եթե նույնիսկ այս գործելակերպը անմիջապես չլինի, ապա ժամանակի ընթացքում «թուրք» տարրի վնասակար ընկալումները հայկական ինքնությունից հեռացնելու ճանապարհ կարող են բացել: Սակայն ներկայումս դրա իրականացման հավանականությունը փոքր է... Իսկ երկրորդ ճանապարհը անձամբ հայի՝ «թուրքի» ազդեցությունն իր ինքնությունից հեռացնելն է: Կամքին և նախաձեռնությանը հավատարիմ լինելու դեպքում դրա իրականացման հավանականությունն ավելի մեծ է: Նախընտրելի ճանապարհը հիմնականում սա է ...

Իսկ թե հայությունը սա ինչպես է կարողանալու հաջողացնել, ամբողջությամբ կապված է իրավիճակին նոր հայացքով նայելու ունակության հետ, օրինակ՝ 1915-ի իրադարձություններին... Հայության՝ իր ապրած պատմական դրամայի իսկության գիտակցումն այսօր չի փոխվելու աշխարհի երկրների կամ էլ թուրքիայի ընդունել-չընդունելով: Նրանք եթե չընդունեն էլ, հայ ազգի խղճում տեղի ունեցածն ի սկզբանե դրոշմված է: Այդ պատճառով էլ հայության միակ նպատակը չի կարող լինել այդ իրողության ճանաչման ակնկալիքը ո՛չ աշխարհի, ո՛չ էլ թուրքիայի կողմից:

Սեփական խղճի հետ դեմառդեմ մնալու ժամանակն այլևս անցել է: Այդ իրողության ընդունել-չընդունելը յուրաքանչյուրի խղճի հարցն է, և այդ խղճի հիմքն էլ հենց մարդկությունն կոչվող մեր հանրույթն է, մեր «մարդ» ինքնությունը: Այդ պատճառով էլ իրողությունն ընդունողները հիմնականում իրենց խիղճն են մաքրում:

Հայկական ինքնության առողջությունը ֆրանսիացու, գերմանացու, ամերիկացու և հատկապես թուրքի՝ ցեղասպանությունն ընդունել-չընդունելով պայմանավորելը սխալ է, որից հայությունն արդեն պետք է հրաժարվի: Վաղուց ժամանակն է բաժանվել այդ սխալից և օտարել «թուրք»-ին հայի ինքնության մեջ բացասական դերից:

Հայությունը, իր ինքնության հանգստությունը կապելով «թուրքի» բացասական և անտարբեր գոյության հետ, իր ողջ ընդհանուր հաջողությունն ուղղում է աշխարհի միջոցով «թուրքի» վրա ճնշում գործադրելուն և ցեղասպանությունն ընդունել տալուն: Եվ ցավալի է, որ սա ոչ այլ ինչ է, քան ինքնության զարթոնքը հետաձգող ժամանակի կորուստ: Հայությունն այսուհետև իր ինքնության ապագայի համար այնպիսի գաղափարներ պետք է կյանքի կոչի, որոնք միտված կլինեն արագորեն վերականգնելու այդ ազգի ստեղծագործական ունակությունը: Եվ ահա այդ պատճառով «սեփական վիշտն ուսերին առնել և հարկ եղած դեպքում պատվով տանել մինչև այն վայրը, որտեղ հավաքվելու են մարդիկ ահեղ դատաստանի օրը» հասկացությունը հայկական ինքնության համար ամենահիմնական կողմնորոշումը պետք է լինի: Հակառակ դեպքում հայությունն իրեն շղթայած կլինի մյուսների՝ իրականությունը ընդունել-չընդունելու արդարամտությանը... Սա էլ հենց իրական գերությունն է:

Մոլորության մեջ են նրանք, ովքեր կարծում են, թե հայու-

թյունը թշնամի «թուրք» պատկերացումից ազատվելու ժամանակ իր ինքնության մեջ դատարկություն կզգա, և հատկապես նրանք, ովքեր ենթադրում են, թե սփյուռքահայերը կարագացնեն ինքնության կարգավորման գործընթացը: Խոսքն այն մասին է, թե ինչով կարելի է լցնել «թուրք»-ից հրաժարվելու արդյունքում հայկական ինքնության մեջ ստեղծվելիք դատարկությունը. դա էլ հենց անկախ Հայաստան պետությունն է: Տասնհինգ տարի առաջ գոյություն չունեցող այս նոր խանդավառությունն արդեն հավակնում է ամեն տեսակ ազդեցություն գործել հայկական ինքնության վրա: Հայության ապագան այս փոքր պետության ապագայի բարօրությամբ և նրանում ապրողների երջանկությամբ պայմանավորելը միևնույն ժամանակ սեփական ինքնությունը անհանգստացնող սուր ցավերից ազատման ազդանշան է լինելու: Հայկական ինքնության թշնամի «թուրքից» ազատագրման ճանապարհը շատ պարզ է՝ մի կողմ թողնել «թուրքին» ...

Հայկական ինքնության նոր արտահայտչամիջոցներ փնտրելու բնագավառն արդեն պատրաստ է. արդեն պետք է զբաղվել Հայաստանով: Հայկական ինքնությունից «թուրք»-ին հանելով կործանիչ ինքնության փոխարեն դատարկությունն առողջ ինքնությամբ լցնելու խնդիրը կարող է ապահովվել հայի՝ Հայաստանի հետ ստեղծելիք կապերով: Բավական է, որ դա գիտակցվի:

Սփյուռքի՝ իր ինքնությունը պահպանել կարողանալու պատմական պայմանն ամբողջությամբ «մի օր իրականանալիք երազանք» է դարձել: Մեծամասնության մեջ չձուլվելու համառությունը փորձել է ամբողջությամբ ապահովել այդ երազանքով: Երբեմն երազանքներն իրականանում են այն ժամանակ, երբ մենք դրանց բոլորովին չենք սպասում... Ինչպես Խորհրդային Միության անկումն ու անկախ Հայաստանի ստեղծումը: Սակայն արի ու տես, որ Հայաստանի զարգացման, ժամանակակից պետությունների մակարդակին հասնելու նպատակով ներդրում ապահովելու համար մղվելիք անհրաժեշտ պայքարը սփյուռքը բավա-

կանաչափ չի գիտակցում: Սա շատ նման է հետևյալ իրավիճակին. դուք գտնվում եք 1915 մետր խորությամբ ցամաքած ջրհորի հատակին: Վերևում տեսնում եք լույսը: Ձեզանից ոմանք ասում են. «Հույսդ մի՛ կորցրու, դիմացի՛ր, մի օր էլ այդ լույսին կհասնենք», և կարծես փորձում են ձեզ օգնել՝ գոյատևել: Այն դեպքում, երբ լույսին հասնելու մեկ այլ ճանապարհ էլ կա. փորձել մագլցել... Ահա այդ պահը եկել է, սակայն ոմանք ձեզ այդ ջրհորի պատմական խորության մեջ պահելու համար նույն խրատը համառությամբ կրկնում են: Սփյուռքի լուռ մեծամասնությունը ձեռնամուխ լինելով մագլցելուն՝ ուժից վեր այդ գործին, պետք է աշխատի դուրս պրծնել ցամաքած ջրհորից: Մի փոքր ջանքը բավական է՝ ցույց տալու համար, որ երազանքի իրականացման հնարավորությունը աճելու է: Ոչ՝ այդ խավարի մեջ երազել համառելու դեպքում. այստեղ ո՞րն է լույսի և ո՞րը՝ իրականության մեղքը:

Անդրադառնալով Թուրքիային՝ հարց է ծագում. Թուրքիան «Հայկական հարցը» ինչպե՞ս է լուծելու: Մի ճանապարհ կա, որպեսզի Արևմուտքի կողմից շատ հաճախ Թուրքիայի դեմ որպես խաղաքարտ օգտագործվող այդ հարցը դադարի խնդիր լինելուց. դա հայերի հետ ուղիղ երկխոսության ճանապարհն է: Անհրաժեշտ է այդ երկխոսության ուղիները բացել երեք տարբեր կետերից: Առաջին՝ Թուրքիայի և Հայաստանի միջև պետությունների և հասարակությունների մակարդակով հարաբերությունների զարգացում, երկրորդ՝ Թուրքիան տեղիք չտա հայերի հետ կապված յուրաքանչյուր հարցի կապակցությամբ արտաքին միջամտության, երրորդ՝ աշխարհի տարբեր ծայրերում սփռված և Անատոլիան կարոտող ծագումով Անատոլիայից սփյուռքահայերին վերստին շահելը:

Այդժամ պարզ կդառնա, թե կողմերն ինչպիսի ոճ կորդեգրեն: Այդ ոճի մեջ հատկապես կարևոր դեր կարող է ունենալ ազգային արժանապատվության նկատմամբ ցուցադրվելիք փոխադարձ

հարգանքն ու ուշադրությունը: Օրինակ, Թուրքիան կկարողանա՞ ք գործադրել հասկանալու համար Հայաստանի նախագահի հետևյալ արտահայտությունը. «Սա հայ ժողովրդի պատվի խնդիրն է, արդյունքում միայն բարոյական հաղթանակ ենք տանելու, հողային որևէ պահանջ առաջ քաշելու նպատակ չունենք»: Կամ էլ Թուրքիայի կողմից հնչող մերժողական բացականչությունները հայերը պետք է որակեն որպես բացարձակ ժխտողականությո՞ւն, թե՞ հնարավոր է, որ այդ բացականչություններում ցեղապաշտությունը չընդունող հասկանալի մի կեցվածք նկատվի:

Ըստ մեզ, երկու կողմի պահվածքն էլ կարելի է հասկանալ, բավական է, որ որդեգրվող ոճը հարգանքի արժանանա: Եթե սա հաջողվի, հետևում կմնա այդ երկու հասկանալի կեցվածքները առանց միմյանց բախելու դեպի հարգանքի արժանի միավորման ուղղելու խնդիրը: Օրինակ, աշխարհի ամեն անկյունում հիշատակվում է ապրիլի 24-ը: Սակայն Թուրքիայում որևէ բան չի արվում, և հավանաբար նախ այստեղից էլ պետք է սկսել: Եթե հայերն ու թուրքերը կողք-կողքի ապրիլի 24-ին զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու նպատակով կարողանան կազմակերպել միջոցառումներ, այստեղ կարելի է համարել, որ հարցը մեծամասամբ լուծված կլինի: Եթե Թուրքիայում հնարավոր է արձաններ կանգնեցնել ի հիշատակ հայերի կողմից սպանվածների, ապա այդ ժամանակաշրջանում սպանված հայերի հիշատակին էլ արձան կանգնեցնելու համար որևէ օրենսդրական կամ հոգեբանական արգելք չպետք է լինի: Այն օրը, երբ Թուրքիայում բնակվող հայերը կկարողանան հիշատակել ապրիլի 24-ը, կարելի է ենթադրել՝ այդ խնդիրը կդադարի գոյություն ունենալ:

Թուրքիայում բնակվող հայերի աշխարհագրական դիրքը մի շարք տեսանկյուններից շատ կարևոր է: Որքան էլ հայության մի մասն ասի, թե «արդեն ոչ թե Անատոլիայում, այլ Ստամբուլում եք ապրում, այդ պատճառով սփյուռքի մաս եք կազմում», Թուրքիայում բնակվող հայերը «սփյուռք» հասկացության մեջ

չեն տեղավորվում և նրանց հետ ամբողջությամբ կիսող տեսակետներ չունեն: Օրինակ, մենք այստեղ չունենք այնպիսի քաղաքական կառույցներ և ենթակառույցներ, ինչպիսիք առկա են այնտեղ: Այդ պատճառով էլ սփյուռքի և Հայաստանի միջև առկա հարաբերությունների կերտման առումով Թուրքիայում բնակվող հայերը չեն կարող շատ բան ասել, սակայն ինչ վերաբերում է Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերության վերականգնմանը, ապա ոչ միայն ասելու, այլ նաև անելու շատ բան ունեն: Քանի որ հարցի երկու կողմերին էլ միևնույն ընդհանուր ինքնության մեջ միավորող կառույցներով Թուրքիայում բնակվող հայերը գրեթե հիշեցնում են և՛ թուրք, և՛ հայ հասարակությունների միջև հարգանքի մթնոլորտ ձևավորելու նոր ոճի լակմուսի թուղթ:

Անկասկած, կան զգուշավոր շրջանակներ, որոնք վտանգավոր են համարում մասնակցել թուրքաբնակ հայերի երկխոսության նախաձեռնություններին Թուրքիայի և Հայաստանի միջև երկխոսության բացակայության պայմաններում: Նրանք, ասելով, թե «լավ կլինի, որ մենք հիմա չխառնվենք այդ գործերին, այդ իրավիճակում երկու կողմին էլ օգուտ չենք կարող տալ, արդյունքում կկանգնենք երկընտրանքի առջև և անվստահելի լինելու պատճառով որևէ կողմ չենք կարող անցնել», այս պահվածքն էլ աշխատում են որդեգրել որպես հիմնավոր և խելացի գործելաոճ: Կամ էլ ասում են, որ իրենք նախընտրել են հետևյալ ուղին. «Թող երկու պետությունների միջև հարաբերություններ հաստատվեն, մենք հետո կմիանանք այդ գործերին»: Այն դեպքում, երբ այս երկխոսության բացակայության միջավայրում Թուրքիայում բնակվող հայերի գոյության և նախաձեռնության իրական անհրաժեշտությունը կա: «Եթե կանք», այսօր պետք է լինենք, և մեր գործելաոճն էլ ողջ անկեղծությամբ այսօր, այս դժվար պահին պետք է ի ցույց դնենք:

Արդյունքում մենք՝ Թուրքիայում ապրող հայերս, մեր դերը կիմանանք, մեր չափով կառաջարկենք, մեր սրտի չափով

կխոսենք: Մենք ասպարեզ դուրս կգանք և կողմերին կոչ կանենք. «Եթե դուք անկեղծ եք Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունները կարգավորելու հարցում, խնդրեմ, մեզ կարող եք անկաշկանդ օգտագործել»:

Հարկ է ընդունել, որ հայության որոշակի հատված «Թուրք» բառի նկատմամբ անգամ նվազագույն հանդուրժողականություն չունի: Այդ պատճառով էլ թե՛ «Թուրքաբնակ հայ», թե՛ «Թուրքախոս հայ» հասկացությունները նրանց մոտ հակակրանք են առաջացնում: Նրանք կարծում են, թե վանելով Թուրքիայում բնակվող հայերին, ավելի լավ հայ են դառնում: Չեն հասկանում, որ Թուրքիայում ապրելը և դադարել հայ լինելը տարբեր բաներ են: Այն դեպքում, երբ հենց Թուրքիայում բնակվող հայերն են ամբողջությամբ այս դժվարությունը հաղթահարում: Չնայած ճնշումներին և նեղությանը, նրանք կարողանում են մնալ այս հողերում, որտեղ ունեն շատ խորը արմատներ, և պահպանել նաև իրենց ինքնությունը: Ցավոք, այն դեպքում, երբ պետք է «կեցցե՛ք» ասել, արմատական հատվածները Թուրքիայում բնակվող հայերին դիտում են որպես վերջին դասի հայ: Նրանց մի կողմ թողնելով և ապավինելով բոլոր կողմերի մեջ առկա ողջամտությանն ու խղճին՝ Թուրքիայում բնակվող հայերի անունից ևս մեկ անգամ ձայն տանք լուռ մեծամասնությանը...

Հայերին Արևմուտքի քրիստոնյաներից տարբերող կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ նրանք հնուց ի վեր ապրել են մահմեդականների հետ: Արևմուտքի քրիստոնյաներն ավելի հաճախ քրիստոնյաների հետ են ապրել, իսկ հայերը՝ հիմնականում մահմեդականների հետ կողք-կողքի, երբեմն նաև նրանց մեջ ապրելով՝ յուրօրինակ փորձ են ձեռք բերել: Ինչպես որ այսօր ակտուալ քննարկումներում հաճախ շրջանառվում է այն, որ երբ Եվրոպայի քրիստոնյաները նոր են հարմարվում նաև մահմեդականների ներկայությամբ ձևավորված բազմամշակութային կենսաձևին և այդ գործընթացում անորոշության մեջ են,

հայերը Արևելքում ապրող մյուս քրիստոնյա ժողովուրդների պես (ասորիների, քելդանիների և այլն) երկար ժամանակ ապրել են այդ իրականությունը՝ իր լավ և վատ կողմերով՝ ձեռք բերելով արժեքավոր փորձ: Իսկ վաղը, երբ Թուրքիան անդամակցի Եվրամիությանը, այդ փորձը կարող է փոխանցվել Եվրոպային: Իսկ դա քիչ փորձ չէ... Եվրոպան կարող է բավականաչափ դասեր քաղել՝ անցյալում արված ճիշտ քայլերը շարունակելու, սխալները չկրկնելու համար:

Եթե մենք այսօր անցյալին նայելիս ակնածանքով ենք խոսում ձեռքբերումների մասին և հերոսաբար պարծենում, ապա պետք է նախընտրենք լռել, երբ խոսք է գնում կորցրածի մասին:

Պետք է հիշենք Անատոլիայի վիճակը հարյուր տարի առաջ: Ստեղծագործող նստակյաց մի ժողովրդի ստեղծած արժեքները պետք է հիշենք: Պետք է մտածենք՝ եթե տեղի չունենային այն աղետալի իրադարձությունները, ապա այսօր ո՞ւր հասած կլինեին յոթ լեզվով կրթություն իրականացնող հայկական բարձրագույն դպրոցները, գինեգործությունը, չերամագործությունը, արհեստը, արվեստը՝ գրականությունից մինչև ճարտարապետություն, երաժշտությունից մինչև թատրոն: Այդ զազրելի իրադարձությունները եթե տեղի չունենային և այդ ստեղծագործող ժողովուրդն իր հողերից եթե չելներ, մի՞թե այսօր եվրոպացիներն իրե՛նք շահագրգռված չէին լինելու այս երկրի համար: Պետք է հիշենք գաղթի չշտապող այն հայ պապին, որը կոտրված կալսիչը նորոգելով էր իր հողը լքում՝ ասելով. «Կա՛ց, տղա, երևի ոմանք կգան ու ցորենը կհնձեն»: Եվ պետք է ինքներս մեզ հարցնենք. «Որտե՞ղ է այդ կալսիչը, եկեք նախ այդ կալսիչը գտնենք, եկեք նախ այդ կալսիչը վերանորոգենք»:

Հայությունը երբեք ու երբեք իր մտքից չպետք է հանի հետևյալ հարցը. «Ավելի կարևոր է, որ Թուրքիան ճանաչի ցեղասպանությո՞ւնը, թե՞ ժողովրդավարական երկիր դառնա»: Սա դատարկ հարց չէ: Եթե Թուրքիան ժողովրդավարանա, իր ներքին

հարաճունությամբ կկարողանա պատմությունը քննել և իր խղճի կամոք արտահայտվել: Թուրքիայի ժողովրդավարացումը և Եվրամիությունն մուտք գործելը կարող է միևնույն ժամանակ շարժիչ ուժ դառնալ ապագայում հարևան Հայաստանի՝ Եվրամիությանը ինտեգրվելու համար: Այս տեսանկյունից կարելի է նկատել, թե որքանով են միմյանց հետ շղթայված երկու երկրների՝ նախախնամությամբ որոշված կապերը: Այդ շղթան գիտակցող հայ մտավորականներից Ֆրանսիայի քաղաքացի ծագումով Յոզղաթից Ժան Կլոդ Քեբափչյանը երեք տարի առաջ Ստամբուլում մի քննարկման ժամանակ ասել էր. «Իմ նախնիների տեղահանության ժամանակ Յոզղաթի հայտնի ժամացույցը կանգնեց 19:15-ի վրա»: Իսկ լրագրող Օրալ Զալըշլարը Ֆրանսիայում հայերին կոչ էր արել. «Եկեք արդեն այդ ժամացույցը աշխատացնենք»:

Մեր խոսքը եզրափակենք՝ աշխարհում սփռված Անատոլիայի հայերի անունից կոչ անելով Թուրքիայում բնակվողներին.

«Տեսեք, մի բան ճիշտ է... Հայերն այս հողերի վրա, անկասկած, աչք ունեն: Սակայն դա չի նշանակում՝ գալ և այս հողը շալակել-տանել կամ էլ այս հողը մասնատել: Մի՛ վախեցեք նրանցից... Նրանք այս հողը ոչ թե տանել են ուզում, այլ ուզում են լինել հենց այդ հողը... Ամբողջը սա է...»:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հայկական ինքնության նոր արտահայտչամիջոցները կամ երբ ջուրն իր ճամփան գտնի...*

Այս առավոտ ես և գիտնական ընկերներից Մուստաֆա բեյը մասնակցեցինք ուղիղ եթերով մի հեռուստահաղորդման: Մեզ հարցեր ուղղեցին այդ գիտաժողովի վերաբերյալ մեր գնահատականը իմանալու համար: Ես էլ լուրջ-լուրջ պատասխանեցի: Եթե չեմ սխալվում, հակառակ կարծիքին հակված Մուստաֆա բեյն էլ ներկայացրեց իր տեսակետները: Անսպասելիորեն հաղորդավարն ինձ անցավ՝ ուղղելով հետևյալ հարցը.

«Դուք՝ որպես հայ, ինչպե՞ս եք գնահատում կյանքը Թուրքիայում»: Լուրջ հեռուստաընկերություն, լուրջ թեմա, և հանկարծ անլուրջ մի հարց: Չեմ հիշում, թե բառ առ բառ նրան ինչ պատասխանեցի, սակայն որքան հիշում եմ, ինքնաբուխ մի պատասխան էր: Հետո մտածեցի՝ «լավ է, որ այդպես պատասխանեցի» և այսօր իմ ներկայացնելիք ոչ գիտական աշխատանքում կամբողջացնեմ պատասխանիս բովանդակությունը:

Պատասխանս հետևյալն էր. «Շատ լավ բան է... Բոլորին խորհուրդ եմ տալիս»:

Իրականում այս պատասխանն ակամա տվեցի, որովհետև

* 2005թ. սեպտեմբերի 24-25-ը Բիլգիի համալսարանում կազմակերպված «Օսմանյան հայերը կայսրության անկման շրջանում. գիտական պատասխանատվություն և ժողովրդավարության խնդիրներ» խորագրով գիտաժողովի ժամանակ սեպտեմբերի 25-ին Հրանտ Դինքի ոչ գիտական ելույթի տեքստը:

չգիտեմ, թե այդ «բոլորի» մեջ ովքեր և ինչպես են մտնում, ինչ վտանգ, վախ կամ էլ երկչոտություն կարող է ներառել, բայց ասում եմ՝ «լավ է, որ պատասխանեցի»:

Հետո նստեցի ու մտածեցի. «Ես այսօր դրա մասին իմ բարեկամների հետ պետք է կիսվեմ»: Այդ պատճառով էլ այն ինչ կներկայացնեմ, գիտական չի լինելու... Ըստ էության, դա պարզ է նաև ձեր արձագանքից: Նման հավակնություն էլ չունեմ...

Սակայն, ինչ արած, խորագիրս շատ հավակնոտ է՝ «Հայկական ինքնության նոր արտահայտչամիջոցներ...»: Բնականաբար, սրա համար բավականաչափ նյութ ունեմ... Իմ նպատակն է այսօրվա և մեկ դար առաջվա «նոր»-ը... Իսկ դրանից առաջ եղած ինքնությանն անդրադառնալ բնավ չեմ ուզում, որովհետև ժամանակս չի հերիքի: Սակայն «որո՞նք են 90 տարի ի վեր հայկական ինքնության արտահայտչամիջոցները», «այդ ինքնությունը սահմանող, բնութագրող արտահայտությունները որո՞նք են»: Ահա սրանք պետք է ասեմ, որովհետև այսօր և 90 տարի շարունակ հայկական ինքնության արտահայտչամիջոցների մասին գրողները հայեր չեն, այլ հենց թուրքաբնակները՝ թուրքերը, քրդերը կամ այլ էթնիկական տարրերը, այսինքն՝ այս պատմությունը միասին ապրածները...

***

«Ցեղասպանություն» բառը դեռ երեկվանից շատ քննարկումների տեղիք է տվել: Բասքընի[1] և Թաների երևանյան քննարկումները մի քիչ էլ այստեղ կրկնվեցին. «Ցեղասպանություն հասկացությունը հասարակագիտակա՞ն, թե՞ իրավական տերմին է»:

Դուք սա շարունակեք քննարկել, սակայն մի բան կա... Հինավուրց մի ժողովուրդ ինչպե՞ս է ընկալում այդ քննարկումը և ձեր հիշատակած այդ բառը, հետաքրքիր է, ինչպե՞ս է յուրացրել:

Այսօր գոյություն ունի աշխարհով մեկ սփռված մի հայ ժողովուրդ, և նրա գլխում կա մի գաղափար, մի պատմություն: Քաղաքավարությունից ելնելով՝ դրա անունը չասեմ, սակայն, եթե կցանկանաք, պատմեմ, թե ինչ է եղել... Անունը հետո ինքներդ կասեք...

***

Փիլիսոփայության մեջ կարևոր մի սահմանում կա. Շնչավորի հետ շնչավորի գոյության բնագավառը, նրանց միջև առկա կապը հենց ինքը կյանքն է: Եվ կյանք է դրա անունը: Դա այդպես է բոլոր շնչավորների՝ և՛ բույսերի, և՛ կենդանիների, և՛ մարդկանց համար: Շնչավորն ապրում է իր շնչավոր գոյության բնագավառում, դրանից դուրս այն գոյություն չունի: Եթե նրան այնտեղից հանեք և ոսկե բարձունք էլ տեղափոխեք, նշանակում է՝ դուք կտրում եք նրա կապն իր գոյության բնագավառի հետ, ասել է, թե արմատախիլ եք անում: Սա է դրա անունը: Տեղահանությունը նման մի բան է... Սա այնպիսի մի բան է, ինչ դուք տեսել եք և փորձում եք պատմել... Զորս հազար տարի շարունակ այս հողերում ապրած, այս հողերում մշակույթ, քաղաքակրթություն ստեղծած մարդիկ իրենց ապրած հողերից այս կամ այն պատճառով պոկվեցին և աշխարհով մեկ սփռվեցին: Մահացածներ, մնացածներ և սփռվածներ...

Այժմ եթե այդ ժողովրդի սերունդների հոգեվիճակը և 90 տարվա ինքնության արտահայտչամիջոցը սնուցվում է այդ իրադարձությամբ՝ արմատից կտրված լինելով, ապա սա դուք չեք կարող հաշվի չառնել: Ձեք էլ կարող ասել՝ «բայց թող դրա անունը սա լինի,

[1] Բասքըն Օրան - Անկարայի համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր, ազգայնականության և փոքրամասնությունների խնդիրներով փորձագետ: 2004թ. Բասքըն Օրանը կառավարության պատվերով զեկույց էր կազմել, որով առաջարկվում էր ավելի լայն իրավունքներ տրամադրել Թուրքիայի ազգային փոքրամասնություններին: Նա փաստել էր, որ «թուրք» անվանումը վերաբերում է մեկ էթնիկ խմբի, սակայն երկրում կան նաև էթնիկ այլ խմբեր, ինչն Օրանի դեմ «թուրք ազգը պառակտելու» մեղադրանքով դատական գործ հարուցելու պատճառ էր դարձել (Ծ.Թ.):

կամ դա լինի»: Դա արդեն ընկալվել, յուրացվել և վերածվել է դե-
նետիկ կոդի: Իսկ թե ինչ է դրա անունը, թող արդեն զբաղվի իրա-
վական դաշտը: Անունը մեզ համար կարևոր չէ, մեր ապրածը սա է:

***

Ահա այդ հոգեվիճակն ակնհայտորեն ցույց է տալիս հայկա-
կան ինքնության այսօրվա տվայտանքները... Խոսքս հայության
մասին է... Այդ ժողովրդի թիվն այսօր հասնում է 8 միլիոնի, որից
միայն 2.5-3 միլիոնն է Հայաստանում ապրում, իսկ 5 միլիոնից
ավելին՝ աշխարհի չորս կողմերում, որոշ մասն էլ՝ Թուրքիայում:
Այս պատկերի կարևոր կողմը սա է՝ մի ժողովուրդ, որը չնայած
սեփական պետություն է հիմնել, այսօր աշխարհում դեռևս ինք-
նության գոյապայքար է մղում: Նման մտահոգություն չունեցող
մարդիկ սա հասկանալ չեն կարող: Հայկական ինքնության վիճա-
կը նկարագրվում է այսպես. մարդ ապրում է, սակայն անառողջ
հոգեվիճակով՝ առօրյա կյանքում մղելով գոյապայքար:

Որոշ ժամանակ առաջ Երևան էի գնացել, որտեղ աշխարհի
չորս ծեգերից ժամանած հայերի մասնակցությամբ մի համաժողով
էր կազմակերպվել: Երևանի փողոցները Բաբելոն էին հիշեցնում:
Լեզվական մի հարստություն... Ուրուգվայի, Արգենտինայի, Պե-
րուի խոսվածքներ, անգլերեն, արաբերեն, հնդկերեն: Դեռևս 90
տարի առաջ նման բան չտեսած ժողովուրդը այսօր չգիտի՝ ինչ-
պես գործածել հայերենը, այսինքն՝ իր մեջ իր լեզուն չի կարողա-
նում գործածել: Այս պահին աշխատում եմ ձեզ ներկայացնել մի
ժողովրդի ապրած դրաման... Ահա հայկական ինքնության նոր
վիճակը, նոր ձևավորված արտահայտչամիջոցները:

***

Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը ապ-
րիլի 24-ին Երևանում ցեղասպանության տարելիցի կապակցու-
թյամբ կազմակերպված միջազգային համաժողովում հանդես
եկավ ելույթով: Ես խորհուրդ եմ տալիս ծանոթանալ այդ ելույթի
ողջ տեքստին, քանի որ այն արտացոլում է ողջ աշխարհում ապ-
րող հայերի հոգեվիճակը: Եվ ելույթն այսպես սկսվեց. «Ես Թուր-
քիայի իմ գործընկերներին եմ դիմում՝ մի կողմ դնելով իմ քաղա-
քական գործիչ լինելու հանգամանքը: Ես հիմա ձեզ հետ ուզում
եմ խոսել պարզապես որպես մարդ...»: Գլխավորը ոչ թե ելույթի
շարունակությունն էր, այլ դիրքը... Նրա կոչն ինձ համար շատ
իմաստալից էր, որովհետև Օսկանյանի շեշտադրման փորձն ար-
տահայտում էր հետևյալ ցանկությունը. «Թողնենք ամեն բան,
եկեք այս խնդրին մի քիչ մարդկայնորեն մոտենանք, մարդավարի
խոսենք»: Եվ նման ձևով արտահայտեց իր ակնկալիքը: Իսկ սա էլ
ցույց է տալիս, որ հայության ինքնությունն արդեն ոչ թե իրենք,
այլ թուրքաբնակները, թուրքերն են սահմանում: Սա շատ ակն-
հայտ մի վիճակ է՝ մի կողմից լավ, մյուս կողմից վատ...

Իմ բազում հրապարակումներում և ելույթներում հայերին
կոչ եմ անում. «Կառչած մի մնացեք «թուրք» հասկացությունից,
թոթափեք այդ հոգեվիճակը, դա լավ վիճակ չէ»: Սակայն
ապարդյուն:

Ելույթ ունեցածներից մեկը շոգենավում խոսում էր իրեն
ուղղված հարցերից: Շոգենավի ուղևորները նրան հարցնում էին,
թե ինչ է ասել համաժողովում: Եվ միայն նրա՞նք: Երեկվանից կո-
կորդս պատռվեց Հայաստանի թերթերին ու հեռուստաալիքներին
պատասխանելուց: Այո՛, այդ հետաքրքրությունն իրականում
պարզորոշ ի ցույց է դնում հայկական ինքնության հոգեվիճակը:

***

Այդ գիտաժողովն ինձ համար շատ կարևոր է: Եվ քանի որ Թուրքիայում բնակվող հայ եմ, այդ համաժողովի նշանակությունը երկու ձևով եմ ընկալում: Առաջինը՝ Թուրքիայի ժողովրդավարացման գործընթացի առումով. Թուրքիան այդ գիտաժողովով կարևոր արգելք հաղթահարեց: Իսկ երկրորդն էլ կպայմանավորեմ հայության հոգեվիճակով. կարևորում եմ նրանց կարծիքը այդ գիտաժողովի մասին: Կա մի սփյուռք, որը Թուրքերին դեռևս շարունակում է ընկալել 1915թ. տեղի ունեցած իրադարձությունների համատեքստում և այն կարծիքին է, որ «Թուրքիան անուղղելի է, Թուրքը չի փոխվի, նրանք դա չեն ընդունի, նրանք խիղճ չունեն»: Ահա այդ գիտաժողովն էլ նրանց կապշեցնի դրական առումով, թե «Թուրքիայում ինչե՞ր են կատարվում»: Ահա այդ երկու ընկալումներն ինձ համար շատ կարևոր են, և ցանկանում եմ, որ երկու դեպքում էլ հաղթանակ ձեռք բերվի:

Քանի դեռ Թուրքիան չի ժողովրդավարացել, հայերը չեն ապաքինվելու: Դա ակնհայտ է: Սրանք երկվորյակների պես են: Երբ նրանցից մեկը վիրահատվում է, մյուսն էլ է ցավ զգում: Ահա այդպես միմյանց զգում են... Ես էլ այդ պատճառով կասեմ, որ «հայերն ու Թուրքերը միմյանց հետ հարաբերությունների տեսանկյունից տառապում են տևական երկու հիվանդություններով»՝ մեկը՝ մտագարությամբ, մյուսը՝ հոգեխեղմամբ: Սա ճշմարիտ բնորոշում է:

***

Լա՛վ, ի՞նչ պետք է անել, ո՞րն է լուծման բանալին: Սա դժվար հարց է... Երեկ մի տիկին իր ելույթն սկսեց հետևյալ նախադասությամբ, որին ես, ի նշան բողոքի, ծափահարեցի. «Մարդկային զոհերի մասին եք խոսում, սակայն չեք հիշատակում Օսմանյան կայսրության կորցրած տարածքները»: Այդպիսով հավասարեցրեց մարդկային և տարածքային կորուստները: Այո՛, այստեղ ոչինչ չես կարող անել, սակայն մի բան հարկ է հասկանալ: Քիչ առաջ ձեզ բացատրեցի «ցեղասպանությունը», լավ, այդ բառը չօգտագործեմ: Եթե ոչ հասկանում, ոչ էլ ընկալում ենք տեղի ունեցածը, ձեզ բացատրեցի արմատախիլ անելու օրինակով, քանի որ դա այնպիսի մի արմատ է, որ իջնում է մինչև այդ հողերի խորքն ու հառնում վեր: Զորս հազար տարի շարունակ այս հողերում ապրած և արմատախիլ արված մարդկանց տեսանկյունից ենք ասում Թուրքիային: Մի պատմությամբ եզրափակեմ, նույնիսկ պատմություն չէ, այլ իրական դեպք, անձամբ ես եմ ապրել և պատմում եմ ամեն տեղ...

***

Սվազի շրջանից մի տարեց մարդ զանգահարեց ու ասաց. «Ա՛հ, վերջապես գտանք քեզ, տղա ջան: Այստեղ մի տարեց կին կար, կարծես ձերոնցից է: Մահացել է: Նրա մերձավորներից ինչ-որ մեկին որ գտնես, ուղարկի՛ր, թող գան, նրա դին տանեն կամ էլ մենք այստեղ մեր աղոթքն անենք ու թաղենք»:

«Լավ, հորեղբայր, կփնտրեմ»,- ասացի: Ասաց մահացածի անուն-ազգանունը: Ոմն տիկին Բեատրիս էր, 70 տարեկան: Ֆրանսիայից այնտեղ արձակուրդ էր գնացել:

Փնտրեցի, 10 րոպեում գտա նրա մերձավորներին... Մենք գիտենք միմյանց, որովհետև շատ քիչ ենք:

Գնացի խանութներ, հարցուփորձ արեցի. «Այսպիսի մեկին ճանաչո՞ւմ եք»: Խանութում միջին տարիքի մի կին շրջվեց ու ասաց. «Նա իմ մայրն է»: Հարցրեցի. «Որտե՞ղ է քո մայրը»: Պատմեց, որ Ֆրանսիայում է ապրում, տարին 3-4 անգամ Թուրքիա է գալիս, սակայն Ստամբուլ կամ այցելում է, կամ՝ ոչ, ուղիղ իր լքած գյուղն է գնում: Բացատրեցի աղջկան իրավիճակը: Նա էլ վեր կացավ ու գնաց:

Հաջորդ օրը զանգահարեցի: Գտել և հաստատել էր, որ իր

մայրն է, սակայն հանկարծ սկսեց հեկեկալ: Ես խնդրեցի լաց չլինել, հարցրեցի՝ թե դիակը բերելու է, թե՝ ոչ: «Աբի, ես կբերեմ, բայց այստեղ մի հորեղբայր կա, ինչ-որ բաներ է ասում»,- ասաց և հեռախոսափողը այդ մարդուն փոխանցեց: Ես բարկացա նրա վրա՝ ասելով. «Ինչո՞ւ ես վշտացնում աղջկան»: Ասաց. «Տղա՛ս, ոչինչ չեմ ասել... Աղջի՛կս, քո մայրն է, բան չունեմ ասելու, քո հարազատը, բայց որ ինձ հարցնես, թող մնա, այստեղ թող թաղվի... Ասացի, որ ջուրն իր ճամփան գտավ»:

Ես այդ պահին հուզվեցի: Անատոլիայում բնակվող մարդու այդ խոսքից, այդ ընկալումից հուզվեցի: Այո՛, ջուրն իր ճամփան գտել էր...

Ճիշտ է, տիկին, հայերն այս երկրի, այս հողերի վրա աչք ունեն: Այն ժամանակ գրածս հիմա էլ Ձեզ համար կրկնեմ: Այն ժամանակներում հարգարժան նախագահ Դեմիրելը ասում էր, թե «հայերին երեք քար անգամ չենք տա»: Ես էլ այդ կնոջ պատմությունը գրեցի և ասացի.

«Այո՛, մենք՝ հայերս, այս հողերի վրա աչք ունենք, որովհետև մեր արմատներն այստեղ են, սակայն մի անհանգստացեք, ոչ թե այս հողերը վերցնել-տանելու, այլ այս հողերի խորքն անցնելու համար...»:

Շնորհակալություն...

Հայաստանի կոչը Թուրքիային*

«Եվ հենց այն պատճառով, որ դրկից ենք, պետք է ցանկանանք ու կարողանանք հաղթահարել անցյալը»:

Վարդան Օսկանյան

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի անունից

* ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի ելույթի ողջ տեքստը 2005թ. ապրիլի 20-21-ը Երևանում կազմակերպված Հայոց ցեղասպանության 90-ամյակին նվիրված «Ծանրագույն հանցանք, ծայրագույն մարտահրավեր. ցեղասպանությունը և մարդու իրավունքները» միջազգային համաժողովում:

ցանկանում եմ հրապարակավ շնորհակալություն հայտնել այս խորհրդաժողովի բոլոր մասնակիցներին: Շնորհակալություն եմ հայտնում Զորյան հիմնարկին խորհուրդների և կազմակերպչական հարցերում ցուցաբերած օժանդակության համար: Ցանկանում եմ առանձնահատուկ շնորհակալություն հայտնել բոլոր այն գիտնականներին, գրողներին և դասախոսներին, ովքեր, չնայած իրենց բազմազբաղ աշխատանքային օրակարգին, այցելել են Հայաստան և այսօր այստեղ են՝ մեզ հետ: Օրվա խորհուրդը պարզ է բոլորին. անցել է 90 տարի, և մենք հավաքվել ենք՝ պահանջելու ճանաչում և կանխում, որպեսզի 2015 թվականին կարողանանք հավաքվել միայն հիշատակի տուրք մատուցելու համար: Այս երկու օրերի ընթացքում մեր բանախոսներից յուրաքանչյուրը տարբեր պերճախոս ձևակերպումներով ասում էր ըստ էության հետևյալը. ցեղասպանությունը ծանրագույն հանցագործություն է մարդկության դեմ: Այն իշխանության ծայրահեղ չարաշահման արդյունք է: Ցեղասպանություն գործողները կոպտորեն խախտում են իրենց հոգածության ներքո գտնվող բնակչության անվտանգությունն ապահովելու պարտականությունը: Մարդու իրավունքների ասպարեզում բոլորիս առջև ծառացած է մեկ մարտահրավեր. գիտակցել և ընդունել, որ կառավարությունները կարող են նման անբարո և անմարդկային արարքներ գործել, և որ որոշ կառավարություններ փաստացի իրագործել են ցեղասպանություն:

Ազգերի պատմությունը չի կարող գոյություն ունենալ անօդ տարածության մեջ: Ոչ մի ազգ չի կարող իսպառ խուսափել իր պատմությունից. ազգը կարող է միայն հաղթահարել պատմությունը: Սակայն պատմությունը հաղթահարելու համար ազգին անհրաժեշտ է դեմ-հանդիման կանգնել իր պատմությանը՝ թե՛ ինքն իր ներսում, թե՛ ուրիշների հետ հարաբերություններում: Այդ մյուս ազգերն իրենց հերթին նույնպես պետք է միասնական ջանքերով դեմ-հանդիման կանգնեն իրենց պատմությանը: Այլ

կերպ ասած՝ Հայաստանը և Թուրքիան պետք է դեմ-հանդիման կանգնեն իրենց պատմություններին՝ առանձին-առանձին և միասնաբար: Հայաստանը կարծում է, որ Թուրքիան պետք է մի կողմ թողնի պատրվակները և բնականոն հարաբերություններ հաստատի հարևան երկրի հետ, որը չի հեռանալու այս տարածաշրջանից կամ չի մոռանալու իր պատմությունը: Աշխարհում մենք միակ հարևանները չենք, որոնց հարաբերություններում եղել և դեռ մնում են որոշակի դժվարություններ: Շատ կան անախորժ հուշեր, խոշտանգված անցյալ, փոխադարձ մեղադրանքներ, չլուծված հարցեր և զոհի բարդույթի չամոքվող վերքեր, որոնք ախտահարում են տարբեր հարևան ժողովուրդների ազգային գիտակցությունը: Մեր պարագան այնպիսին է, որ եթե մեր երկու պետությունների միջև որոշակի հեռավորություն լիներ, թերևս, հնարավորություն կունենայինք մեր ապագան ինչ-որ չափով օտարել մեր անցյալից: Նման շքեղություն, սակայն, չենք կարող մեզ թույլ տալ: Մեր միջև չկա տարածություն, չկա հեռավորություն: Մենք ապրում ենք հենց այստեղ՝ անմիջապես կողք-կողքի, և մեզ երբևէ չեն լքում մեր կրած մեծ կորուստների մասին հիշողությունները: Այնուամենայնիվ, հենց կողք-կողքի ապրելու հանգամանքը պետք է մեզ մոտ առաջացնի պատմությունը հաղթահարելու ցանկություն և պատրաստակամություն: Սակայն մենք դա կկարողանանք անել միայն այն դեպքում, եթե մեր հարևանը նույնպես ձերբազատվի անցյալի չար ուրվականներից: Նկատեցիք, ես չասացի, որ ոճրագործը պետք է ձերբազատվի: Հայերն ի վիճակի են ոճրագործին տարբերակել Թուրքիայի այսօրվա կառավարությունից: Օսմանյան կայսրության հայազգի բնակչության երկու երրորդը կոտորվել կամ տարագրվել է 1915-1918թթ. ժամանակահատվածում: Այսօրվա Թուրքիայի Հանրապետությունը պետք է ի վիճակի լինի դատապարտել այդ գործողությունները և իրերն անվանել իրենց անուններով: Ապացույցներն ավելի քան բավարար են, հստակ և անհերքելի: Հայերն Օսմանյան կայսրության խոշորագույն փոքրամասնություններից էին: Ու՞ր անհետացան նրանք: Հնարավո՞ր է, որ մեր պապերն ու տատերը եկած լինեն ինչ-որ պայմանավորվածության և պատմություններ մոգոնած լինեն: Որտե՞ղ են այն հայերի զավակները, ովքեր կառուցել են հարյուրավոր եկեղեցիներ և վանքեր, որոնց ավերակները ցայսօր կանգուն են Թուրքիայում: Մի՞թե սուտ են կոտորածների ականատես ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի պատմածները: Ինչո՞ւ է Առաջին աշխարհամարտի ավարտին ստեղծվել ռազմական դատարան, և ինչո՞ւ է այն մեղադրական դատավճիռ կայացրել Օսմանյան Թուրքիայի առաջնորդների նկատմամբ՝ հայերի զանգվածային ջարդեր իրականացնելու հրաման տալու համար: Ինչպե՞ս կարելի է բացատրել տասնյակ պետությունների պաշտոնական արխիվների հազարավոր էջերը, որոնց մեջ արձանագրված են Օսմանյան կայսրության հայազգի բնակչությունը բնաջնջելու ծրագրերը: Եթե տեղի ունեցածը ցեղասպանություն չէր, այլ Ռուսական կայսրության հետ ունեցած արևելյան սահմանի մոտ բնակվող, այսպես կոչված «ապստամբ հայ բնակչության պարզ տեղահանում, որն իրականացվել է պատերազմի ընթացքում», ինչպես երբեմն նշում են Թուրքական տեսակետի ջատագովները, ապա ինչո՞ւ են թալանի և կրակի մատնվել Օսմանյան կայսրության արևմտյան քաղաքներում բնակվող հայերի տները: Ինչո՞ւ են տարագրվել ծովափնյա Իզմիր և Կոստանդնուպոլիս քաղաքների հայ բնակիչները: Մարդիկ լցվել են նավերը և նետվել ծովը. այդպե՞ս է իրականացվում տեղահանումը: Ի՞նչ է տասնյակ մտավորականների մի գիշերվա ընթացքում հավաքելը և սպանելը, եթե ոչ՝ կանխամտածված ոճիր:

Երբ որևէ կառավարություն ծրագրում է քաղաքական խնդիր լուծելու նպատակով ոչնչացնել իր բնակչությունը, դա համարվում է ցեղասպանություն: 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունը փոքրանում էր՝ կայսրության հեռավոր շրջաններում կորցնելով հսկողությունն իր հպատակների նկատմամբ: Ունենա-

լով մտավախություն, որ Անատոլիայում ևս հայազգի փոքրամասնությունը կպահանջի իրավունքների հավելում և կայսրության նկատմամբ ճնշում գործադրելու խնդրանքով կդիմի օտար պետություններին, օսմանյան առաջնորդները Առաջին աշխարհամարտի քողի ներքո փորձեցին բնաջնջել հայերին՝ սկսելով առաջնորդներից, ապա անցան տղամարդկանց, իսկ վերջում տեղահանեցին նաև կանանց, երեխաներին ու ծերերին: Կատարվածը ճշգրտորեն համապատասխանում է ցեղասպանության սահմանմանը. ոճրագործը փաստացի սպանել է բազմաթիվ մարդկանց, ընդ որում՝ այդ մարդիկ պատկանել են ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որոշակի խմբի: Ոճրագործն ունեցել և փաստացի իրագործել է իր մտադրությունը՝ լրիվ կամ մասնակի ոչնչացնելու այդ ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական խումբը, ընդ որում՝ ոչնչացումն իրագործվել է հետևողականորեն:

ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն իր տեսածն անվանել է «ազգի սպանություն»: Ոմանք տեղի ունեցածն անվանել են «ցեղի սպանություն»: Ինչո՞ւ: Որովհետև այն ժամանակ դեռ գոյություն չուներ «ցեղասպանություն» տերմինը: Երբ այդ տերմինը Ռաֆայել Լեմկինի կողմից 1944թ. վերջապես դրվեց շրջանառության մեջ, միանշանակ կերպով նախատեսվեց, որ այն վերաբերելու է նաև մինչ այդ կատարված ցեղասպանություններին, այդ թվում՝ Հայոց ցեղասպանությանը: Կասկածից վեր է այն փաստը, որ եթե «ցեղասպանություն» բառը գոյություն ունեցած լիներ 1915 թվականին, «Նյու Յորք Թայմս»-ում կամ այլուր տպագրված հարյուրավոր հոդվածների բոլոր հեղինակներն օգտագործած կլինեին հենց այդ բառը: Բավական է միայն նկատել, թե այսօր որքան հաճախ է օգտագործվում «ցեղասպանություն» բառը՝ նկարագրելու այնպիսի ոճրագործությունների հետ կապված իրադարձություններ և դեպքեր, որոնք մասշտաբով և բնույթով անհամեմատելի են Հայոց ցեղասպանությանը:

Հայերը շարունակում են ապրել տառապանքի հուշերով, վերքերով, որոնք չեն ամոքվի այնքան ժամանակ, քանի դեռ Հայոց ցեղասպանության փաստը կտրականապես չի դատապարտվել և միանշանակորեն չի ճանաչվել: Հակառակ դրան, Թուրքիան ահռելի գումարներ է ծախսում պատմությունը ժխտելու, աղավաղելու ուղղությամբ: Թուրքիայի ծախսերը, սակայն, չեն սահմանափակվում միայն դրամական միջոցներով: Շարունակելով ժխտել պատմությունը և նենգափոխել պատմական փաստերը, Թուրքիան վատնում է սեփական հավատարժանությունը և ժամանակը: Անկարելի է թակել Եվրոպայի դուռը, պատմաբանների աչքերն ու գրողների բերանները փակելով, հատկապես երբ խնդիրն առնչվում է այնպիսի բարդ և կարևոր երևույթի, ինչպիսին ցեղասպանությունն է: Թուրքիայի խորհրդարանի վերջին շրջանում արված կոչը՝ վերանայելու և փոփոխելու բրիտանական «Բլյու բուք» հրատարակության համար Առնոլդ Թոյնբիի և Ջեյմս Բրայսի հավաքած փաստաթղթերը, նենգափոխման գործընթացին նոր ուղղություն հաղորդեց: Թուրքիան այլևս չի սահմանափակվում սեփական պատմությունը նենգափոխելու փորձերով՝ կարծելով, թե կկարողանա ուրիշներին նույնպես համոզել, որպեսզի նրանք նենգափոխեն իրենցը: Դրանից խնդիրն ավելի է բարդանում, զգացմունքները սրվում են, իսկ զայրույթը՝ սաստկանում: Ավելին, այդօրինակ անպատկառ վերաբերմունքը վստահություն է ներշնչում նրանց, ովքեր հաշտեցման կողմնակիցներ չեն և հասկանում են վերջինիս առնչվող լրջագույն վտանգները և գինը:

Հոլոքոստը վերապրած գիտնական Էլի Վիզելն ասել է, որ ցեղասպանության ժխտումը ցեղասպանության վերջին փուլն է, որի միջոցով «փորձ է արվում նենգափոխել պատմությունը՝ զոհին ներկայացնել որպես չարագործ, իսկ ոճրագործին արդարացնել»: Հենց դա է փորձում անել Թուրքիան, բայց ոչ ժողովուրդը, այլ՝ կառավարությունը: Մերօրյա Թուրքերը չեն կրում ոճրագործների մեղքը, եթե չփորձեն պաշտպանել ոճրագործներին և նույնանալ

նրանց հետ: Հայերը և Թուրքերը, ժամանակակից աշխարհի մյուս ազգերի հետ միասին, կարող են դատապարտել Օսմանյան կայսրության հանցարարքները: Թուրքիան պետք է պատմությունը տարանջատի քաղաքականությունից: Ցեղասպանության ճանաչման հնարավոր հետևանքների կապակցությամբ ներկայացվող փաստարկները ոչ թե հիմնավորումներ են, այլ՝ արդարացումներ: Ինչո՞ւ են նրանք զարմանում, որ մեր պետական զինանշանի վրա պատկերված է Արարատ լեռը: Հայերն այդ տարածքներում բնակվել են հազարամյակներ շարունակ, և Հայաստանի սահմանները դարերի ընթացքում մեծ փոփոխություններ են կրել: Դա պատմական փաստ է: Հայոց թագավորությունը ձգվում էր ծովից ծով: Դա նույնպես պատմական փաստ է: Վերջին փոփոխությունը տեղի է ունեցել 20-րդ դարասկզբին: Դա էլ է պատմական փաստ: Սևրի պայմանագրի համաձայն, Հայաստանի տարածքը տասնապատիկ ավելի էր այսօրվա փաստացի չափից: Դա նույնպիսի պատմական փաստ է, ինչպիսին այն, որ Թուրքիան դրժեց սեփական կառավարության ստորագրած այդ պայմանագիրը, բռնությամբ ստեղծելով փաստացի նոր իրավիճակ, որի հետևանքով ստորագրվեց մեկ այլ պայմանագիր, բայց ոչ՝ մասնակիցների միևնույն կազմով: Այդ նոր պայմանագրով քիչ թե շատ նշագծվեցին այսօրվա սահմանները: Դա նույնպես պատմական փաստ է: Քաղաքական իրողությունը, սակայն, այն է, որ և՛ Թուրքիան, և՛ Հայաստանն այսօր գոյություն ունեն միջազգային ասպարեզում՝ իրենց այսօրվա սահմաններով: Քաղաքական իրողությունն այն է, որ մենք հարևաններ ենք և շարունակելու ենք ապրել կողք-կողքի: Քաղաքական իրողությունն այն է, որ Հայաստանը Թուրքիայի անվտանգության համար սպառնալիք չէ: Ի վերջո, իրողություն է, որ մերօրյա Հայաստանն է կոչ անում դիվանագիտական հարաբերություններ հաստատել մերօրյա Թուրքիայի հետ: Ուստի, ցեղասպանության ճանաչումից ավելին նախատեսված չէ Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգով:

Երեկ հարցազրույց էի տալիս թուրքական հեռուստաընկերություններից մեկին: Զարմացա, թե որքան ապատեղեկացված էին նրանք: Լրագրողներն իրենց հերթին զարմանքով տեղեկացան, որ հայ-թուրքական սահմանը Հայաստանի կողմից բաց է, և որ այն փակ պահողը Թուրքիան է: Զարմանքով տեղեկացան, որ Հայաստանը Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու որևէ նախապայման չի առաջադրում: Մեծագույն զարմանքով տեղեկացան, որ նույնիսկ ցեղասպանության ճանաչումը նախապայման չէ: Զարմացան նաև, որ Կարսի պայմանագիրը Հայաստանի իշխանությունների կողմից չի հերքվել և անվավեր չի ճանաչվել: Ինձ մնում է միայն զարմանալ, որ պաշտոնական Թուրքական քարոզչամեքենան կարողացել է յուրովի մեկնաբանել փաստերը և աղավաղել բազմաթիվ մարդկանց պատկերացումները:

Կա ևս մեկ թյուրըմբռնում: Մարդիկ, որպես կանոն, ենթադրում են, թե մենք դեմ ենք Եվրոպական Միությանը Թուրքիայի անդամակցությանը: Այդ հարցում էլ են նրանք սխալվում: Իհարկե, մենք կցանկանայինք, որ Թուրքիան դառնա Եվրոպական Միության անդամ, կցանկանայինք տեսնել, որ Թուրքիան համապատասխանում է եվրոպական բոլոր չափորոշիչներին: Կցանկանայինք տեսնել, որ Թուրքիան նմանվում է Բելգիային, Իտալիային և մյուսներին: Կցանկանայինք տեսնել, որ Թուրքիան դառնում է Եվրոպական Միության անդամ, որպեսզի մեր սահմանները լինեին բաց, մեր հայրենակիցները և Թուրք գիտնականները կարողանային ավելի ազատորեն խոսել ցեղասպանության մասին: Կցանկանայինք Թուրքիան տեսնել Եվրոպական Միության կազմում, որպեսզի մեր մշակութային ժառանգությունը և եկեղեցիները պաշտպանված լինեին և վերականգնվեին:

Հայաստանը կարծում է, որ հենց այժմ, երբ Թուրքիան ստիպված է նոր մոտեցումներ որդեգրել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությու-

նը, արտահայտվելու և կրոնի ազատությունը, Թուրքիային պետք է խրախուսել և համոզել, որպեսզի ընդունի իր անցյալը: Խրախուսելու և համոզելու փորձեր պետք է արվեն թե՛ դրսից, թե՛, որ ավելի կարևոր է, ինչպես ընդգծեց երեկ Հրանտ Դինքը, Թուրք հասարակության ներսից:

Թուրք գրողները և քաղաքական գործիչները մեկնարկել են ինքնավերլուծության և ուսումնասիրության այդ բարդ գործընթացը: Ոմանք դա անում են հրապարակայնորեն՝ մեծ թափանցիկության պայմաններում: Մեզ մնում է միայն ենթադրել, որ Եվրոպան կակնկալի, որպեսզի Եվրոպական Միության անդամակցության հարցին լրջորեն վերաբերվող, Եվրոպական Միության անդամակցությունից բխող բարդ հարաբերություններում կողմնորոշվելու ունակ Թուրքիան ստիպված կլինի ընդունելու իր անցյալը: Այս համատեքստում խիստ կարևոր է, որ միջազգային հանրությունը հետևողական լինի կանոնների կիրառության հարցում, չլինի անտարբեր և չնվազեցնի իր պահանջները, այլ շարունակի օգնել, ծառայել որպես օրինակ, թե ինչպես պետք է համակերպվել սեփական պատմության հետ, որպեսզի հայերը և Թուրքերը, որպես եվրոպացիներ, հաղթահարեն անցյալը և նորովի կերտեն ապագան:

Խորհրդարանական հանձնաժողովի արձանագրություններից*

1. Ելույթ

Շնորհակալություն հարգարժան նախագահ:

Նախ և առաջ, որպես Թուրքիայի Հանրապետության քաղաքացի, որպես Թուրքիայի բնակիչ՝ հավանաբար ավելի լավ կլինի,

* Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ԵՄ համապատասխանության և Արտաքին հարաբերությունների հանձնաժողովների համատեղ նիստերով 2005թ. ապրիլի 5-ին կազմակերպված «Հայ-Թուրքական հարաբերությունները պատմական գործընթացում» թեմայով քննարկման ժամանակ Հրանտ Դինքի ելույթի ամբողջ տեքստը:

եթե այս պահին անձնական զգացմունքներս արտահայտելով սկսեմ: Մեկ շաբաթ է, ինչ արտերկրի և Հայաստանի ԶԼՄ-ները, մամուլի ամենահայտնի կազմակերպություններն աներևակայելի հետաքրքրություն են ցուցաբերել այս գիտաժողովի նկատմամբ՝ փորձելով իմանալ մեր կարծիքը դրա վերաբերյալ, որովհետև այնտեղից ինչպես են տեսնում իրավիճակը՝ չգիտեմ, սակայն կարծում են, որ Թուրքիայում ինչ-որ բան է տեղի ունենում: Մի բան տեղի է ունենում, այդ հարցի հետ կապված Թուրքիայում մի բան կատարվում է... Իրականում ինչ-որ բա՞ն է կատարվում Թուրքիայում: Կկարողանա՞մ արդյոք ես՝ Թուրքիայում ապրող քաղաքացիս, դա ընկալել այնքանով, որքանով նրանք: Ուզում եմ մի քիչ այդ մասին խոսել:

Նախ և առաջ պետք է նշել, որ հարգարժան վարչապետի և գլխավոր ընդդիմադիր կուսակցության[1] առաջնորդի համատեղ ելույթն իսկապես ունի պատմական նշանակություն և արժանի է հիշատակման: Նույնիսկ Հայաստանի հարգարժան արտգործնախարարի պատասխան հայտարարությանը, որ անմիջապես հետևեց դրան, ըստ իս, եթե անգամ Թուրքիան հապաղի փոխադարձ պատասխան տալ, իրականում ցույց է տալիս, թե որքան կարևոր է առաջ ընթանալու գործընթացը: Սակայն ներսից նայելով՝ հասկանում ենք, թե որքան կարևոր խնդիր է հարցի ընկալումը դրսից, ինչն էլ քաղաքական տեսանկյունից պարզորոշ ներկայացրեց Էթյեն Մահչուփյանը[2]:

Իրականում մեր հիմնական խնդիրն այն է, թե մենք այս պահին Թուրքիայի ներսում ինչ ենք ուզում և թե ինչպես է մեր ուզածն ընկալում աշխարհը: Հարգարժան Աքթանը[3] հարցի լուծվել-

1 Ժողովրդա-հանրապետական կուսակցություն (Ծ.Թ.):

2 Էթյեն Մահչուփյան - «Ակօս» շաբաթաթերթի ներկայիս գլխավոր խմբագիրը (Ծ.Թ.):

3 Գյունդուզ Աքթան - եղել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ԱՇԿ-ական պատգամավոր, դիվանագետ, Եվրասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն: Նա Հայոց ցեղասպանության փաստի դեմ պայքար մղողներից մեկն էր: Սրտի տագնապից մահացել է 2008թ. նոյեմբերին (Ծ.Թ.):

չլուծվելը տեսնում է իրավական դաշտում, միջազգային իրավունքի բնագավառում, և այստեղ կարելի է զուգահեռներ անցկացնել նրա այդ տեսակետի և Հայաստանի ակտիվիստ շրջանակների դաղափարի միջև, որովհետև նրանք փորձում են լուծում գտնել այդ նույն բնագավառներում և Թուրքիային ներկայացնել որպես ցեղասպան պետություն՝ իրավական տեսանկյունից բոլոր հնարավոր ճնշումները գործադրելով նրա վրա: Նման ակտիվիստ հատվածի գոյությունը շատ բնական է: Սակայն մյուս կողմից, այդ ակտիվիստներից զատ կա այդ իրավական տերմինից դուրս ապրող կարևոր մեծամասնություն, որի ցավն այլ է...

Այստեղ հարցը, ըստ իս, սա է. Թուրքիան ո՞ր հատվածի ցավն է ավելի կարևորում ու առաջնային համարում և ո՞ր հատվածի հետ է հիմնականում ուզում խոսել: Քանի որ շատ կարևոր է սա, սփյուռքում և Հայաստանում ապրող լուռ մեծամասնությունը, այսինքն՝ ժողովուրդը, այդ հարցում պատմության հետ կապված մեկ խնդիր ունի. ուզում է, որ իր նախնիների նկատմամբ հարգալից վերաբերմունք ցուցաբերվի: Կա յուրացված պատմական մի հասկացություն, որին ձեզանից ոմանք կարող են ցեղասպանություն անվանել, ոմանք՝ ջարդ, ոմանք՝ կոտորած, ոմանք էլ՝ սպանդ, արդյունքում դրանցից յուրաքանչյուրը ներծծվել է հայության հոգեվիճակում: Անվանմանը մեծ կարևորություն չտվող այսպիսի մի հոգեվիճակ էլ կա. մենք, մեր նախնիները Անատոլիայի հողերում 3-4 հազար տարի ապրած ժողովուրդ էինք և մի օր վերացանք այդ հողերից: Այդ հողերի հետ մեր կապը կտրվեց: Իրականում անհրաժեշտ է չանտեսել այդ կապի դադարեցումը՝ այն տեղավորելով տեղահանություն կամ աքսոր տերմինների շրջանակում, որովհետև ելնելով կենսափիլիսոփայությունից՝ շնչավորի հետ շնչավորի գոյության բնագավառը, նրանց միջև եղած կապը հենց կյանքն է, և շնչավորի հետ շնչավորի գոյության բնագավառը, նրանց միջև եղած պատմական կապը խորացնելուն և զարգացնելուն պես ինքնըստինքյան ի հայտ կգա մեր ասած

մշակույթը, քաղաքակրթությունը. ժողովրդի մշակույթը, ժողովրդի քաղաքակրթությունը սերտորեն կապված են այն բնագավառի հետ, որտեղ ապրել է: Եթե դուք ցանկանաք այդ ժողովրդին անգամ ոսկե ձիակառքերով այնտեղից հանել և մի ուրիշ տեղ տանել, դա կնշանակի՝ կտրում եք նրա կապն իր արմատից, նրան վերացնում եք, որովհետև իր արմատից կտրվելով՝ ժողովուրդը դադարում է ժողովուրդ լինելուց, ազգը դադարում է ազգ լինելուց:

Սփյուռքի հեգեվիճակի հիմնական պատճառն այն է, որ նա դեռևս իր ցավն ու արմատը փնտրում է 1915-ի մեջ, որովհետև դրանից հետո մեկ այլ վայրում արմատներ չի ձգել, գոյությունը պահպանել չի կարողանում, ձուլվում է, ասիմիլացվում, ինտեգրվում և աստիճանաբար կորցնում է ազգ լինելու, ժողովուրդ լինելու նկարագիրը: Մտածեք, որ այժմ ձեր դիմաց կանգնած է մոտ 8 միլիոնանոց մի ժողովուրդ, որից միայն 2 միլիոնն է իր համար հայրենիք համարվող հողի վրա կարողանում ապրել, իսկ 5 միլիոնից ավելին ապրում է աշխարհի չորս կողմերում և «հայ մնալու» համար ջանք է գործադրում: Խոսքս «հայ մնալու ջանքի» մասին է: Հավատացե՛ք, դուք չեք կարող հասկանալ, թե սա ինչ է նշանակում, որովհետև այս հողերում թուրք մնալու համար ջանք գործադրելու խնդիր չունեք:

Որովհետև մեր գոյությունն ու արմատը այս հողերում են... Մեր արմատը մեր հողերից կտրված չէ, մեր մշակույթից կտրված չէ: Այդ պատճառով, տեսե՛ք, ես դրա համար «ցեղասպանություն» բառը... Եթե ցանկանում եք, իմ տեսանկյունից տամ դրա շատ կարճ բնորոշումն ու անցնեմ առաջ: Չնայած դրանում ես խնդիր չունեմ: Ահա ես այսպիսի մի հոգեվիճակի մարդ եմ: Չնայած, որ ես ապրում եմ այս հողերում, գիտեմ իմ ժողովրդի, իմ ազգի ընկալման էությունը և սա մեզանում էլ է արմատացել: Մենք, ի տարբերություն նրանց, ունենք մի առավելություն՝ մենք դեռևս ապրում ենք մեր հողերում և թուրքերի հետ միասին: Նրանք թուրքերին 1915-ին թողեցին և հեռացան: Ինչպես էլ որ

թողած լինեին, այսօր դա այդպես է ընկալվում: Նրանց համար թուրքերը անուղղելի են, ներողություն եմ խնդրում այս բառերն այստեղ կրկնելու համար, թուրքերը չեն կարող քաղաքակրթվել, նրանք նույն բանը կրկին կանեն, առիթը կորսան: Նման հոգեվիճակ ունեցող մի մեծամասնություն կա, սակայն չեմ կարծում, որ կարելի է իրավացի համարել հարգելի Աքթանի ասածը, թե այդ մեծամասնությունը ընկել է իրավական նպատակի ետևից: Իրականում Հայաստանի իշխանություններն էլ են հասկանում՝ ինչ է նշանակում իրավական նպատակ հետապնդել: Եթե չեմ սխալվում, դուք էլ կհիշեք, անձամբ պետության նախագահ Քոչարյանը՝ ամենաարմատականը, երեք տարի առաջ ասաց. «Մենք Թուրքիայից տարածքային պահանջ չունենք, ըստ էության, իրավական տեսանկյունից նման իրավունք էլ չունենք», ինչն էլ ուղիղ եթերով հեռարձակվում էր Թուրքիայի հեռուստատեսությամբ: Այսինքն, Թուրքիայից հողային և այլ պահանջ...

Մեկ այլ հոգեվիճակ էլ կա, և ասեմ, թե որն է այն: Հայ ժողովուրդը մտածում է, որ իր նախնիները ենթարկվել են շատ լուրջ անօրինականության, ինչն էլ անիրավացիորեն չի դատապարտվում ոչ միայն Թուրքիայի, այլև աշխարհի կողմից, և այդ պատճառով էլ հիասթափված են թե՛ աշխարհից, թե՛ Թուրքիայից, այսինքն՝ այդ խեղումը փոխանցվում է սերնդեսերունդ: Ձեր առջև այսպիսի մի հոգեվիճակում գտնվող հայություն կա: Ահա հատկապես սա էի ձեզ ցանկանում ասել:

Լավ, մի՞թե անվայել է հայ ժողովրդի այս կեցվածքը: Մի՞թե անվայել կեցվածք է, երբ մարդ անօրինականության զոհ դարձած իր նախնիների իրավունքի ետևից է ընկնում: Այս հարցն եմ ուղղում Թուրքիայում բնակվողներին, թուրք մարդուն: Սակայն մեկ այլ բան էլ հարցնում եմ, երբ գտնվում եմ հայության մեջ, երբ խոսում եմ սփյուռքի հետ. լավ, դուք անվայել կեցվա՞ծք եք համարում, երբ թուրքը ժխտում է ցեղասպանությունը: Ձեր դիմաց կանգնած մարդը իրականում հասկանում է, որ ցեղասպանությունը, ցեղապաշտությունը շատ վատ բաներ են և դրանք ժխտելով՝ բացառում է իր նախնիների ցեղասպան և ցեղապաշտ լինելու հնարավորությունը: Մի՞թե սա արժանավայել կեցվածք չէ: Հայերին էլ դա եմ ասում:

Այս երկու հարցերի միջև հայտնված ինձ պես Թուրքիայում բնակվող հայերը, որ, ըստ իս, դաշույնի սայրին ենք, բայց ամենաճիշտ տեղում, Թուրքիայից նայելով՝ ամենաճիշտ լուծումներ ենք առաջարկում: Ուրեմն, երկու կողմերին էլ առաջարկում եմ միմյանց արժանավայել կեցվածքները հասկանալ, հետևաբար և ընդհանուր հայտարարի գալ: Ըստ իս, մեր առջև ծառացած հարցը սա է:

Այո, հարգարժան Էրդողանը և հարգարժան Բայքալը[1] հանդես եկան նոր նախաձեռնությամբ, սակայն այդ նոր նախաձեռնության համար անհրաժեշտ է միասնական նոր ոճ, նոր միջոցներ: Եթե մենք չկարողանանք դրսևորել նոր ոճ, գործադրել նոր միջոցներ ու մեթոդներ, մեր հին ոճով այս նոր նախաձեռնությունը կարող ենք խեղդել և, կարծում եմ, խեղդում ենք: Այս նոր նախաձեռնությունները, որ արվում են, ինչպես ակնարկում է Էթյեն Մահչուփյանը, եթե շարունակվեն վերջին մի քանի ամիսների ընթացքում արված հրապարակումներով կամ էլ արտերկրից պատմաբաններ հրավիրելով՝ նրանց դեպի Թուրքիայում գոյություն ունեցող տեսակետները կողմնորոշել և անգամ զանգվածային գերեզմաններ փորելով՝ «տեսեք՝ հայերի կողմից սպանված թուրքերի ինչքան գերեզմաններ կան» ասելու ոգով, չեմ կարծում, որ այդ դեպքում դուք ի վիճակի կլինեք ճիշտ ընկալել հայության հոգեվիճակը...

Հատկապես ուզում եմ անդրադառնալ զանգվածային գերեզմանների հարցին, և, ըստ իս, Թուրքիան պետք է անհա-

[1] Դենիզ Բայքալ - Թուրքիայի Ժողովրդա-հանրապետական կուսակցության առաջնորդ (Ծ.Թ.):

պաղ հրաժարվի նմանատիպ մեթոդներից ու ոճից: Եթե Նույնիսկ ԹՊԸ-ի նախագահը կանգնի ու հայտարարի. «Եթե հայերը գիտեն այստեղ մի զանգվածային գերեզմանի տեղ, թող գան ու ցույց տան, ես այն կբացեմ», սա կնշանակի ծաղրել հայ ժողովրդի հոգեվիճակը: Հայությունը դա առնվազն այդպես է ընկալում... Եթե կցանկանաք, հարցին կարող ենք նայել այսպես: Եթե սա մի կռիվ, մի բախում է եղել, ապա եթե մեկ հատ թուրքական զանգվածային գերեզման կա, անկասկած, հայկական զանգվածային գերեզմանները մի քանիսը կլինեն: Այդ պատճառով էլ չի կարելի շարժվել նման կմախքային տարաձայնության ճանապարհով: Սա ոճի խնդիր է, որ փորձում եմ բացատրել: Քանի որ սրանք փաստաթղթեր չեն:

Այստեղ կցանկանայի անդրադառնալ հետևյալին. եթե մենք պատմությանը բացառապես փաստաթղթերի տեսանկյունից նայենք, կարող ենք ասել, թե որևէ բան չի եղել, կարող ենք ասել նաև, որ շատ բան է եղել... Սակայն շատ ավելի կարևոր է ոչ թե պատմությանը նայելու, այլ «ինչպե՛ս նայելու» գաղափարը: Այն անհրաժեշտություն է դարձնում ոչ թե փաստաթուղթը, այլ մեկ այլ բան՝ էթիկա, խիղճ... Եթե կարողանանք պատմությանը նայել բարեխիղճ հայացքով, շատ սովորական կդառնա միմյանց ընկալելը: Անձամբ ես անիմաստ եմ համարում այն հարցը, թե ինչու մենք չենք կարողանում միմյանց ընկալել: Հարգարժան Օմեր Լյութեմ[1], քիչ առաջ աշխարհի 14 պետությունների անուններ հիշատակեցիք՝ միևնույն ժամանակ խոսելով այնտեղ առկա հայկական սփյուռքից և այդ երկրների՝ Թուրքիայի դեմ ունեցած թշնամանքից... Իսկ եթե կան հարգելի պատճառներ, ապա դրանցից ամենահիմնականն այն է, որ եթե մենք մինչ օրս այդ հարցն այս հողերում չենք քննարկում, նշանակում է՝ այն թողնում ենք նրանց հայեցողությանը:

[1] Օմեր Լյութեմ - թուրք դիվանագետ, Եվրասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն (Ծ.Թ.):

Ահա թե ինչու է աշխարհն այսօր ոգևորված. որովհետև, իմ կարծիքով, նրանց համար կարևոր է՝ Թուրքիան արդյո՞ք հիմա այդ հարցն իր տիրույթ է տեղափոխում: Երկու, երեք հայի խորհրդարան հրավիրելով իրականում դա՞ է ուզում անել: Եթե ուղերձը սա է, այն իմ կարծիքով պետք է շարունակվի, և այդ հարցը այս հողերում հնարավոր լինելուն պես ազատորեն պետք է քննարկվի:

Մեր առաջիկա գործընթացը սա է, որքան ես հասկանում եմ՝ նայելով Թուրքիայից. Թուրքիան այս հարցում այլընտրանքային պատմական հետազոտության կարիք ունի: Նման անհրաժեշտություն ունենք նաև մենք և դուք: Ես հարգարժան Հալաչօղլուի վերջին գիրքը կարդացի, հատվածներ կային, որոնք միտքս խճճեցին: Նայում եմ հայկական աղբյուրները՝ փորձելով գտնել պատասխան: Մեր միտքը հիմնականում պետք է խճճել, դա անհրաժեշտ է: Սակայն դրա համար այս երկրի մեջ տեղեկատվությունը պետք է գերությունից ազատել, պետք է օգտագործել խոսքի ազատությունն իր ողջ նշանակությամբ: Այսինքն, եթե Օրհան Փամուքը կամ Հալիլ Բերքթայը[1] մի բան են ասում, և երբ մեկին «հայի ծառա», մյուսին էլ մեկ այլ որակում ենք տալիս, իսկ հետո խորհրդարան հրավիրում հայերի, դրսում շատ պարզորոշ կերպով հասկանում են այդ քայլերի միջև եղած հսկայական տարբերությունը, և դա անկեղծ չի ընկալվում: Այդ ժամանակ այս ժողովը դրսի համար դառնում է միայն շոու: Ինձ ուղղված հարցերից մեկը սա էր. դուք շոու ցուցադրելո՞ւ եք մեկնում, թե՞ անկեղծ քննարկման:

Իմ նախապատվությունն ու ցանկությունն այն է, որ Թուրքիան իրականում կարողանա այս հարցը վերցնել Արևմուտքի, աշխարհի ձեռքից և տեղափոխել իր տիրույթ, որովհետև աշխարհն

[1] Հալիլ Բերքթայ - Սաբանջըի համալսարանի պրոֆեսոր, արվեստաբանության և սոցիոլոգիայի դոկտոր: Նա պնդում է, որ «1915թ. տեղի ունեցած հայկական իրադարձությունները համապատասխանում են «գենոցիդ» սահմանմանը» (Ծ.Թ.):

այս հարցում ամենաանպատասխանատուներից մեկն է, հատկապես Արևմուտքը՝ և՛ անցյալում, և՛ այսօր... Սա ես Արևմուտքում էլ նրանց երեսին եմ ասում: Այս շաբաթ գնալու ենք Եվրախորհրդարան, այնտեղ էլ ենք ասելու, նաև ասելու ենք՝ եթե 90 տարի առաջվա մի խնդրի համար այսօր ապրող մարդիկ պետք է վճարեն, սխալ թող չհասկացվի, այդ գինը փոխհատուցման, այս կամ այն ձևով չեմ դնում, եթե անհրաժեշտ է նվազագույնը խղճի գին վճարել, ապա դա նախ և առաջ պետք է անեն գլխավոր պատասխանատուները՝ եվրոպական երկրները: Քանի որ այն ժամանակ սխալներ գործածներն այսօր նույնն են կրկնում... Նույնն են կրկնում: Վերջին մի օրինակը բավական է: Հարգարժան Մերկելը հայերի սիրուն աչքերի համար չէ, որ հարցը դարձրել է խորհրդարանական քննարկման առարկա: Գերմանիայում հայկական սփյուռքը մեծ չէ, 20 հազար հայ է ապրում այնտեղ, և ամենևին էլ ազդեցություն չունի: Ո՛չ, Մերկելի ցավն այլ է՝ ինչպիսի խաղաթուղթ օգտագործել Թուրքիայի՝ Եվրամիությանը անդամակցելու դեմ...

Մերկելն ասում է. «Այո՛, գիտեմ, որ ցեղասպանության հարցը Թուրքիայում ազգայնականների համար շատ զգայուն թեմա է: Թուրքիան այս հարցում, եթե անհրաժեշտ լինի, անգամ Եվրամիությանը կմերժի, այդ նկատառումով էլ այստեղ դնեմ այդ հարցը»: Իհարկե, ես սփյուռքի հայերին կարող եմ ասել՝ «սթափվե՛ք, Մերկելը սա ձեզ համար չի անում»: Սակայն գալով խորհրդարան՝ ձեզ՝ հարգելի պատգամավորներ, ուզում եմ հարցնել հետևյալը՝ ինչպե՞ս ենք կարողանում Մերկելին այդպիսի ուժ տալ:

Միակ ճանապարհը հարցն այստեղ տեղափոխելու և ամենակարևորը՝ Թուրքիայի և Հայաստանի միջև անմիջապես հարաբերություններ հիմնելու մեջ է:

Հարգելի Էրդողանի և հարգելի Բայքալի նախաձեռնության ամենակարևոր կողմը այդ խիզախ նոր առաջարկն է, սակայն թերի կողմը նախ ոճի հարցն է, և երկրորդ՝ հետևյալը. անհրաժեշտ է պատմությունն ու քաղաքականությունը միմյանցից զատել: Եթե մենք աշխարհին ասելու ենք, թե նախ պատմությունը քննարկենք, դրա հետ կապված հարցերը լուծենք, հետո նոր հարաբերություններ հաստատենք, և եթե նման թեզ զարգացնենք, որը հավանաբար խոսք չէ միայն, ապա տեսանելի ճանապարհը այդ ուղղությամբ է ձգվում... Իմ կարծիքով, դա ճիշտ ճանապարհ չէ: Առանց հարաբերություն հաստատելու որևէ բան չեք կարող քննարկել: Հայաստանի հղած ուղերձն էլ հիմնականում դա է: Նրանք ասում են. «Մենք որևէ նախապայման չունենք: Նույնիսկ ցեղասպանության ճանաչման հարցում... Առանց նախապայմանների հարաբերություններ ենք ուզում»:

Ըստ իս՝ սա խզված հարաբերությունները վերականգնելու ճանապարհին առաջին քայլը պետք է լինի: Իսկ սրա ետևում պետք է լինի Եվրոպայի վճարելիք գինը, եթե կուզեք, մեկ նախադասությամբ ասեմ: Եվրոպան անցյալում ջանքեր է գործադրել այս ժողովուրդներին միմյանց դեմ հանելով ոչնչացնելու համար, իսկ այսօր անհրաժեշտ է, որպեսզի Եվրոպան ջանքեր գործադրի նրանց միջև հարաբերությունները վերականգնելու համար: Այդ պատճառով էլ հարաբերությունների վերականգնման համար պետք է ներդնել տարբեր ռեսուրսներ, ներառյալ՝ գումարներ, ձեռքբերումներ, նախագծեր, մարդկային ռեսուրսներ, տեխնոլոգիաներ: Այստեղ ամենապատասխանատու գործելակերպն է ձեռնամուխ լինել այնպիսի հորդորների, անգամ այնպիսի գործի, որն ավելի կարևոր է, քան ցեղասպանության հարցը խորհրդարանների օրակարգում ներառելը: Եվրոպայի անելիքը դա է: Մեր անելիքը պատմությունը քաղաքականությունից զատելն է: Ես կարծում եմ, որ մենք Հայաստանի հետ նախ քաղաքական տեսանկյունից մեր հարաբերությունները պետք է կարգավորենք և օր առաջ բացենք այս երկու ժողովրդի՝ միմյանց հետ նորմալ հարաբերվելու ճանապարհը:

Շնորհակալություն:

2. Ելույթ

Պարո՛ն, նախ և առաջ, ես ելույթ ունեցա հիմնականում մի մտահոգությամբ՝ ինչպիսի ներդրում կարող եմ ունենալ այս ժողովում: Անկասկած, ես այն մարդը չեմ, ով կարող է սահմանել, ուղղորդել թուրքական արտաքին քաղաքականությունը, նման մտադրություն էլ չունեմ: Սակայն և՛ հայ լինելու, և՛ Թուրքիայում բնակվելու, և՛ Թուրքիայի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու իմ ունեցած առավելությունը, ոմանք սա կարող են դիտել որպես խոչընդոտ, հարցերին և՛ զգացմունքով, և՛ բանականությամբ մոտենալու ունակություն ունեմ և աշխատում եմ այդ երկուսն էլ միատեղ գործադրել, և եթե այդ հարցում առաջարկներ եմ ունենում, փորձում եմ դրանք ներկայացնել: Մենք հարգարժան Էլեքդաղի[1] հետ քանիցս քննարկել ենք այդ թեմաները, զրուցել դրանց շուրջ: Հատկապես Հայաստանի սահմանի բացման հարցում: Որոշ դեպքերում հարգարժան Էլեքդաղն էր ինձ հետ համաձայնում, որոշ հարցերում էլ՝ ես նրա, սակայն այստեղ ուզում եմ ասել հետևյալը. եթե մենք այս պատմությանը կամ իրավական, կամ էլ քննարկելով լուծելու տեսանկյունից ենք մոտենալու, և եթե ամեն բան կապելու ենք հարգարժան Էլեքդաղի ասած «դա եկեք լուծենք»-ին, ապա դա չի լուծվելու, որովհետև ես էլ որպես դրա լուծումը չտեսնող մարդ ասելու եմ. «Ո՛չ, մեկ այլ նախաձեռնությամբ հանդես գանք», և այս տեսանկյունից կարծում եմ, որ դա, ըստ էության, հավերժ շարունակվելու է: Պատմության մեր այս քննարկումն անընդհատ շարունակվելու է, քանի որ այդ հարցում միմյանց փաստաթղթերով համոզելու և այլնի համար շատ երկար ժամանակ է պահանջվելու: Ես ձեզ ինչպե՞ս եմ համոզելու, հարգելի՛ Էլեքդաղ: Այդ փաստաթղթերից բխող մի ընկալում կա...

[1] Շյուքրյու Էլեքդաղ - Թուրքիայի Ժողովրդա-հանրապետական կուսակցության ազդեցիկ պատգամավորներից (Ծ.Թ.):

Այսպես, թե այնպես, միշտ էլ կա նոր ժամանակ՝ անկախ համաձայնություններից և տարաձայնություններից: Շարունակեմ, թե որը եղավ Վիեննայի հանդիպման օգուտը: Հանդիպումը դադարեցվեց, այնպես չէ՞, պարո՛ն, սակայն հարգելի Հալաչօղլուի և նրա ընկերների հրատարակած գիրքը, որ պարունակում էր (իրենց խոսքերով) այդ փաստաթղթերի մի մեծ մասը, Վիեննա էր ուղարկվել... Այժմ Հայաստանի ակադեմիան հրատարակել է դրան պատասխան գիրք: Այն լույս է տեսել հայերեն, ես էլ այն կվերցնեմ և, Աստծո հաջողությամբ, կթարգմանեմ թուրքերեն, կհրատարակեմ Թուրքիայում, այսինքն՝ փաստաթղթերն ու պատմությունը իրականում զուգահեռ են ընթանալու: Ու եթե մենք մեր հարաբերությունները սրանով պայմանավորենք և կապ չհաստատենք, այդ գործընթացը ավելի կերկարի, և որևէ արդյունք չի լինի: Ահա այն ամենը, ինչը փորձում եմ բացատրել:

Եվ հարգարժա՛ն պատգամավոր, Ձեզ մի բան եմ ասելու. այստեղ իրականում անհրաժեշտ է մտածել՝ ձեռքը խղճին դնելով: Հավատացե՛ք, ես ի սրտե կիսում և հասկանում եմ Էրզրումում կամ էլ Աղրըում իրենց մերձավորներին անցյալում կորցրած մարդկանց վիշտը: Այդ պատճառով էլ ասում եմ՝ ինքներդ ձեզ կոչ արեք հասկանալ մեկ այլ բան: Այս երկրում մարդիկ կարողանում են հայերի կողմից սպանված իրենց մերձավորների համար հուշարձաններ կանգնեցնել և միջոցառումներ կազմակերպել: Ես էլ Թուրքիայում բնակվող հայ եմ և ես էլ իմ նախնիներին եմ կորցրել այդ ցավալի օրերին: Տեսե՛ք, ես իրավական տերմիններ չեմ կիրառում: Նման բան չեմ կարողանում անել: Թուրքիայում բնակվող հայ եմ, այս երկրի քաղաքացի, սակայն ես իմ նախնիների ցավը, նրանց հիշատակը չեմ կարողանում ոգեկոչել, որովհետև երբ ես դա անեմ, առաջ կգա «ցեղասպանի» ընկալումը: Ահա այն, ինչ ուզում եմ ձեզ ասել. արդյոք կկարողանա՞ք ընկալել իմ կեցվածքը առանց այդ «ցեղասպանության»: Եվ գուցե հարցին նայեք այստեղ լուծվելո՞ւ տեսանկյունից... Կարո՞ղ եք

նման բան պատկերացնել: Պատկերացնո՞ւմ եք, թե աշխարհն ինչ կարող է ասել, երբ այս երկրում հայերը ապրիլի 24-ին կարողանան ոգեկոչել իրենց նախնիների, իրենց կորցրած մերձավորների հիշատակը: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ կարող է ասել սփյուռքը: Գիտե՞ք, թե ինչ բեկում կարող է տեղի ունենալ այնտեղ: Հավատացե՛ք, այստեղ ուզում էի գալ այդ նպատակով: Ամեն դեպքում, սրանք կարողացա ձեզ ներկայացնել: Սակայն մինչև վերջ քարոզելու եմ իմ ասած փոխադարձ ընկալումն ու ոճը: Նույնը քարոզելու եմ նաև հարգարժան Էլեքդաղին, քարոզելու եմ յուրաքանչյուր քննարկման ժամանակ, որովհետև, հավատացեք, պարոն, ներկա պահին այլ ելք չկա:

Շնորհակալություն...

ԽՈՍՔ՝ ՀՐԱՆՏԻՆ

Թեև ավելի քան երկու տարի է անցել ծագումով հայ, թուրքական հայտնի լրագրող և հասարակական գործիչ, «Ակօս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանությունից, հասարակությունները, ինչպես Թուրքիայում, այնպես էլ Հայաստանում, բավարար չափով չեն գիտակցել այն ուղերձը, որ նա փորձում էր հասցնել երկու երկրների իր հայրենակիցներին: Հրանտը միշտ ծայրաստիճան բաց և համարձակ էր արտահայտվում, բայց, ըստ երևույթին, հենց այդտեղ է տեղեկատվական ճարտարամիտ շահարկումների ենթակա մեր ժամանակներում գաղափարների ընկալման պարադոքսը. որքան ազնիվ ու պարզ է արտահայտվում միտքը, այնքան ավելի կտրուկածամտորեն են դրան վերաբերվում՝ որոնելով ասվածի կամ գրվածի թաքուն մի իմաստ: Հենց անկեղծ, ուղիղ խոսքերում են վտանգ տեսնում կարծրամտության, ռեակցիոն հայացքների պահապանները: Այդ իմաստով, Հրանտ Դինքի գրքի հրապարակումը Թուրքիայում, իսկ հիմա՝ նաև Հայաստանում, շատ կարևոր է, որպեսզի մարդիկ հասկանան լրագրողի ցավն ու իղձերը, նրա ողբերգական մահվան պատճառները:

Իր լրագրողական և հասարակական գործունեությունը Հրանտը նվիրեց սեփական մտքերն ազատորեն արտահայտելու՝ անձի իրավունքի պաշտպանությանը, հաղթահարելու կարծրատիպերը, որ մարդկանց խանգարում են շփվել, հասկանալ ու սիրել միմյանց: Նրա համար անընդունելի էր ինչպես հայ բնակչության դեմ 1915-ին թուրքական կառավարության գործած հանցագործության մասին լռելը, այնպես էլ հայերի ցեղասպանության ժխտման համար քրեական հետապնդումը, ինչը նախատեսվում էր ֆրանսիական խորհրդարանում

հավանության արժանացած օրինագծով: Ցեղասպանության մասին Թուրքիայում խոսելու համարձակություն ունեցող եզակիներից մեկը լինելով՝ Հրանտ Դինքը մարդու իրավունքների խախտում էր գնահատում որևէ մեկին այլ հայացքներ ունենալու համար պատժելը: Նա այն մարդկանցից էր, ում դիտում էին որպես Թուրքիայի նորացման խորհրդանիշ՝ մի գործընթաց, որ հակասական էր և բախվում էր հզոր դիմադրության և բազմաթիվ ներքին ու արտաքին խոչընդոտների:

Մարդիկ, ովքեր Հրանտի պես փորձում են իրենց և իրենց մերձավորների մեջ հաղթահարել վախը, բարդույթները, նրանք, ովքեր բաց են ամեն նորի ու լուսավորի առաջ, առավել անպաշտպան են: Նրա սպանությունը, իսկ ավելի վաղ՝ թուրքական իշխանությունների կողմից քաղաքական և դատական հետապնդումները, հաստատում են այդ տխուր ճշմարտությունը: Երկու տարի առաջ աշխարհի անհանգստեց արձագանքը մեր գործընկերոջ նահատակման առիթով՝ ստիպեց մեկ անգամ ևս խորհել մի ֆենոմենի մասին. մարդկությունն առավել սուր և յուրօրինակ մեղքի զգացումով է ընդունում իր հենց այն զավակների կորուստը, ովքեր, ծառայելով ճշմարտությանն ու արդարությանը, դրանով իսկ դառնում են ավելի խոցելի և համարժեք կարեկցանքի ու աջակցության չեն արժանանում իրենց կյանքի օրոք: Կուզեի հավատալ, որ վաղ թե ուշ այդ մեղքի զգացումը կօգնի դասեր քաղել ողբերգությունից:

Մի փոքր ազատորեն մեկնաբանելով Հրանտ Դինքի՝ գրքի նախաբանում գրված խոսքերը՝ կարելի է ասել, որ նա իր կյանքում և ստեղծագործության մեջ անցել է իր երկու ինքնությունների՝ հայկական ծագման և թուրքական քաղաքացիության հաշտեցման տանջալից ճանապարհ: Դավանանության բոլոր մեղադրանքների, ճնշումների ու իրավունքների սահմանափակումների պայմաններում, որ նրան վիճակվեց վերապրել, նա, եթե չհասավ, ապա առավելագույնս մոտեցավ հաշտության մոդելին: Այդ դժվարին ուղին, որ անցավ Հրանտը, կարող

է օգնել մեզ՝ Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների նորմալացման ուղիների որոնումներում:

Այն, որ գիրքը հիմա ընթերցողի ձեռքերում է, լույս է տեսել մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ երկու հարևան երկրներ բաց երկխոսություն են սկսել բարձր քաղաքական մակարդակով, հրատարակությունը դարձնում է առավել արդիական: Երկխոսության առաջընթացը, մեր տարածաշրջանի մերձեցումն այն ապագային, որ երազում էր Հրանտ Դինքը, ամենաշռայլ տուրքը կլինի նրա հիշատակին:

Բորիս Նավասարդյան
Երևանի մամուլի ակումբի նախագահ

Մի քանի անգամ հանդիպել ենք Հրանտի հետ, երկար զրուցել, քննարկել ենք հայերիս, լինի պոլսեցի, թե երևանցի՝ ամենակարևոր հարցը՝ Հայկական հարցը...

Հանդիպել ենք Պոլսում, Ամերիկայում, բայց ոչ երբեք Երևանում: Չգիտեմ ինչու՝ այդպես էր ստացվում, գուցե մեզ երկուսիս համար էլ հետաքրքիր չէր խոսել մեր Հարցի մասին Հայրենիքի այն փոքրիկ հատվածի վրա, որը կոչվում է Հայաստանի Հանրապետություն:

Ավելի շատ շփվել ենք էլեկտրոնային փոստով, ավելի սակավ՝ հեռախոսով: Դե, պարզ է, ինչպե՞ս կարելի է խոսել մեր Հարցի մասին, երբ համոզված ես, որ ականջ է դնում օտարը:

Հիշողությանս մեջ տպավորվել է մեր առաջին հանդիպումը:

Պոլիսն էր, ամառվա սկիզբը: Մեկնել էի գիտաժողովի, սակայն ավելի քաղաքագետների հավաք էր դա, քան՝ գիտնականների: Լրագրողներ, խոսափողներ, տեսախցիկներ... Հարցեր, պատասխաններ... Կեղծ ժպիտներ, հարձակողական պահվածք, թաքնված ատելություն և բառեր, բառեր, թուրքերեն բառեր...

Հանկարծ որսացի անկեղծ հայացք: Հետաքրքրված հայացք: Կանգնած էր հեռվում, միայնակ, արտաքինից կարծես լրագրող էր, սակայն չէր մոտենում, ուղղակի լուռ նայում էր: Երբ միջանցքում հայտնվեց արտգործնախարար Ջեմը և լրագրողների աղմկալի խումբը տեղափոխվեց նրա ուղղությամբ, մոտեցավ ինձ ու հայերեն ասաց. «Արի գնանք սուրճ խմենք, թող գլուխդ սրանցից հանգստանա»: Հրանտն էր...

Վերհիշում եմ առաջին տպավորություններս: Լուրջ էր, զուսպ ու

քշախոս: Հեռաքրքրվում էր Հայաստանով, երազում էր տեսնել Երևանը: Պարզվեց, որ երբեք չի եղել Թուրքիայի սահմաններից դուրս, քանի որ ժամանակին որպես ֆախակողմյան գործիչ ֆերբակալվել է, տարիներ անցկացրել բանտում, ինչից հետո նրան արգելվել է լքել Թուրքիան: Միասին գնացինք «Ակօս»-ի խմբագրատուն, տարավ իր առանձնասենյակ: Հեռուստացույցը միացած էր, ցույց էին տալիս հայկական հեռուստատեսության ծրագրերից մեկը: Հպարտացավ. ամբողջ օրը միացած է, նայում է միայն Հայաստանի հեռուստատեսություն: Առանձնասենյակում շատ էին հայերեն գրքերը, մի պահ տպավորություն էր ստեղծվում, որ ոչ թե Թուրքիայում ենք, այլ՝ Հայաստանում:

Ցեղասպանության մասին արտահայտվեց կարճ ու հստակ. կճանաչե՞ն, ուշ թե շուտ, կճանաչե՞ն: Ասաց, որ շատ ընկերներ ունի ֆախակողմյան թուրք մտավորականների շրջապատում, որոնք գիտեն ճշմարտությունը, բայց վախենում են հրապարակայնորեն արտահայտվել: Երազում էր, որ Թուրքիան կբարեփոխվի, կդառնա ազատ ու ժողովրդավար և մի օր ոչ միայն կճանաչի ցեղասպանությունը, այլ նաև ներողություն կխնդրի:

Անցան տարիներ: Թուրքիան չճանաչեց ցեղասպանությունը, իսկ թուրք մարդասպանը վերջ տվեց Հրանտի կյանքին:

Հրանտի երազը դեռ չի իրականացել: Արդյո՞ք այն երբևիցե կիրականանա...

Ռուբեն Սաֆրաստյան

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն

Հրանտ Դինքի հետ ծանոթացել եմ 1990-ականների կեսերին, երբ առաջին անգամ մեկնել էի Ստամբուլ՝ Հարավային Կովկասի լրագրողների համար դասընթաց անցկացնելու նպատակով: Չգիտեմ՝ որտեղից էր նա իմացել իմ այցի մասին և հրավիրել ինձ հանդիպման: Միասին փլավ էինք ուտում և զրուցում, երբ նա նշեց, որ իրեն անձնագիր չեն տալիս, ինչի հետևանքով էլ նա չի կարողանում մեկնել արտասահման:

- Ինչպե՞ս, երբևէ չե՞ք եղել արտասահմանում, - զարմացա ես:

- Ո՛չ, - պատասխանեց Հրանտը, - ինձ թույլ չեն տալիս:

- Այսինքն՝ Հայաստանում չե՞ք եղել, - շարունակեցի ես:

Նա վայրկենապես փոխվեց. դեմքն այլայլվեց, աչքերը սկսեցին փայլել: Որպեսզի առաջ այդքան քաղաքավարի զրուցակիցս հանկարծ ցասումով գոչեց.

- Այդ դո՛ւ չես եղել Հայաստանում: Դա իմ երկիրն է: Ես եղել եմ Մալաթիայում, Էրզրումում, Վանում, Մուշում, Բիթլիսում, Սասունում, Զեյթունում: Այն էլ՝ բազմիցս:

Ես ներողություն խնդրեցի: Հետագայում նրան ի վերջո անձնագիր տվեցին, և մենք մի քանի անգամ հանդիպեցինք տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում ու ավելի լավ ճանաչեցինք իրար: Բայց մի օր ինձ զանգահարեցին Ստամբուլից՝ գուժելով նրա մահը, և, չգիտես ինչու, հիշեցի նրա խոսքերը՝ «Դա իմ երկիրն է»:

Արևմտյան Հայաստանը նրա համար լրիվ այլ էր, քան, ասենք, ինձ համար: Այդ Հայաստանը նրա համար սովորական պատմություն չէր կամ վայր, որտեղ ժամանակին հայեր են ապրել, և ոչ էլ կորցրած հայրենիքի վիշտ: Ավելի ճիշտ՝ այդ Հայաստանը նրա համար և՛ մեկն էր, և՛

մյուսը, բայց և միևնույն ժամանակ կենսունակ, հայրենի հող էր: Նրա Հայաստանը ոչ մեռած էր, ոչ էլ ողբալի. այն շնչում էր: Եվ աշխարհագրությունն այստեղ բոլորովին կապ չուներ: Հեպրազայում, երբ նա ինձ ծանոթացնում էր Ստամբուլի հետ (ավելի ճիշտ՝ Պոլիսի, ինչպես նա էր ասում), ես հասկացա, որ սա էլ էր նրա երկիրը: Պոլիսը նա համարում էր հայոց պատմության և մշակույթի անբաժանելի մասը: Այս քաղաքը հարազատ էր նրա համար՝ ոչ միայն որպես անհատի, այլև որպես հայ մարդու:

Գուցե նա աշխարհի վերջին հայերից մեկն էր, ով այդպիսի Հայաստան ուներ:

Ալեքսանդր Իսկանդարյան

Կովկասի ինստիտուտի տնօրեն

Հրանտ Դինքը հայ ազատատենչ ոգու խորվքն է, մեր արդար Դատի խիզախ ազդարարը, մեր Հայրենազրկումի ցավից բեկված պոռթկուն ճիչը:

Նա աշխարհ եկավ, գտավ աշխարհի ու մարդու հետ հարաբերվելու սեփական բանաձևը, անսեթևեթ պատմեց հայոց Մեծ վշտի մասին ճշմարտությունը՝ ջանալով բարության, առաքինության, համերաշխ գոյակցության իր բաժին հունդը պահ տալ այն հողին, որը եղծված էր հայ և թուրք ժողովուրդների անվստահության որոմով:

Նա աշխարհ եկավ՝ ազգերին կոչելու և մղելու հաշտության ու խաղաղության, պատմության աչքերին շիտակ նայելու հաստատակամության: Երբեք չկեղծեց, չխոտորեց ուղին, չշեղվեց որդեգրած սկզբունքներից և չընկրկեց արդարախոս դատապարտյալի դաժան ճակատագրի դեմ-հանդիման: Վեհ ու համամարդկային գաղափարների հաղթարշավի համար պայքարի իր կերպն ընտրեց այնպես, ինչպես Քրիստոսն ընտրեց խաչելության իր ճանապարհը: Խոսքի, մտքի, անհատի ազատության, ժողովրդի իրավահավասարության ու անխտրականության ռահվիրայի ի վերուստ տրված կոչման յուր ծիրում նա մատրակոչ հնչեցրեց ոչ միայն ի սատարումն տառապյալ ազգի ու բզկտյալ Հայրենիքի, այլև հանուն մարդկության վառ ապագայի, հանուն մնայուն արժեքների:

Նա աշխարհ եկավ անաղմուկ, ապրեց կարճ, բայց շոնդալից տրնանքով լեցուն բազմաբովանդակ կյանք, դարձավ ժամանակի հարաղողանջ զանգակատունը և հեռացավ որպես Սուրբ նահատակ՝ միանալով նախնյաց միլիոնավոր հոգիների ճախրանքին: Հեռացավ՝

թողնելով մշտաներկա իր բացակայությունը, ապրող ու ապրեցնող իր գաղափարները, բեղուն գրչի արգասիքն ու լուսավոր մի հեւրագիծ:

Մարդու իր տեսակն ուրիշ է. միշտ մի քայլ առաջ էր ապրած ժամանակից, միշտ մի գլուխ վեր՝ շրջապատող իրականությունից: Նաև՝ ինքն իրենից: Թերևս Հրանտի տեսակն ու նկարագիրն ունեցող մարդկանց մասին է ասել մեծն Պարույր Սևակը. «Ուշ-ուշ են գալիս, բայց ոչ ուշացած»:

Դինքը եկավ ճիշտ ժամանակին՝ եկավ ու իրենով, իր կենաց օրինակով ափեափ լցրեց, հարստացրեց մեր ժամանակը, մեր կենսաչեը, մեր միտքն ու հոգին, վերարժեւորեց այն ուղենիշները, որոնց հավատարմությամբ մարդ ի զորու է ներդաշնակ ապրել իր առաքելության ու Աստվածատուր շնորհների հետ, ի զորու է պայքարի անքասիր հեւքով միշտ արթուն պահել խեղճեղ այս աշխարհի պաշարված խիղճը:

Բաֆֆի Հովհաննիսյան

ՀՀ առաջին արտգործնախարար

Միայն մեծ, պատմության մեջ հետք թողած մարդիկ են, որոնց երկնային կյանքը բեղուն է այնքան, որքան երկրայինը: Նրանք շարունակում են «աշխատել», երբեմն շատ ավելի մեծ ծավալով ու առավել արդյունավետ, նաև հանդերձյալ կյանքում: Այդպիսի բացառիկ մարդկանցից է Հրանտ Դինքը: Նրա դաժան սպանությունը Ավագ Ուրբաթ օրը Տաճարի վարագույրը պատռվելու պես մի բան եղավ՝ բացվեց ստի ու կեղծիքի, տգաբուների ու կեղծ պատմաշինության, ժխտողականության և ուրացումի մի ամբողջ աշխարհ, որքան կեղծարարության, այդքան անհեթեթ: Հենց այդ կեղծիքն ու անհեթեթությունն էր մատնացույց անում Հրանտն իր լրագրային և այլ ելույթներում: Նրա մահից հետո միայն մարդիկ տեսան, շոշափեցին ողջ Ճշմարտությունը և ինքնաբուխ ու ինքնամեղադրական գոռացին՝ «Բոլորս հայ ենք, բոլորս՝ Հրանտ Դինք»: Նույնը գոռացին նաև հայերը: Եվ այդ «արթնացումը» շարունակվում է մինչև օրս ու կշարունակվի ընդերկար: Քանզի Ճշմարտության զինվորը, Հրանտ Դինք կոչեցյալ, կշարունակի գործել, աշխատել, ապրե՛լ:

Հակոբ Ավետիքյան

«Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր

ՆԱՄԱԿ՝ ՀՐԱՆՏԻՆ

Հրա՛նտ, դու շարունակում ես ոգեշնչել մեզ, որպեսզի մենք նույնքան ջանասիրաբար աշխատենք, որքան դու էիր աշխատում: Քո կինը՝ Ռաքելը, քո եղբայրները՝ Երվանդն ու Խոսրովը, քո որդին՝ Արատը, դուստրերդ՝ Դելալն ու Սերան, նույնքան նվիրված են մեր ժողովուրդների միջև փոխըմբռնման ու նորմալ հարաբերությունների հասնելու քո գործին: Քո գործը շարունակողների բանակը միայն ընտանիքդ չէ, այն հսկայական է՝ ընկերներդ Թուրքիայում, ընկերներդ Հայաստանում, ընկերներդ ողջ աշխարհում:

Մենք ֆգտում ենք նրան, ինչին դու էիր ֆգտում, որ այն ապագան, որտեղ հայերն ու թուրքերն ապրելու են միասին, ավելի պայծառ լինի, քան անցյալը, որը շարունակում է հետապնդել մեզ:

Դու ասում էիր. «Մի կողմից նրանք հայերի և Հայաստանի հետ երկխոսության կոչ են անում, մյուս կողմից՝ դատապարտում կամ փորձում չեզոքացնել սեփական երկրի քաղաքացուն, որը աշխատում է այդ երկխոսության հաջողության համար»:

Թեև դու միշտ մտավախություն ունեիր, որ նման «չեզոքացումը» հնարավոր է, նույնիսկ դու չէիր կարող պատկերացնել, որ նրանց ամենածայրահեղական ու բիրտ ջանքերն այսքան անարդյունավետ են լինելու: Նրանք հաստատ չէին պատկերացնում: Դու զգայունություն, նվիրում և ոգի արթնացրեցիր քո անձնական և գաղափարական ընկերների մոտ:

Մենք ֆգտում ենք նրան, ինչին դու էիր ֆգտում: Մենք էլ ենք երա-

զում հարևանների և պատմության հետ խաղաղ ապրելու մասին: Մենք էլ ենք հավատում, որ մարդու հիմքում բարությունն է: Մենք էլ ենք վստահ, որ վախն ու ատելությունը ծնվում են անտեղյակությունից:

Քո աշխատանքը, քեզանով ոգեշնչված գործը, քո գաղափարները, քո կողմից կրթված և քեզանով ոգևորված գործընկերներին աշխարհին ներկայացնելով՝ մենք կարող ենք նպաստել, որ քո գաղափարները և հավատը մարդկության հանդեպ բազմապատկվեն: Մենք սա անում ենք ավելի շատ մեզ, ոչ թե քեզ համար: Մենք սա անում ենք, որովհետև ուզում ենք ապրել խաղաղության և եղբայրության տարածաշրջանում:

Վարդան Օսկանյան
ՀՀ նախկին արտգործնախարար,
«Սիվիլիթաս» հիմնադրամի խորհրդի նախագահ

İKİ YAKIN HALK İKİ UZAK KOMŞU

HRANT DİNK

ՀՐԱՆՏ ԴԻՆՔ

ԵՐԿՈՒ ՄՈՏ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԵՐԿՈՒ ՀԵՌՈՒ ՀԱՐԵՎԱՆ

Թուրքերենից թարգմանեց
ՄԿՐՏԻՉ ՍՈՄՈՒՆՋՅԱՆԸ

Խմբագիր՝ Մխիթար ՆԱԶԱՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Արուս ՄՈՒՐԱԴՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ Հրանտ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Մակետավորումը՝ Գայանե ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Համակարգչային շարվածքը՝ Սամվել ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

Ստորագրված է տպագրության 21.10.2009:
Չափսը՝ 60 x 84 1/32: Թուղթը՝ օֆսեթ- 1: Տպագրությունը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 11,125 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 1000 օրինակ:

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ

հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:
Էլ. փոստ lusakn@rambler.ru

Առանձնակի հուզմունքով ձեռքս առա Մեծ Հայի՝ Հրանտ Դինքի «Երկու մոտ ժողովուրդ, երկու հեռու հարևան» գիրքը: Հուզմունքս, սակայն, աստիճանաբար տեղի տվեց հիացումի, և աչքերիս առջև հառնեց Դինք խմբագրապետի, հրապարակագրի ու հրապարակախոսի, խորհող, մտածող, իր ժողովրդի և աշխարհի բախտով մտահոգ, միջազգային հեղինակություն վայելող մեծ քաղաքացու կերպարը...

Հրանուշ Հակոբյան

... Մալաթիա քաղաքում ծնված մեր հայրենակիցն իր ողջ գիտակից կյանքը նվիրաբերեց Թուրքիայում մարդու և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության, արդարության և ճշմարտության, Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման, հայ և թուրք ժողովուրդների հաշտեցման, Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների հաստատման անհրաժեշտության գաղափարներին...

Արման Կիրակոսյան

... Երկխոսության առաջընթացը, մեր տարածաշրջանի մերձեցումն այն ապագային, որ երազում էր Հրանտ Դինքը, ամենաշռայլ տուրքը կլինի նրա հիշատակին...

Բորիս Նավասարդյան

... Երազում էր, որ Թուրքիան կբարեփոխվի, կդառնա ազատ ու ժողովրդավար և մի օր ոչ միայն կճանաչի ցեղասպանությունը, այլ նաև ներողություն կխնդրի...

Ռուբեն Սաֆրաստյան

... Արևմտյան Հայաստանը նրա համար լրիվ այլ էր, քան, ասենք, ինձ համար: Այդ Հայաստանը նրա համար սովորական պատմություն չէր կամ վայր, որտեղ ժամանակին հայեր են ապրել, և ոչ էլ կորցրած հայրենիքի վիշտ...

Ալեքսանդր Իսկանդարյան

... Նա աշխարհ եկավ՝ ազգերին կոչելու և մղելու հաշտության ու խաղաղության, պատմության աչքերին շիտակ նայելու հաստատակամության: Երբեք չկեղծեց, չխոտորեց ուղին, չշեղվեց որդեգրած սկզբունքներից և չընկրկեց արդարախոս դատապարտյալի դաժան ճակատագրի դեմ-հանդիման...

Ռաֆֆի Հովհաննիսյան

... Նրա դաժան սպանությունը Ավագ Ուրբաթ օրը Տաճարի վարագույրը պատռվելու պես մի բան եղավ՝ բացվեց ստի ու կեղծիքի, տաբուների ու կեղծ պատմաշինության, ժխտողականության և ուրացումի մի ամբողջ աշխարհ, որքան կեղծարարության, այդքան անհեթեթ...

Հակոբ Ավետիքյան

... Հրա՛նտ, քո աշխատանքը, քեզանով ոգեշնչված գործը, քո գաղափարները, քո կողմից կրթված և քեզանով ոգևորված գործընկերներին աշխարհին ներկայացնելով՝ մենք կարող ենք նպաստել, որ քո գաղափարները և հավատը մարդկության հանդեպ բազմապատկվեն...

Վարդան Օսկանյան

ISBN 978-99941-2-300-1
9 789994 123001